ՆԻՆՈ ԷՐԵՄԱՇՎԻԼԻ
ԼԵՎԱՆ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ
ԴԱՎԻԹ ԼՈՍԱԲԵՐԻԶԵ
ԹԱՄԱՐ ՌՈՒԽԱԶԵ

ՈՒՍՈՒՑՉԻ
ԳԻՐՔ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռնարկ
IX դասարանի համար

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

PH international
ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

Համագործակցություն տեղական իշխանության և լրատվամիջոցների հետ Ուսուցչի գիրք

Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռնարկ IX դասարանի համար, երրորդ հրատարակության հայերեն թարգմանություն

Ձեռնարկի տվյալ հրատարակությունը տպագրվել է **ՍՊԸ «Փաունտեյն Ջորջիայում»**

Հեղինակներ.
Նինո Էրեմաշվիլի
Լևան Ախվլեդիանի
Դավիթ Լոսաբերիձե
Թամար Ռուխաձե

Խորհրդատու.
Նինո Գվարամաձե

Թարգմանությունը՝ **Զոյա Մխիթարյանի**
Խմբագիր՝ **Գիսանե Հովսեփյան**

Դիզայներ՝ **Մարթա Թաբուկաշվիլի**

© Project Harmony, Inc., 2019

ISBN: 978-9941-8-0573-8

Ձեռնարկը պատրաստվել է ամերիկյան ժողովրդի աջակցության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ջանքերի շնորհիվ: Ձեռնարկում տրված տեղեկությունների և նրանում արտահայտված կարծիքների համար միանձնյա պատասխանատու են հեղինակները, և դրանք չեն հանդիսանում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԱՌԱՋԱԲԱՆ

2010-2014 թվականներին PH International կազմակերպության կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության և գիտության նախարարության աջակցությամբ Վրաստանում իրականացվել է «Քաղաքացիական կրթության և մանկավարժների վերապատրաստման ծրագիր»:

Ծրագիրը նպատակ ուներ բարելավել քաղաքացիական կրթության դպրոցական ծրագրի որակը և խթանել ժողովրդավարական հասարակության կառուցման գործընթացի մեջ երիտասարդների մասնակցությունը:

Այդ նպատակին հասնելու համար ծրագրի շրջանակներում ստեղծվեց քաղաքացիական կրթության ուսուցման չորս օժանդակ ձեռնարկ, անցկացվեցին մանկավարժների թրեյնինգներ, ձևավորվեցին դպրոցական քաղաքացիական ակումբներ, փոքր դրամաշնորհներ հատկացվեցին աշակերտների, ուսուցիչների և ծնողների քաղաքացիական նախաձեռնությունների համար, հիմնադրվեց քաղաքացիական կրթության մանկավարժների համաժողով, կազմակերպվեցին քաղաքացիական կրթության ամառային ճամբարներ, ստեղծվեցին քաղաքացիական կրթության և քաղաքացիական նախաձեռնությունների երկու վեբ-պորտալներ՝ www.civics.ge և www.initiatives.ge, անցկացվեցին աշակերտների թրեյնինգներ սոցիալական մեդիայից:

Տվյալ ձեռնարկը մեկն է այն օժանդակ ձեռնարկների շարքից, որ ստեղծվել է ծրագրի շրջանակներում: Ձեռնարկի երկրորդ հրատարակությունը մշակվել է 2015 թվականին, քաղաքացիական կրթության նոր՝ «Ապագա սերունդ» ծրագրի շրջանակներում, որը նույնպես իրականացվում է PH International կազմակերպության կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ և Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Այժմ առաջարկում ենք նույն ծրագրի շրջանակներում ստեղծված դասագրքի երրորդ հրատարակությունը, որը կազմված է վերջին օրենսդրական փոփոխությունների նախատեսմամբ: Ձեռնարկը նախատեսված է ուսուցիչների համար և ներառում է շատ հետաքրքիր ու օգտակար տեղեկություններ: Նրա օգնությամբ ուսուցիչները կկարողանան օժանդակել աշակերտներին՝ ձեռք բերած գիտելիքներն իրենց ամենօրյա կյանքում և գործունեության մեջ կիրառելու, իրենց համայնքի և հասարակության համար կարևոր խնդիրների լուծման նպատակով համախոհներ գտնելու և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցելու հարցում: Ձեռնարկը աշակերտներին տեղեկություններ կմատուցի պետության և հասարակության զարգացման գործում լրատվամիջոցների դերի մասին: Գործնականում իրականացնելով լավ քաղաքացիության սկզբունքները, աշակերտները կմասնակցեն Վրաստանի՝ որպես հզոր ժողովրդավարական պետության կառուցմանը և զարգացմանը:

Ապագա հաջողությունների ցանկությամբ՝
Մարինա Ուշվերիձե

Քաղաքացիական կրթության «Ապագա սերունդ» ծրագրի տնօրեն
PH International - Վրաստան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ո Ւ Ն

Ներածություն 5
Ինչպե՞ս օգտվել գրքից 7
Օգտագործված մեթոդների նկարագրությունը 8
Օգտակար խորհուրդներ 15

Թեմա 1 Տեղական ինքնակառավարում - Պատմական ակնարկ և ժողովրդավարական երկրների փորձը 19

Թեմա 2 Ինքնակառավարման էությունը և նշանակությունը, ինքնակառավարման համակարգը և օրենսդրական դաշտը Վրաստանում 23

Թեմա 3 Տեղական ինքնակառավարման բնութագրիչները և հիմնական նպատակները 27

Թեմա 4 Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինները 33

Թեմա 5 Լրատվամիջոցների դերը ժողովրդավարական հասարակությունում 37

Թեմա 6 Ինչպե՞ս իրականացնենք ինքնակառավարումը 43

Հանդիպում ինքնակառավարման ներկայացուցիչների հետ 47
Նախագծի արդյունքների ամփոփում և վերլուծում 48

Օգտակար ռեսուրսներ 1. Իլյա Ճավճավաձե, «Կյանքը և օրենքը» 49
Օգտակար ռեսուրսներ 2. Վրաստանի օրգանական օրենք. «Տեղական ինքնակառավարման օրենսգիրք» 54
1. Տեղական ինքնակառավարման օրենսգրքի կառուցվածքի համառոտ նկարագիր 55
2. Տեղական ինքնակառավարման օրենսգրքի բաժինների, գլուխների և հոդվածների ցանկ 57
3. Տեղական ինքնակառավարման օրենսգրքի ընդլայնված քաղվածք 65

Տերմինների այբբենական բառարան 90
Օգտագործված գրականություն 98

Ներածություն

Տվյալ ձեռնարկի նպատակն այն է, որ աշակերտները գիտակցեն տեղական ինքնակառավարման նշանակությունը և գործառույթները, հասկանան, թե երբ և ինչու պետք է դիմեն տեղական ինքնակառավարմանը, մշակեն տեղական ինքնակառավարման հետ համագործակցելու հմտություններ և կարողություններ, նույնականացնեն այն հիմնախնդիրները, որոնք ի զորու է իրականացնել տեղական ինքնակառավարումը, կազմեն նախագծեր և տվյալ հիմնախնդիրները լուծեն ինքնակառավարման հետ միասին:

Վրաստանում շատ կարևոր քայլեր են ձեռնարկվել տեղական ժողովրդավարության հաստատման նպատակով, սակայն մինչև լիարժեք ինքնակառավարման հաստատումը դեռևս երկար ճանապարհ ունենք անցնելու: Այս կարևոր գործի մեջ մեծ ներդրում կարող են ունենալ ակտիվ քաղաքացիները և ակտիվ քաղաքացիական հասարակությունը:

Քաղաքացիական ակտիվության սկզբունքները հստակեցնելու նպատակով, սույն ձեռնարկի միջոցով աշակերտները կծանոթանան նաև լրատվամիջոցների գործունեության սկզբունքներին, կտեղեկանան, թե ինչպես կկարողանան համագործակցել լրագրողների հետ: Ձեռնարկի այդ մասը կօգնի աշակերտներին հասկանալ, թե ինչ են լրատվամիջոցները և ինչու են դրանք անհրաժեշտ մեզ, պետության համար ինչու է կարևոր լրատվամիջոցների ազատությունը և, ընդհանրապես, ինչ դեր ունի այն ժողովրդավարական հասարակությունում:

Երիտասարդներն ավելի ակտիվ պետք է համագործակցեն տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (լրատվամիջոցներ, հասարակական կազմակերպություններ) հետ և իրենց քաղաքի, ավանի կամ գյուղի համար ստանան բոլոր այն բարիքները, որոնք օրենքով սահմանված են իրենց համար:

Ինչպե՞ս օգտվել գրքից

Ձեռնարկը բաղկացած է վեց թեմաներից, ինչն ընդհանուր առմամբ ներառում է 12 դաս, ինքնակառավարման ներկայացուցիչների հետ մեկ հանդիպում և մեկ ամփոփիչ դաս: Ձեռնարկում տրված է նաև յուրաքանչյուր դասի ենթադրյալ սցենարը, օգտագործված մեթոդների նկարագիրը: Դասերը բաղկացած են տեսական մասից, դասարանական աշխատանքից և տնային առաջադրանքներից:

Յուրաքանչյուր դասի վերջում տրված տնային առաջադրանքներն աշակերտներին կօգնեն մեկ մեծ նախագծի իրականացման գործում: Այս նախագիծը, տեղական իշխանությունների և լրատվամիջոցների հետ համագործակցությամբ, միտված է ձեր իսկ քաղաքի, ավանի կամ գյուղի խնդիրների լուծմանն ու կարգավորմանը:

Դասերի մեջ մանրամասնորեն բացատրված է, թե ինչ է տեղական ինքնակառավարումը, ինչ նշանակություն ունի այն երկրի և առանձին քաղաքացու համար, ինչպես պետք է համագործակցեն քաղաքացիները նրա հետ:

Դասերին կցված են հավելվածներ, որոնք կօգնեն աշակերտներին պատրաստել առաջադրանքները և ստեղծել ու իրականացնել նախագիծը:

Գրքում տրված է նաև բառարան՝ տերմինների բացատրությամբ:

Հաջողությունն՝ ենք ցանկանում:

Օգտագործված մեթոդների նկարագրությունը

Մտավոր գրոհ

Մտավոր գրոհը փոքր ժամանակահատվածում տալիս է բազմաթիվ գաղափարներ գեներացնելու հնարավորություն: Այն անց է կացվում ինքնուրույն կամ հանդիսանում է այլ վարժության մաս: Այս մեթոդի կիրառումը յուրաքանչյուր աշակերտից պահանջում է անհատական ակտիվություն և պայմանավորում է ընդհանուր հիմնախնդրի համատեղ լուծում:

Ուսուցիչը նախօրոք ընտրում է թեմա և հարցի ձևով ձևակերպում է այն: Հարցը պետք է լինի հստակ և աշակերտների համար հասկանալի ձևով մատուցված:

Սրանից հետո աշակերտներն արտահայտում են իրենց կարծիքները և առաջարկում հիմնախնդրի կարգավորման ուղիներ: Գաղափարների գեներացման ժամանակ ցանկալի է պահպանել հետևյալ սկզբունքները.

1. Աշակերտների կողմից կարծիքների արտահայտման ժամանակ թույլ չի տրվում վիճաբանություն, քննադատություն կամ գնահատում: Պետք է աշխատենք այն սկզբունքով, որ բոլոր տեսակետներն արժեքավոր են:
2. Կարծիքի արտահայտումը կամավոր է և ազատ: Աշակերտները կարծիքներ պետք է արտահայտեն, երբ իրենք կկամենան և ոչ թե այն ժամանակ, երբ դա ուսուցիչն է պահանջում: Գաղափարը կարող է լինել ինչպես յուրօրինակ, այնպես էլ ուրիշի գաղափարի զարգացման արդյունք:
3. Այս փուլում նշանակալի է գաղափարների քանակը, և ոչ թե՝ որակը: Որակի մասին դատողությունը պետք է տեղի ունենա գաղափարների արտահայտումն ավարտելուց հետո (գնահատման փուլ):
4. Բոլոր գաղափարները պետք է գրվեն գրատախտակի կամ մեծ թղթի վրա (այդ թվում նաև՝ ամենից անընդունելին):
5. Գնահատումից առաջ աշակերտներին պետք է տրվի մտածելու հնարավորություն:
6. Գաղափարների արտահայտման շրջանի տևողությունը կախված է դասի ընթացքից, թեպետ, ուսուցիչը կարող է նախօրոք սահմանել այն (երաշխավորվում է 2-ից մինչև 5 րոպե, չնայած բարդ հարցի դեպքում հնարավոր է նաև մինչև 20 րոպե):

Ուսուցիչն ակտիվ աշխատանքի ընթացքում պետք է սահմանի, թե որքան ժամանակ հետո կսկսվի գնահատման փուլը՝ անմիջապես, թե՞ հաջորդ օրը: Այս ընթացքում աշակերտների կողմից արտահայտված կարծիքները պետք է գրվեն գրատախտակին կամ պատին փակցված մեծ թղթի վրա:

Գաղափարների գնահատման փուլը սկսելիս՝ պետք է տեղի ունենա կարծիքների համառոտ վերլուծում: Աշակերտներն ուսուցչի հետ պետք է որոշեն և խմբավորեն միանման գաղափարները և ընդհանրացնեն դրանք:

Նման գաղափարների միավորումից հետո հնարավոր է անցկացնել փոքր քննարկում՝ դրանց լավ և վատ կողմերի մասին, ինչից հետո

պետք է տեղի ունենա դրանց տեսակավորում՝ ըստ նշանակության: Յուրաքանչյուր աշակերտ կարող է իր հայեցողությամբ մի քանի ամենից արժեքավոր թեմաներն ընտրել և դասավորել՝ ըստ նշանակության (սեփական վերաբերմունքն արտահայտել միավորներով):

Միավորների ամփոփումից հետո պետք է առանձնացվի 1, 3 կամ 5 գաղափար, որին դասարանը առավելություն կշնորհի:

Ուսուցիչը, դասի յուրօրինակության նախատեսմամբ, կարող է փոփոխել գնահատման փուլերի ընթացքը: Օրինակ՝ հիմնական շեշտադրումը տեղափոխել հենց քննարկման վրա, որը կատարվում է ոչ թե գնահատումով (միավորներով), այլ աշակերտների համաձայնությամբ, սակայն այս համաձայնությունը չպետք է լինի արհեստական և պարտադրված:

Դասարանական քննարկում

Ինտերակտիվ մեթոդիկայի արդյունավետ միջոցներից մեկը **դասարանական քննարկումն** է: Այն նպաստում է այնպիսի կարևոր հմտությունների և կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են ակտիվ ունկնդրումը, սեփական կարծիքի արտահայտումը և փաստարկումը, դատողությունը, ուրիշին լսելը և նրա կարծիքի հետ հաշվի նստելը, տարբերվող կարծիքի ընդունման կարողությունը:

Քննարկման հաջող անցկացման համար անհրաժեշտ է, որ դասարանում լինի վստահության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ, որտեղ նմուշային օրինակ առաջին հերթին ուսուցիչը կլինի:

Քննարկումը ճիշտ վարելու համար անհրաժեշտ է կազմակերպել այն և կարգավորել, քննարկման մասնակիցները պետք է պահպանեն այն կանոնները, որ ուսուցչի հետ իրենք կձևակերպեն: Կանոնների ցանկը կարող է այսպիսին լինել.

1. Երբ մեկը խոսում է, մյուսները լսում են:
2. Ձե՛ռք բարձրացրու, երբ կամենում ես որևէ բան ասել:
3. Չընդհատե՛ս ուրիշի խոսքը:
4. Չպետք է ծիծաղես, երբ ուրիշն է խոսում, բացի այն դեպքից, երբ նա ինքն է կատակում:
5. Բանավեճին մասնակցում են բոլորը:
6. Այլ կանոններ (որոնք լրացուցիչ կառաջարկի դասարանը):

Քննարկումը սկսվում է մոտիվացիայով, որը ենթադրում է.

Հիմնախնդրի առաջադրում կամ կոնկրետ դեպքի նկարագիր, բանաստեղծության կամ իրավիճակային խնդրի ընթերցում, պատկերազարդումների ցուցադրում, մեղեդիների ունկնդրում:

Ուսուցիչն աշակերտներին հարցեր է առաջադրում՝ ինչպե՞ս, ինչո՞ւ, ի՞նչ տեղի կունենար, եթե... Ի՞նչը ազդեցություն գործեց: Կա՞ արդյոք այլընտրանք:

Քննարկման ընթացքը.

- Որպեսզի դասի ժամանակ խուսափենք աղմուկից և քաոսից, յուրաքանչյուր աշակերտ պետք է հնարավորություն ունենա հանդես գալու հաղորդավարի, ուսուցչի կամ դասարանի կողմից ընտրված առաջնորդի թույլտվությամբ:
- Ելույթ ունեցողները պետք է պահպանեն աշխատակարգը:
- Թույլ չի տրվում դիմակայություն մասնակիցների միջև:
- Քննարկման մասնակիցները պետք է աշխատեն, որ իրենց կարծիքը լինի հիմնավորված և փաստերով ամրապնդված:
- Յուրաքանչյուր մասնակցի պետք է տրվի կարծիքի արտահայտման հնարավորություն:

- Յուրաքանչյուր արտահայտություն պետք է ուշադիր քննարկվի:
- Քննարկումը պահանջում է կոռեկտություն, փոխադարձ հարգանք:
- Անթույլատրելի են ստորացուցիչ արտահայտությունները:

Եթե երկխոսությունը լարվում է, քննարկումը պետք է վարել՝ հիմնվելով քաղաքացիական արժեքների վրա: Օրինակ՝ եթե աշակերտները դատողություն են անում հագնվելու կուլտուրայի մասին, մասնավորապես, դպրոցում ոչ պատշաճ հագուստի արգելման մասին, լավ կլինի նախ պարզել, թե, ըստ նրանց, արդյոք դպրոցը պե՞տք է նախատեսի այս կամ այն հարցի մասին աշակերտի կարծիքը:

Բոլոր աշակերտներն իրենց կարծիքն արտահայտելու իրավունք ունեն: Քննարկման ժամանակ ուշադրությունը կենտրոնացրեք քաղաքացիական արժեքների վրա, նշե՛ք, թե ով ունի որոշում կայացնելու իրավունք:

Տարածված են քննարկման հետևյալ ձևերը.

«Կլոր սեղան» – զրույց, որին հավասար հիմունքներով մասնակցում է աշակերտների փոքր խումբ (4-5 մարդ), տեղի է ունենում մտքերի փոխանակում, ինչպես միմյանց, այնպես էլ՝ դասարանի հետ:

«Պանելային քննարկում» – խումբն ունի նախօրոք ընտրված առաջնորդ: Խումբը հարցը քննարկում է ինքնուրույն և այնուհետև ներկայացնում է դասարանին: Խմբի յուրաքանչյուր անդամ ունի իր կարծիքները հրապարակավ արտահայտելու իրավունք:

«Ֆորում» – նման է պանելային քննարկմանը, որի ժամանակ խումբը կատարում է կարծիքների և գաղափարների փոխադարձ փոխանակում դասարանի հետ:

«Սիմպոզիում» – աշակերտներն այս կամ այն հարցի շուրջ իրենց տեսակետն են արտահայտում և պատասխանում են դասարանի հարցերին:

Բանավեճ

Բանավեճը քննարկման ձևերից մեկն է և կառուցված է մասնակիցների նախօրոք պլանավորված ելույթների վրա: Ներկայացուցիչներին ընտրում են խմբից: Վիճաբանությունը սկսվում է երկու դիմակայող կողմերի մեկական ներկայացուցիչների ելույթներով: Նրանցից հետո ամբիոնը տրամադրվում է յուրաքանչյուր կողմի այլ ներկայացուցիչների ևս՝ հարցերի և մեկնաբանությունների համար: Ուսուցիչը յուրաքանչյուր ելույթ ունեցողի համար պետք է սահմանի որոշակի ժամանակ:

Որպես օրենք, բանավեճը սկսելուց առաջ և այն ավարտելուց հետո գնահատվում է դասարանի ընդհանուր տեսակետը, օրինակ.

Դիրքորոշումը. «....»	Մինչև բանավեճը	Բանավեճի վերջում
Արդարացված է		
Արդարացված չէ		
Երբեմն արդարացված է, երբեմն արդարացված չէ		

Բանավեճի կիրառումը

Օրինակ, մահապատժի թեման բավականին արդիական է մշակութային, քաղաքական և ընդհանրապես արժեքային տեսակետից, այդ պատճառով, բնականաբար, աշակերտները թեմայի շուրջ բազմապիսի տեղեկություններ են հետազոտում: Ոմանք մահապատիժն արդարացնելու փաստարկներ կգտնեն, ոմանք, ընդհակառակը, փաստարկներ՝ մահապատժի դեմ: Հնարավոր է այնպես լինի, որ երկու թիմերի փաստարկները երրորդն օգտագործի իր դիրքորոշումների պաշտպանության համար: Չնայած այս տարիքի երախաներին բնորոշ կտրուկ արտահայտված անհատականությանը՝ ակտիվ մեթոդներով անցկացված շուրջ քսան թեմա անցնելուց հետո դասարանը բավականին բաց և անկեղծ է դառնում: Աշակերտները պատասխանը կընտրեն ոչ թե անձնական պատվախնդրության և քմահաճությունների համաձայն, այլ՝ փաստարկների և չափանիշների քննադատական վերլուծության հիման վրա:

Ուսուցչի առաքելությունն է աշակերտներին ցույց տալ բանավեճով ուսուցման ռազմավարությունը, «ճանապարհորդել» նրանց ճանաչողության այս անչափ հետաքրքիր ճանապարհով, որտեղ ձեռք է բերվում գիտելիքի, ապրումների, հույզերի և վերաբերմունքների համադրություն:

Բայցևայնպես, ի՞նչ առավելություն ունի բանավեճը:

- Բանավեճը ուսումնական գործընթացի մասին մտածելն է և նրա դիտարկումը: Աշակերտները մանուկ հասակից բազմաթիվ բաներ են սովորել: Ամեն ինչ սկսվում է մեկ բառի արտասանությամբ, այնուհետև ամեն ինչ բազմապատկվում է և ծավալվում: Բանավեճն այն միջոցն է, որը թույլատրելիի և անթույլատրելիի, մասի և ամբողջի, բառի և գործի սկզբունքներն է ուսումնասիրում, ընդգծում է ծայրահեղությունները և բացահայտում նմանություններն ու տարբերությունները:
- Բանավեճը տեղեկությունների ձեռքբերման արդյունավետ մեթոդ է: Աշակերտը բանավեճի ժամանակ հաջողության հասնելու համար նոր նյութ պետք է հայթայթի, ակտիվորեն լսի ընդդիմախոսի տեղեկատվությունը և այն օգտագործի երկխոսություն վարելու համար:
- Բանավեճը մեզ հնարավորություն է տալիս ուսումնասիրել գաղափարները, առանց ավելորդ ռիսկի: Սովորական վեճը կարող է այլևս չենթարկվել վերահսկման: Բանավեճի ժամանակ գործընթացներն ամբողջությամբ վերահսկվում են: Սկզբից կանոններն աշակերտներին խիստ և դժվար հաղթահարելի են թվում, սակայն առանց դրանց անհնար է պահպանել արդարացիությունը և բացառել անձնական անարգանքը:
- Բանավեճը տալիս է վիճաբանելու արվեստի գործնական փորձ, ինչը ողջ կյանքի ընթացքում չափազանց կարևոր է մարդու համար: Բանավեճի համար պարտադիր կարողությունները անհրաժեշտ են ինչպես մասնագիտական զարգացման, այնպես էլ, ընդհանրապես, քաղաքացիական կյանքի համար: Տրամաբանական դատողության, ապացուցող նյութերի, օրինակների և վիճակագրական տվյալների վրա հիմնված եզրակացությունը կամ փաստարկների և ապացույցների միասնականությունը ստեղծում են դիրքորոշում՝ կայուն կամ անկայուն:

Т - դիագրամ

Այս սխեման ուսուցիչը կարող է բազմակողմանիորեն կիրառել: Այն շատ հարմար է հակառակ տեսակետների արտահայտման, երևույթների և փաստերի հակադրման և համեմատելու, գործող անձանց բնութագրման համար:

Т-դիագրամը հնարավորություն է տալիս ցույց տալ քննարկվելիք հարցերի (փաստերի, երևույթների, մարդկանց, առարկաների և այլնի) միջև հակադրությունը:

Վարժությունը լավ է տեղեկությունների տեսակավորման (ասենք, դրականի և բացասականի) և խմբավորման համար: Աշխատանքը կատարվում է անհատապես, զույգերով կամ խմբերով՝ ըստ ուսուցչի հայեցողության. գրատախտակի վրա, տետրում կամ թերթի վրա: Լրացվում է դեռ սխեմայի ձախ կողմը (5 րոպե), այնուհետև՝ աջը (5 րոպե):



Դադարներով ընթերցում

Դադարներով ընթերցումը տեքստը կարդալու մեթոդներից մեկն է:

Ուսուցիչը գեղարվեստական ստեղծագործությունը, տեղեկատվական / ճանաչողական նյութը, հրապարակախոսական հոդվածը և այլ տիպի տեքստը նախօրոք մասերի է բաժանում:

Յուրաքանչյուր մաս կարդալուց առաջ նա աշակերտներին առաջադրում է նախօրոք պատրաստված հարցեր:

Աշակերտները ենթադրում են, թե ինչի մասին կարող է լինել խոսքը տեքստի ընթերցվելիք մասում:

Ուսուցիչը հարցերի միջոցով փորձում է կենտրոնանալ տեքստում քննարկված կարևորագույն հարցերի վրա:

Մեթոդը խթանում է ընթերցանության ժամանակ աշակերտների ուշադրության կենտրոնացումը և տեքստի խորքային ըմբռնումը, աշակերտների մեջ տեքստի հանդեպ հետաքրքրության առաջացումը:

Նախագծեր

Նախագիծը կոնկրետ հիմնախնդրի վճռմանը կամ նախաձեռնության իրականացմանը միտված բազմակողմանի աշխատանք է, որում շարժիչը հետազոտական, ստեղծագործական, համագործակցության և հաղորդակցական կարողությունների զարգացումն է: Այս մեթոդը ակտիվ և նպատակաուղղված ուսանման հնարավորություն էր տալիս և տալիս է:

Աշակերտները միշտ հարցեր են տալիս՝ ինչո՞ւ եք մեզ սովորեցնում այս կամ այն առարկան, այս գիտելիքն ինչո՞ւմ պետք կգա ինձ: Ուսուցիչները դժվարանում են այս հարցերին համոզիչ և փաստարկված պատասխաններ տալ: Այս հիմնախնդրի կարգավորման մեջ ուսուցչին կօգնի այն բանի իմացությունը, թե ինչպես աշխատեցնի աշակերտներին ուսումնական նախագծի վրա: Նախագծի վրա աշխատելիս՝ աշակերտներն իրական հիմնախնդրի վճռման համար կիրառում են ձեռք բերած գիտելիքը, հմտությունները և կարողությունները: Նախագծով ուսուցումն առաջացնում է աշակերտների մոտիվացիա և բարձրացնում նրանց պատասխանատվությունը: Նրանք հաճույքով են կատարում աշխատանքները և կարող են երկար ժամանակ աշխատել առաջադրված հարցերի վրա:

Աշակերտները հարցերը մշակում են երկար ժամանակի (մեկ կամ մի քանի շաբաթվա) ընթացքում և այնուհետև ներկայացնում են ամբողջ դասարանին կամ ավելի ընդարձակ լսարանի: Նախագծերը դեռահասին օգնում են ստացած գիտելիքը և փորձն օգտագործել իրական կյանքում՝ նախանշված նպատակին հասնելու համար:

Նախագծի վրա աշխատանքն ընդգրկում է պլանավորման, հետազոտման, գործնական ակտիվության և արդյունքների ներկայացման փուլեր՝ ընտրած հարցին համապատասխան: Նախագիծն իրականացված կհամարվի, եթե նրա արդյունքները ներկայացված են ակներև կերպով և համոզիչ, կոռեկտ ձևով (օրինակ՝ գրավոր փաստաթուղթ, մանրակաղապար, բեմականացում, քննարկումներ, ակցիա, հետևողական միջոցառումներ և այլն):

Ուսուցիչն ուսումնական նախագծերի ընթացքում կատարում է խորհրդականի դեր, ղեկավարում է աշխատանքները, որոնման և հետազոտման ժամանակ ուղղություն է տալիս: Բացի այդ, նա մատնանշում է տեղեկությունների աղբյուրները:

Նախագծի վրա աշխատելիս՝ աշակերտին անհրաժեշտ են ստեղծագործականության, տեղեկատվական տիրույթում կողմնորոշման և ինքնուրույն սովորելու հմտություններ և կարողություններ:

Ուսումնական նախագծի պլանավորման ժամանակ ուսուցիչը նկատի է ունենում.

- Որքանով է կարևոր հետազոտում պահանջող հիմնախնդիրը:
- Ակնկալվող արդյունքների նորարարությունը (օբյեկտիվ կամ սուբյեկտիվ):
- Նախագծի վրա աշխատելու ժամանակ կիրառած մեթոդների կապը հետազոտության հետ:
- Ընտրության հնարավորության առկայությունը, ինչն ավելացնում է աշակերտների պատասխանատվությունը:

Նախագիծը կարող է իրականացվել անհատապես, զույգերով կամ խմբերով, մեկ առարկայի շրջանակներում, մի քանի առարկաների շրջանակներում (առարկաների ինտեգրում):

Հնարավոր է, նախագծի գաղափարը բխի ուսուցչից, սակայն, ավելի արժեքավոր է, երբ նախագիծը նախաձեռնված է աշակերտների կողմից, նրանք ինքնուրույն են ընտրում հետազոտության մեթոդներ և

խնդրի լուծման ուղիներ, իսկ ուսուցիչը միայն խորհրդականի դեր է կատարում:

Նախագծի նկարագրությունը

Նախագծի նկարագրությունը նրա հիմնական բաղկացուցիչ մասն է: Ցանկալի է, որ տվյալ կետը բաժանվի ենթակետերի, որոնցում կմիավորվեն հետևյալ տիպի տեղեկություններ.

ա) **Խնդրի սահմանում** (նույնականացում) - ենթադրվում է այն կոնկրետ հիմնախնդրի ընդգծումը, որին միտված է ձեր նախագիծը:

բ) **Նպատակ** - ենթադրվում է ընդարձակ, ընդհանուր դրույթ այն բանի վերաբերյալ, թե ինչի եք ուզում հասնել: Նախագծի նպատակը պետք է հանդիսանա այնպիսի ցանկալի միջավայրի ստեղծումը, որը տրամաբանորեն կկապվի վերոնշյալ հիմնախնդրի հետ:

գ) **Խնդիրներ** - ենթադրվում են նպատակին հասնելու համար կոնկրետ քայլերը: Այստեղ պետք է մատնանշեք, թե ինչ խնդիրների լուծում եք նախանշում նախագծում սահմանված նպատակին հասնելու համար: Կարող եք նախանշել մեկ, երկու կամ մի քանի խնդիր՝ այն բանի նախատեսմամբ, թե որն է ձեր նախագծի առանձնահատկությունը:

դ) **Իրականացման ուղիներ** - ենթադրվում են ձեր կողմից նախանշված խնդիրների կատարմանը միտված առավել կոնկրետ քայլերը: Սա այն գործընթացն է, որը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

1) «Ինչպե՞ս». Ինչպե՞ս կիրականացնեք ձեր նախագծի խնդիրները:

2) «Ո՞վ». Ովքե՞ր են մասնակցում ձեր նախագծի իրականացմանը, և ի՞նչ գործառույթներ ունեն նրանք նախագծում:

Նախագծի իրականացման ժամկետները

Պետք է ներառի նախագծի՝ ժամանակի մեջ բաշխված ընթացքը:

Նախագծի ընթացքում իրականացվելիք գործունեությունները նրանում պետք է արտացոլվեն ըստ օրերի, շաբաթների, ամիսների՝ բաժանված փուլերի՝ ելնելով նախագծի յուրահատկությունից:

Սպասվելիք արդյունքները

Այս մասում նկարագրե՛ք այն ենթադրվելիք էֆեկտը կամ ակնկալվող արդյունքը, որ կհետևի նախագծի հաջող իրականացմանը:

Մշտադիտարկում (մոնիտորինգ)

Այս մասում պետք է մատնանշեք, թե ինչպիսին կլինի կոնկրետ ձեր նախագիծը մշտադիտարկելու (մոնիտորինգի) մեխանիզմը և պարբերականությունը:

Գնահատում

Մատնանշեք այն ենթադրյալ չափանիշները (ցուցանիշները), որոնք սահմանում են ձեր նախագծի հաջողությունը:

Նախագծի գնահատման չափանիշները.

Հիմնախնդրի նույնականացում
Տեսական գիտելիքի կիրառում գործնականում
Տեղեկության հայթայթման կարողություն
Հետազոտությունների պլանավորման և անցկացման կարողություն
Հասարակության և համապատասխան կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ շփվելու կարողություն
Խմբի ստեղծագործական կարողություն
Հայթայթված տեղեկությունների դասակարգման և նույնականացման կարողություն
Հետազոտման արդյունքների վերլուծման կարողություն
Հիմնախնդրի վճռման ուղիների առաջարկում
Որոշումների կայացում
Ներկայացված աշխատությունների կազմակերպում
Աշակերտների կողմից ստեղծված դիդակտիկ նյութեր

Օգտակար խորհուրդներ

Քաղաքացիական գրագիտության զարգացում
(Աշխատանք տպագիր նյութի վրա)

Քաղաքացիական կրթության ուսուցման ժամանակ շատ կարևոր է այն, թե սովորելու ընթացքում աշակերտներն ինչպես են կիրառում տպագիր նյութը՝ տարբեր բնույթի հոդվածները կամ լրագրային նյութը, քաղաքական և հասարակական գործիչների ելույթները, օրենքների տեքստերը և այլն:

Նյութերի քանակը և բազմազանությունը կախված է դրանց մատչելիությունից և մշակվելիք թեմայի նշանակությունից:

Յուրաքանչյուր տիպի տպագիր նյութ աչքի է ընկնում որոշակի, իրեն բնորոշ առանձնահատկություններով: Դրանց վերլուծությունն էլ տարբեր կերպ է իրականացվում: Թեպետ, վստահորեն կարող ենք ասել, որ հարցերի ցանկը, որ կիրառվում է դրանց մշակման համար, կարող է միաբնույթ լինել:

Հարցեր, որոնք մեզ օգնում են տարբեր տիպի փաստաթղթերի մշակման հարցում.

1. **Ո՞վ** է փաստաթղթի հեղինակը/հեղինակները: Բացի հեղինակից/հեղինակներից, փաստաթուղթը կազմելուն արդյոք մասնակցե՞լ է այլ անձ կամ այլ անձինք: Ի՞նչ գիտեք այս հեղինակի/հեղինակների մասին: Ուսումնասիրվելիք փաստաթղթից լրացուցիչ ի՞նչ կարող եք իմանալ հեղինակի/հեղինակների մասին:
2. **Ե՞րբ** է ստեղծվել կամ գրվել փաստաթուղթը: Կարելի՞ է արդյոք դա որոշել՝ հիմնվելով փաստաթղթի բովանդակության վրա: Ի՞նչ նշանակություն ունի փաստաթղթի ստեղծման ժամանակը որոշելը:
3. **Որտե՞ղ** է դրվել այն երևույթի/երևույթների հիմքը, որի մասին խոսվում է փաստաթղթում: Ինչպե՞ս կարելի է որոշել այդ՝ ելնելով փաստաթղթի բովանդակությունից: Ի՞նչ նշանակություն ունի տվյալ երևույթի վայրի սահմանումը:
4. **Ի՞նչ փաստեր** են բերված փաստաթղթում: Ի՞նչ եզրահանգումներ կարող ենք անել այս փաստերին ծանոթանալուց հետո:
5. **Ինչո՞ւ** է ստեղծվել այս փաստաթուղթը: Ի՞նչն էր դրա ստեղծման պատճառը:
6. **Ինչպե՞ս** է ձեզ օգնել փաստաթուղթը՝ ուսումնասիրվելիք երևույթի/երևույթների մասին ավելին իմանալու հարցում:

Չնայած հարցերի նման միատեսակացմանը, միավորմանը, յուրաքանչյուր տեսակի փաստաթուղթ ունի իր առանձնահատկությունը: Ստորև քննարկելու ենք իրավական փաստաթղթերի վերլուծության առանձնահատկությունները, որոնք կարող են մեզ օգտակար լինել քաղաքացիական կրթության դասերն արդյունավետ վարելու համար: Մենք կզրուցենք երեք տեսակի փաստաթղթերի՝ սահմանադրության, օրենսգրքի և օրենքի մասին:

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է: Այն ամրագրում է երկրի կառավարման ձևը, տալիս սոցիալական և քաղաքական իրավունքների երաշխիքներ և սահմանում է քաղաքական սկզբունքները:

Օրենսգիրքը մի շարք օրենքների և կանոնակարգերի ժողովածու է, որը սահմանված հասարակական երևույթին է պատկանում:

Օրենքը ներկայացնում է դրույթներ, որոնք կազմում են օրենսդիրները, և որը կարգավորում է իշխանության և հասարակության գործողությունները կոնկրետ բնագավառում:

Այս երեք իրավաբանական փաստաթղթերը ստեղծում են ստորակարգվող կառուցվածք: Յուրաքանչյուր օրենք պետք է հիմնվի Սահմանադրության կոնկրետ դրույթի վրա, և հանդիսանա կոնկրետ օրենսգրքի բաղադրիչ մաս:

Մեր թվարկած փաստաթղթերի վերլուծությունը ևս նման մեթոդներով է իրականացվում: Եթե աշակերտին հանձնարարում ենք ուսումնասիրել այս փաստաթղթերը, նա պետք է գտնի և վերլուծի կոնկրետ փաստաթղթի ծագման պատմությունը, դրա նշանակությունը և իրավաբանական բացատրությունը, օգտագործման բնագավառը և կիրառության արդյունքները:

Փաստաթղթի ծագման պատմական վերլուծությունը ենթադրում է այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են.

- Որտե՞ղ, ե՞րբ և ինչպիսի՞ քաղաքական իրավիճակում է ստեղծվել ուսումնասիրվելիք փաստաթուղթը:
- Ունե՞ր արդյոք այն «նախորդներ»:
- Ի՞նչ կապ կա դրա և այլ, նույն հիմնախնդրի վերաբերյալ առկա փաստաթղթերի միջև:
- Ո՞վ է մասնակցել դրա ստեղծմանը:
- Ովքե՞ր էին փաստաթղթի ընդունման կողմնակիցները և հակառակորդները:
- Ի՞նչ նպատակով է ստեղծվել այն:

Փաստաթղթի նշանակության վերլուծության ժամանակ կարող են ծագել հետևյալ հարցերը.

- Փաստաթղթի ստեղծման գործընթացում ինչո՞ւ կիրառեցին համապատասխան ոճը:
- Ինչպիսի՞ն է փաստաթղթի պաշտոնական մեկնաբանությունը, փոխվո՞ւմ է արդյոք դրա նշանակությունը:
- Ի՞նչ տեղ է զբաղեցնում կոնկրետ գլուխը կամ որևէ դրույթ ամբողջ փաստաթղթում:

Փաստաթղթի ժամանակակից կիրառության համար կարող են առաջադրվել հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս է կիրառվում տվյալ փաստաթուղթը մինչև օրս:
- Ծագե՞լ է արդյոք որևէ խնդիր դրա կիրառման ժամանակ:
- Փոփոխվե՞լ է արդյոք փաստաթուղթը, և եթե փոփոխվել է՝ ինչպե՞ս:
- Այսօր նրա կիրառման ժամանակ ի՞նչ խնդիրներ են առաջանում:
- Ի՞նչ ուղղումներ առաջարկվեցին փաստաթղթի կատարելագործման համար:
- Տվյալ ուղղումների հիմքում ի՞նչ պատճառ է դրվել:
- Ինչպիսի՞ն է աշակերտների կարծիքը փաստաթղթի և դրա կիրառության վերաբերյալ:

Փաստաթղթերի ուսումնասիրման ժամանակ կարող ենք օգտագործել նաև այլ նյութեր՝ հետազոտություններ, քաղաքական ելույթներ, թերթերի հոդվածներ և հարցազրույցներ, հեռուստատեսային հաղորդումներ, բանավեճեր և այլն:

Ուսուցիչը կարող է կազմակերպել, որ աշակերտներն ընդգրկվեն ավելի մեծ նախագծի մեջ: Այս դեպքում առանձին աշակերտի կամ աշակերտների խմբին ուսումնասիրման համար տրվում է մեծ փաստաթղթի որևէ մեկ գլուխ: Այս կերպ ողջ փաստաթուղթը վերաբաշխվում է դասարանի վրա: Աշխատանքն ավարտվելուց հետո դասարանի կողմից կատարված աշխատանքը կրկին կմիավորվի:

ԹԵՄԱ 1

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

ԹԵՄԱ 1

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Նպատակները.

- Օժանդակ ձեռնարկի և դրա նպատակների ներկայացում:
- Տեղական ինքնակառավարման ընդհանուր ըմբռնումը:
- Ժողովրդավարական երկրների փորձի ընդունում:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, գրիչներ, գրատախտակ, կավիճ:

Տևողությունը՝ երկու դաս:

ԴԱՍ 1

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտներին նախ ծանոթացնում է ձեռնարկի նպատակները:

Այնուհետև մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ պարզում է, թե ինչ գիտեն աշակերտները տեղական ինքնակառավարման մասին:

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե ինչ է ինքնակառավարումը, որտեղ է սկիզբ առել, և ինչպես է զարգացել այն Արևմուտքի ժողովրդավարական երկրներում:

Ակտիվություն #2

Մնացած ժամանակի ընթացքում ուսուցիչն աշակերտներին տնային առաջադրանք է հանձնարարում: Բացատրում է, թե ինչ է նախագիծը և ինչպես պետք է սկսեն դրա իրականացումը: Առաջին փուլում անհրաժեշտ է, որ նրանք հասարակական կարծիքի հետազոտում անցկացնեն հարևանների շրջանում, ընտանիքում, ընկերների հետ՝ «Ի՞նչ է ինքնակառավարումը» թեմայով (Տե՛ս՝ Աշակերտի գիրք. **Նախագիծ, I փուլ**): Ուշագրավ է, որ հավանաբար սա աշակերտների նման աշխատանք

կատարելու առաջին փորձն է: Նրանք, բացի այդ, պետք է պատրաստեն փոքր չափի շնորհանդես, ինչը կարող են կատարել խմբով կամ զույգերով:

ԴԱՍ 2

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է, որ ինքնակառավարումը չի հանդիսանում արտասահմանից նոր ներկրված գաղափար, և որ դրա նշանակությունը լավ գիտակցում էին վրաց մտածողները: Դրա լավագույն օրինակ է **Իլյա Ճավճավաձեի** «Կյանքը և օրենքը» հոդվածաշարը: Դրանում **Իլյա Ճավճավաձեն ձևակերպել է XIX դարի 70-80-ական թվականների ինքնակառավարման ճիշտ այն սկզբունքները, որոնք 100 տարի հետո (1985 թվականին) տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի հիմք են հանդիսացել:** Իլյայի տեսլականին ծանոթանալով՝ մենք կարող ենք հասկանալ ինքնակառավարման էությունը, դրա դերը, գործառույթները և գործողությունների սկզբունքները:

Աշակերտները «դադարներով ընթերցում» մեթոդի կիրառմամբ ծանոթանում են Իլյա Ճավճավաձեի աշխատությանը և յուրաքանչյուր հատված կարդալուց հետո, պատասխանում են համապատասխան հարցերին:

Տեքստին ծանոթանալուց հետո, ուսուցիչը նրանց հայտնում է, որ զարգացած երկրներում ինքնակառավարումն այսօր էլ հենց այս սկզբունքների վրա է կառուցված:

Ծանոթություն. *Ուսուցչի գրքի վերջում (օգտակար ռեսուրսներ) տրված է քաղվածք Իլյա Ճավճավաձեի «**Կյանքը և օրենքը**» հոդվածաշարից: Ի տարբերություն Աշակերտի գրքի, այստեղ կցված է մի քանի հատված Իլյայի տեսական հայացքներից (տեքստը տրված է շեղատառերով, մոխրագույն ֆոնի վրա):*

- *Սեփականությունը՝ որպես մարդու հիմնական իրավունքներից մեկը:*
- *Բիսմարկի տեսակետն ապակենտրոնացման մասին:*
- *Սուբսիդիարության սկզբունքի հիմնավորումը:*
- *Ինքնակառավարումը տարբեր պետական ռեժիմներում:*
- *Ինքնակառավարվող միավորների չափի հարցը:*

Տրված տեսակետները ուսուցիչը, ցանկության դեպքում, կարող է լրացուցիչ բացատրել աշակերտներին:

ԹԵՄԱ 2

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԹԵՄԱ 2

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Նպատակները.

- Ինքնակառավարման կարևորության վերլուծումը ժողովրդավարական հասարակությունում:
- Ինքնակառավարման իրավաբանական հիմունքների և օրենսդրության ուսումնասիրում:
- Ծանոթացում տեղական ինքնակառավարման բնագավառում պետական իշխանության պարտավորություններին:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, գրիչներ, գրատախտակ, կավիճ:
Տևողությունը՝ մեկ դաս:

ԴԱՍ 3

Ակտիվություն #1

Սկզբից աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները, որ իրենք պետք է պատրաստեին «Ի՞նչ է ինքնակառավարումը», «Ի՞նչ հիմնական խնդիրներ գոյություն ունեն ձեր մունիցիպալիտետում» թեմայի վերաբերյալ:

Ակտիվություն #2

Ուսուցիչը համառոտ վերլուծում է, թե երբ է Վրաստանում սկսել գործել տեղական ինքնակառավարումը, Վրաստանը երբ է միացել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, ինչ պարտավորություններ են դրվել մեր երկրի վրա տվյալ Խարտիայի վավերացմամբ, և որ իրավական մեխանիզմներն են ապահովում Վրաստանում ինքնակառավարման իրականացումը: Կարևոր է, որ ուշադրությունը կենտրոնացվի «Տեղական ինքնակառավարման օրենսգիրք» օրգանական օրենքի բացատրության վրա: Ուսուցիչը կարող է կիրառել իմաստային քարտեզ, որպեսզի համոզվի, որ աշակերտները լավ են հասկացել օրգանական օրենքի նշանակությունը:

Ծանոթություն.

Ուսուցիչն ուշադրությունը պետք է կենտրոնացնի հետևյալ հարցերի վրա.

- *Վրաստանում ինքնակառավարման փորձ պատմականորեն գոյություն ունի: 20-րդ դարի սկզբին վրաց հասարակությունը շատ ավելի էր զարգացած, քան այսօր: Վրաստանի I Հանրապետության (1918-1921) ժամանակաշրջանում երկրում ստեղծվել էր ինքնակառավարման դասական եվրոպական համակարգ, որին հասնելու համար այսօրվա Վրաստանը դեռ մեծ աշխատանք ունի կատարելու:*
- *Վրաստանը միացել է Եվրոպական խարտիային 2002 թվականին և 2005 թվականի ապրիլի 1-ից Խարտիան գործում է Վրաստանի տարածքում:*
- *Սուբսիդիարության սկզբունքը (**Աղբյուր 1**. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա, հոդված 4, կետ 3):*
- *Ինքնակարգավորման իրավունքը մեր սահմանադրական իրավունքն է (**Աղբյուր 2**. Վրաստանի Սահմանադրություն, հոդված 7, կետ 4):*

Ակտիվություն #3

Ինքնակառավարման կարգավորող իրավական փաստաթղթերի (կամտարբեր օրենքների) վերլուծումից հետո ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե ինչ պարտավորություններ ունի պետությունը (կենտրոնական իշխանությունը) տեղական ինքնակառավարման հանդեպ:

Այս պարտավորությունների մեջ կողմնորոշվելու համար աշակերտները քննարկում են Տեղական ինքնակառավարման օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթները (Աշակերտի գրքի Հավելված 1 կամ Ուսուցչի գրքի Օգտակար ռեսուրսներ, 2. Տեղական ինքնակառավարման օրենսգիրք): Այնուհետև ուսուցիչն աշակերտներին բաժանում է հինգ խմբի և առաջադրում է խմբերում դատողություն ծավալել: Յուրաքանչյուր խումբ համապատասխանաբար քննարկում է 7-րդ հոդվածի 1, 2, 3, 4 և 5 կետերը:

Վերջում բոլոր խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը և սկսում աշխատանքների դասարանական քննարկում:

Ծանոթություն.

Յուրաքանչյուր կետի գնահատման ժամանակ ուսուցիչը կարող է ղեկավարվել հետևյալ սկզբունքներով.

1. *Ինքնակառավարման և պետության հարաբերությունը հիմնվում է փոխհամագործակցության վրա. կենտրոնական իշխանությունը տեղական իշխանության «ղեկավարը» չէ:*
2. *Պետությունը պարտավոր է ինքնակառավարումների գործունեությանն աջակցելու նպատակով ստեղծել համապատասխան իրավական, ֆինանսատնտեսական և կազմակերպչական պայմաններ:*
3. *Եթե պետությունը (կենտրոնական իշխանությունը) փոխում է ինքնակառավարումների հետ կապված օրենսդրությունը, պարտավոր է ինքնակառավարումների հետ նախապես խորհրդատվություններ անցկացնել:*
4. *Ինքնակառավարումները, եթե նրանց իրավունքները ոտնահարվում են կենտրոնական իշխանության կողմից, իրավունք ունեն կենտրոնական իշխանության դեմ բողոք ներկայացնել դատարան:*
5. *Ինքնակառավարումները, եթե նրանց իրավունքները ոտնահարվում են որևէ նոր օրենքով, իրավունք ունեն այդ փոփոխությունը բողոքարկել Սահմանադրական դատարանում:*

ԹԵՄԱ 3

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԹԵՄԱ 3

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նպատակներ.

- Ինքնակառավարման իրականացման հիմնական սկզբունքների և գործառույթների ծանոթացում-վերլուծում:
- Ինքնակառավարման իրավազորությունների սահմանա-զատում՝ ըստ գործառույթների:
- Ինքնակառավարման իրավազորությունների վերլուծում՝ կապված հանրային դպրոցի հետ:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, մեծ ֆորմատի թղթեր, մարկերներ, գրիչներ:
Տևողությունը՝ մեկ դաս:

ԴԱՍ 4

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է **3.1 առա-ջադրանքը**, ինչի համար աշակերտները պետք է խմբերի բաժանվեն:

Յուրաքանչյուր խումբ ինքնուրույն քննարկում է Տեղական ինքնակառավարման օրենսգրքի համապատասխան հոդվածը:

Վերջում բոլոր խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը և ծավալվում է դասարանական քննարկում:

Ծանոթություն.

Ցանկալի է, որ ուսուցիչն իրար հետ կապի Իլյա Ճավճավաձեի հայացքները և գործող օրենսդրությունը (Ինքնակառավարման օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի սկզբունքները) այն առումով, թե ինչ հատկանիշներով է բնութագրվում ինքնակառավարումը:

Իսկ վերջում, ամփոփման ձևով, պետք է բացատրի աշակերտներին, որ այս սկզբունքները, հիմնականում, համընկնում են, քանի որ դրանք առողջ մտածողության՝ տրամաբանության վրա հիմնված սկզբունքներ են:

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքները: Կարևոր է ուշադրության կենտրոնացումը տեղական ինքնակառավարման դերի վրա՝ հակամարտություններից խուսափելու և դրանք կարգավորելու հարցում: Գործառույթների վերլուծումից հետո սկսվում է ինքնակառավարման լիազորությունների քննարկումը:

Աշակերտները լավ պետք է գիտակցեն, թե կոնկրետ որ իրավազորությունն է կիրառում ինքնակառավարումն այս կամ այն գործառույթի կատարման համար: Ուսուցիչը նրանց առաջադրանք է տալիս (**Առաջադրանք 3.2**), համաձայն որի աշակերտները պետք է ծանոթանան չորս դեպքերի և պարզեն՝ ինքնակառավարման մարմինն իրականացնում, թե՞ չէր իրակա-նացնում հիմնական գործառույթը:

Ուշագրավ է, որ բոլոր այս դեպքերը, այնպես, ինչպես դասագրքում տրված այլ դեպքեր, իրական են և հիմնվում են տարբեր կայք-էջերում հրապարակված տեղեկությունների վրա: Հնարավոր է, որ ուսուցիչն աշակերտներին հանձնարարի, որ իրենք էլ գտնեն նման դեպքեր:

Ծանոթություն.

- ***Դեպք 1-ը*** *(երիտասարդական կենտրոն) կվերաբերի քաղաքացիական խաղաղության և կայուն զարգացման բնագավառին:*
- ***Դեպք 2-ը*** *(գրադարանի և ամբուլատորիայի կազմակեր-պում) հասարակությանը ծառայությունների մատուցում է:*
- ***Դեպք 3-ը*** *(ոռոգում) նույնպես կապվում է հասարակությանը ծառայություններ մատուցելու և որոշակիորեն նաև՝ կայուն զարգացման ապահովման հետ:*
- ***Դեպք 4-ը*** *(մաքրում և կոշտ թափոնների հեռացում) ինտերմունիցիպալիտետային (մունիցիպալիտետների միջև) համագործակցության օրինակ է հանդիսանում հասարակական ծառայության այս բնագավառում, այն ավելի միտված է հեռանկարին, կայուն զարգացման ապահովմանը:*

Ակտիվություն #3

Նրանից հետո, երբ աշակերտները ուսուցչի հետ կամփոփեն ակտիվություն #2-ի առաջադրանքը, ուսուցիչը նրանց նոր առաջադրանք կտա. աշակերտները գրքի Հավելված 1-ից պետք է ծանոթանան «Տեղական ինքնակառավարման օրենսգիրք» Վրաստանի Օրգանական օրենքի 16-րդ հոդվածին և նրանում տրված ինքնակառավարման իրավազորությունները խմբավորեն՝ ըստ գործառույթների, իսկ տրված աղյուսակը տեղափոխեն տետրի մեջ և լրացնեն:

Առաջադրանք 3.3-ը աշակերտները կատարում են տանը:

Ծանոթություն.

1. *Առաջադրանք 3.3-ի աղյուսակում օրինակի տեսքով տրված են մի քանի կետով/ենթակետով սահմանված իրավազորություններ:*

2. *Ուսուցիչը պետք է նկատի ունենա, որ «Տեղական ինքնակառավարման օրենքի» 16-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված իրավազորությունները ինքնակառավարման* ***սեփական իրավազորություններն են,*** *և* ***բացառապես նա պետք է կատարի,*** *ինչ վերաբերում է 16-րդ հոդվածի 4-րդ կետին, սրանք, հիմնականում, կենտրոնական իշխանության գործառույթներն են, և* ***ինքնակառավարումը կարող է*** *դրանց կարգավորման հարցում* ***օգնել կենտրոնական իշխանությանը:*** *Հենց այս պատճառով օրենքում այս դեպքում կիրառած է ոչ թե* ***«իրականացնել»*** *եզրույթը, այլ՝* ***«օժանդակել»*** *և* ***«աջակցել»*** *եզրույթները:*

3. *Հնարավոր է, աշակերտները միևնույն լիազորությունը գրեն տարբեր սյունակներում, օրինակ, 2.ա կետը (բյուջեի կազմում, հաստատում, իրականացում և իրականացման վերահսկում) որոշ աշակերտներ կարող են գրել «կայուն զարգացման», որոշ աշակերտներ՝ «կայունության ապահովման» սյունակում: Այս տեսակետներից ոչ մեկը սխալ չէ, տրված երեք գործառույթները (հասարակական ծառայությունների մատուցում, կայուն զարգացում, կայունության ապահովում) պայմանական են: Առաջադրանքի նպատակն այն է, որ աշակերտները մտապահեն, թե ինչ իրավասությունների կատարում է հանձնարարվում տեղական ինքնակառավարմանը:*

Ակտիվություն #4

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է 3.3 առաջադրանքը կատարելուց հետո վերանայել նախագծի I փուլի արդյունքները և հարցվածների կողմից թվարկվածը, ինքնակառավարման մեջ առկա հիմնախնդիրներից առանձնացնել այն հարցերը, որոնց վճռումը տեղական ինքնակառավարման իրավասության մեջ է մտնում:

Նախագծի II փուլի առաջադրանքն աշակերտները տանն են կատարում:

ԹԵՄԱ 4

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 4

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Նպատակները.

- Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինների բնութագիրը:
- Այս մարմինների ընտրության կարգի և մեխանիզմների վերլուծում:
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինակներ:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, տետր, գրիչներ:
Տևողությունը՝ երկու դաս:

ԴԱՍ 5

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե ինչ է ավագանին, ով է քաղաքապետը/գամգեբելին՝ համայնքապետը, և ինչպես են ընտրում նրանց: Այնուհետև, օգտագործելով մտավոր գրոհի մեթոդը, աշակերտներին խնդրում է արտահայտել իրենց կարծիքները, թե ըստ իրենց, ով կարող է դառնալ ավագանու անդամ և քաղաքապետ/շրջանային (համայնքային) վարչության նախագահ: Ուսուցիչը նրանց ծանոթացնում է, թե ինչ պահանջներ է առաջադրում Օրենքը ինքնակառավարման անդամության թեկնածուին (Աշակերտի գիրք, Հավելված 2, քաղվածք Ընտրական օրենսգրքից, հոդված 134):

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է ինքնուրույն կատարելիք **Առաջադրանք 4.1**-ը:

Ակտիվություն #3

Ուսուցիչը տեղեկություն է տրամադրում աշակերտներին ավագանու և քաղաքապետի/շրջանային (համայնքային) վարչության նախագահի ընտրության կարգի, ինչպես նաև ընտրված անձանց իրավազորությունների և մարմինների կառուցվածքների մասին և հանձնարարում է տեղեկություններ հայթայթել իրենց ինքնակառավարման ավագանու կազմի մասին (**Առաջադրանք 4.2**):

Ծանոթություն. *Նշված տեղեկատվությունը որոշ քաղաքների դեպքում, հնարավոր է հայթայթել համացանցի միջոցով (Քաղաքացիական մշակույթի միջազգային կենտրոնի կայք՝ http://www.lsg.ge/): Դուք նաև կարող եք գրավոր դիմել ավագանուն և պահանջել տվյալ տեղեկատվությունը: Նամակի նմուշը տրված է Աշակերտի գրքի Հավելված 3-ում: Աշակերտները կարող են անհատապես դիմել ավագանուն կամ կոլեկտիվ նամակ ուղարկել դասարանի անունից:*

Ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ մունիցիպալիտետից տեղեկություններ ստանալուն մի քանի օր անհրաժեշտ կլինի և հաջորդ դասի օրը պետք է պլանավորվի՝ ըստ այդմ:

ԴԱՍ 6

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ներկայացնել կատարած առաջադրանքները: Տվյալ ակտիվության տևողությունը կախված է աշակերտների թվից: Կարևոր է, որ բոլոր աշակերտներին տրվի իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն:

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտներին տեղեկություններ է մատուցում տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքի, պաշտոնյաների, աշխատանքային լեզվի և պետական խորհրդանիշների մասին և նրանց առաջադրում տեղեկություններ հայթայթել իրենց ինքնակառավարվող միավորի զինանշանի և դրոշի մասին (**Առաջադրանք 4.3**):

Ծանոթություն. *Այս դեպքում ևս աշակերտները կարող են տեղեկատվություն հայթայթել համացանցի միջոցով (համապատասխան մունիցիպալիտետի կայքում) կամ ինքնակառավարմանը նամակով դիմել:*

Ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ մունիցիպալիտետից տեղեկություններ ստանալուն, հնարավոր է, մի քանի օր անհրաժեշտ լինի, և հաջորդ դասի օրը պետք է պլանավորվի՝ ըստ այդմ:

Ակտիվություն #3

Դասի երկրորդ կեսը ամբողջությամբ տրամադրվում է **նախագծի III փուլին**՝ ինքնակառավարման իրավասությունների ծանոթացմանը և վերլուծմանը: Մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ, ուսուցիչն աշակերտներին խնդրում է մտաբերել իրենց մունիցիպալիտետի կողմից իրականացված որևէ ակտիվություն, որը դրական է արտացոլվել իրենց համայնքի կյանքի վրա, անվանել նաև այնպիսի հարցեր, որոնք, ըստ նրանց, հնարավոր է վճռել ինքնակառավարման հետ համագործակցությամբ:

Ծանոթություն. *Ինքնակառավարման օգնությամբ վճռված հիմնախնդիրների մասին օրինակներ հայթայթե՛ք www.civics.ge կայքում:*

ԹԵՄԱ 5

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԹԵՄԱ 5

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նպատակները.

- Լրատվամիջոցների կարևորության, պատասխանատվության, իրավունքների և պարտականությունների ծանոթացում և վերլուծում:
- Լրատվամիջոցների դերի ծանոթացումը և վերլուծումը հասարակական ինքնակառավարման իրականացման մեջ:
- Լրատվամիջոցների հետ համագործակցության հնարավորությունների ծանոթացումը:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, գրիչներ, գրատախտակ, գունավոր մարկերներ:

Տևողությունը՝ երեք դաս:

ԴԱՍ 7

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտների հետ ժողովրդավարական հասարակությունում լրատվամիջոցների դերի մասին է զրուցում. ի՞նչ դեր ունեն լրատվամիջոցները, և ինչի՞ համար են դրանք անհրաժեշտ քաղաքացիներին և պետությանը: Մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ նա պարզում է, թե ինչ գիտեն աշակերտները լրատվամիջոցների մասին: Աշակերտները միևնույն ժամանակ պատասխանում են առաջին հարցին՝ ինչպիսի՞ն են այսօր վրացական լրատվամիջոցները:

Ծանոթություն. *Ցանկության դեպքում, դասարանական աշխատանքի տեսքով, ուսուցիչն աշակերտներին կանանց բռնության դեմ ուղղված տեսահոլովակ է ցուցադրում:*

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտներին պատմում է լրատվամիջոցների պատմության մասին և բացատրում այն ազդեցության դերը, որ կարող են ունենալ լրատվամիջոցները հասարակության վրա: Մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ նա պարզում է, թե

ինչ գիտեն աշակերտները Վրաստանում լրատվամիջոցների/մամուլի պատմության մասին: Մի քանի խմբի բաժանված աշակերտներին խնդրում է համացանցային տիրույթում տեղեկություններ հայթայթել առաջին վրացական լրագրի/վրացական մամուլի պատմության վերաբերյալ և այդ մասին շնորհանդես պատրաստել:

Ակտիվություն #3

Ուսուցիչն Աշակերտի գրքի համապատասխան ենթագլխում բերված տեղեկությունների հիման վրա լրատվամիջոցների մասնագիտական և էթիկայի չափորոշիչներն է ծանոթացնում աշակերտներին: Նույն ենթագլխի հարցերին պատասխանելու համար, բանավեճի մեթոդի կիրառմամբ, նա դասարանում սիմպոզիում է անցկացնում.

1. Ինչպե՞ս եք հասկանում լրատվամիջոցների ինքնակարգավորումը:
2. Ըստ ձեզ, արդյոք վրացական լրատվամիջոցները պահպանո՞ւմ են էթիկայի սկզբունքները:
3. Մտաբերե՛ք օրինակներ, երբ լրատվամիջոցների վարքագիծը ձեզ համար անընդունելի էր: Ըստ ձեզ՝ ի՞նչն էր դրա պատճառը:

Ակտիվություն #4

Մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ ուսուցիչը պարզում է, թե ինչ գիտեն աշակերտները լուրերի և լրագրողների աշխատանքի, ինչպես նաև՝ իրենց տարածաշրջանում/քաղաքում / մունիցիպալիտետում գործող լրատվամիջոցների մասին: Ուսուցիչն, ըստ Աշակերտի գրքում ներկայացված համապատասխան նյութի, աշակերտներին բացատրում է լուրերի ստեղծման սկզբունքները և խնդիրները: Աշակերտները հենց դասարանում պատասխանում են «Լուրերի» վերջում տրված հարցերին, սյունակով տրված արտահայտություններին և գնահատում դրանք՝ քննարկման մեթոդի կիրառմամբ:

ԴԱՍ 8

Ակտիվություն #1

Աշակերտները ներկայացնում են նախորդ դասին տրված առաջադրանքը՝ առաջին վրացական լրագրի և մամուլի պատմության մասին:

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտների հետ մեկ անգամ ևս մտաբերում է նախորդ դասի թեման՝ «Լուրերը», և մտավոր գրոհի միջոցով պարզում, թե ինչ են մտապահել աշակերտները: Նրանք դասարանում կատարում են **5.1** և **5.2 առաջադրանքները**: Եթե ուսուցիչը տեսնում է, որ աշակերտները դժվարանում են դասարանում կատարել **5.2 առաջադրանքը**, այն հանձնարարում է այն տանը ավարտել:

Ակտիվություն #3

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե ինչպիսին է լինելու հասարակությանը կողմնորոշված լրատվամիջոցը, տեղեկություններ է մատուցում Հանրային հեռարձակողի գոյության, նրա կարիքների և պարտավորությունների մասին: Աշակերտները դասարանում կատարում են **5.3 առաջադրանքը**: Մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ ուսուցիչը պարզում է, թե ինչ գիտեն նրանք Հանրային հեռարձակողի մասին, և որքանով է այն բավարարում անչափահասների հետաքրքրությունները: Հենց դասարանում ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արտահայտել կարծիք այն մասին, թե ինչ թեմաների մասին պատրաստված և ինչպիսի հաղորդումներ կկամենային դիտել վրացական հեռուստաալիքներով, հատկապես՝ Հանրային հեռուստատեսությամբ: **5.4 առաջադրանքը** ուսուցիչը հանձնարարում է՝ որպես տնային առաջադրանք:

ԴԱՍ 9

Ակտիվություն #1

Աշակերտի գրքում տրված նորությունների երեք տարբերակի մասին տնային առաջադրանքն աշակերտները ներկայացնում են խմբով, համառոտ՝ ըստ առաջադրանքի տակ տրված հարցերի: Կարևոր է, որ նրանք կարողանան վերլուծել լուրերի տրված տարբերակները, նաև պատասխանել հարցերին, թե ինչու է այս կամ այն տարբերակը կողմնակալ կամ լավ պատրաստված: Կարևոր է նաև, որ ուսուցիչն օգնի նրանց գիտակցել, թե որ դեպքում և ինչու չկարողացան լրատվամիջոցները պաշտպանել հասարակության շահերը և օգնել ինքնակառավարման իրականացմանը:

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտներին նախորդ դասի առաջադրանքն (**5.1**) է հիշեցնում և դրանում տրված հանդիպումը կամ այցը պլանավորում է նրանց հետ միասին: Միջոցառմանը հյուրին առաջադրվելիք հարցերն աշակերտները տանը պետք է պատրաստեն:

Ակտիվություն #3

Ուսուցիչն Աշակերտի գրքում տրված կոնկրետ օրինակների օգնությամբ աշակերտներին ծանոթացնում է լրատվամիջոցների հետ համագործակցության հնարավորությունները, մտավոր գրոհի միջոցով պարզում է, թե ինչ գիտեն աշակերտները սեփական իրավունքների մասին, և բացատրում է ՄԱԿ-ի՝ Երեխաների իրավունքների կոնվենցիայի այն հոդվածները, որոնք ներկայացված են Աշակերտի գրքում:

Ակտիվություն #4

Դասի վերջում ուսուցիչը ամփոփում է «Լրատվամիջոցներ» գլուխը և աշակերտներին հիշեցնում անցած նյութը, այնուհետև ծանոթացնում է լրատվամիջոցների տեղեկատվության մատուցման միջոցները, այդ թվում՝ մամլո ծանուցումը և մամլո հաղորդագրությունը:

ԹԵՄԱ 6

ԻՆՉՊԵ՞Ս ԻՐԱԿԱՆԱՑՆԵՆՔ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ԹԵՄԱ 6

ԻՆՉՊԵ՞Ս ԻՐԱԿԱՆԱՑՆԵՆՔ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Նպատակները.

- Հասարակական կարծիքի հարցման համար նախապատրաստություն և դրա անցկացում:
- Քաղաքացիների կարիքների և խնդիրների բացահայտման հմտությունների և կարողությունների ձեռքբերում:
- Ինքնակառավարման առջև դրված խնդրահարույց հարցերի վերաբերյալ շնորհանդեսների պատրաստում:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, գրիչներ:

Տևողությունը՝ երեք դաս:

ԴԱՍ 10

Ակտիվություն #1

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե, ըստ օրենքի, ինչպես է քաղաքացիների կողմից իրականացվում տեղական ինքնակառավարումը և ինչպես կարելի է ներգրավվել այդ գործընթացի մեջ: Մտավոր գրոհի մեթոդի կիրառմամբ և անցած նյութի վրա հիմնվելով՝ նա պարզում է, թե կոնկրետ ինչ հարցերի շուրջ են ցանկանում իրենք համագործակցել ինքնակառավարման հետ: Աշակերտները պետք է ծանոթանան **6.1 առաջադրանքում** բերված օրինակներին, նաև **6.2 առաջադրանքում** տրված «Տեղական ինքնակառավարման օրենսգրքի» համապատասխան հոդվածներին և պատասխանեն դասի տեքստում առաջադրված հարցին. «Տեղյա՞կ եք, ձեր մունիցիպալիտետում եղե՞լ է «Տեղական ինքնակառավարման օրենսգրքով» Վրաստանի քաղաքացիներին շնորհված որևէ իրավունքի կիրառման դեպք: Խնդրում ենք բերել օրինակներ»:

Ծանոթություն. *Նկատի՛ ունեցեք, պարտադիր չէ յուրաքանչյուր հոդված մանրամասնորեն ուսումնասիրել: Մասնակցության ձևաթղթերը (որի ընթացակարգերը առանձին հոդվածներում մանրամասնորեն բացատրված են), ցանկի տեսքով տրված են 85-րդ հոդվածի 4-րդ կետում:*

Ակտիվություն #2

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է, թե ինչ նշանակություն ունի հասարակական կարծիքի հետազոտումը, և աշակերտները ևս, ուսուցչի օգնությամբ, ըստ փուլերի, սկսում են առաջին գործնական առաջադրանքը կատարել: Նախագծի իրականացման փուլերը մանրամասնորեն նկարագրված են Աշակերտի գրքում: Աշակերտները դրանք կանցնեն 10-րդ, 11-րդ և 12-րդ դասերի ընթացքում:

Ծանոթություն. *Ուսուցիչն ուշադրությունն այն հանգամանքի վրա պետք է կենտրոնացնի, որ ինքնակառավարման գլխավոր նպատակը,* ***սեփական իրավազորությունների շրջանակներում,*** *հանդիսանում է քաղաքացիների հետաքրքրությունների բավարարումը: Համապատասխանաբար, քաղաքացիների ցանկությունների մասին պետք է իմանա ցանկացած լավ իշխանության:*

ԴԱՍ 11

Ակտիվություն #1

Ուսուցիչը, աշակերտների հետ քննարկման միջոցով, համառոտ անդրադառնում է նախագծի I, II և III փուլերի ժամանակ իրականացված հարցումների արդյունքներին և վերլուծությանը:

Աշակերտները հարցաշար են պատրաստում, որպեսզի իրենց բնակավայրում (քաղաքում/քաղաքային թաղամասում, ավանում, գյուղում) հարևանության, ընկերության շրջանում, դպրոցում անցկացնեն հասարակական կարծիքի հարցում՝ «Հասարակական և անձնական կարիքներ՝ ո՞ր հարցերի կամ հիմնախնդիրների կարգավորման մեջ է ինձ անհրաժեշտ սերտորեն համագործակցել ինքնակառավարման հետ» թեմայով (հարցաշարի նմուշը տե՛ս Աշակերտի գրքի #6 հավելվածում):

Ծանոթություն.

1. Հարցաշարը պատրաստվում է՝ ըստ հետևյալ փուլերի.

- *Հարցման նպատակների և խնդիրների սահմանում (հետազոտման նպատակն է քաղաքացիների այնպիսի կարիքների բացահայտումը, որոնց կարգավորումը հնարավոր է ինքնակառավարման հետ համագործակցությամբ):*
- *Որոշել հարցման տեսակը (աշակերտներն անձամբ կբաժանեն հարցվողներին հարցաշարերը կամ հեռախոսի միջոցով կկապվեն նրանց հետ):*
- *Գործառույթների բաշխում (ով կկազմի հարցաշարը, ով կանցկացնի հարցումը, ով կամփոփի արդյունքները, և ով կպատրաստի շնորհանդես հետազոտման արդյունքների մասին):*

2. Ուսուցիչն աշակերտների հետ պետք է սահմանի, թե քանի քաղաքացու հետ են անցկացնելու հարցում աշակերտները.

այդ թիվը կարող է տատանվել մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուրը: Չնախանշե՛ք ոչ իրատեսական ծրագրեր և չփորձե՛ք չափից ավելի շատ մարդկանց շրջանում անցկացնել հարցում:

3. *Հաջորդ դասը ուսուցիչը պետք է պլանավորի հարցումն անցկացնելուց հետո:*

ԴԱՍ 12

Ակտիվություն #1

Ուսուցիչը հարցման արդյունքներն ամփոփում է աշակերտների հետ: Այնուհետև աշակերտներն ընտրում են, թե ինչ հարցերի մասին կպատրաստեն շնորհանդեսներ: Դրա համար ցանկալի է քննարկումներ անցկացնել և այդ միջոցով ընտրել այն հարցերը, որոնք այնուհետև աշակերտները կառաջադրեն տեղական ինքնակառավարման ներկայացուցչին:

Ծանոթություն.

1. *Շնորհանդեսները պետք է վերաբերեն ինքնակառավարման մեջ առկա որևէ կոնկրետ խնդրի (վատ ներքին ճանապարհներ, աղբահանություն, ջրամատակարարման համակարգում առկա հիմնախնդիրներ):*
2. *Դրանցում պետք է երևան հարցված քաղաքացիների ցանկությունները և իշխանության հանդեպ արտահայտված կոնկրետ կարծիքները կամ երաշխավորությունները:*

Ակտիվություն #2

Գերակա հարցի/հարցերի շնորհանդեսի ուրվագիծն աշակերտները միասին են պատրաստում. պլանավորում են, թե ով և ինչ տեսքով կներկայացնի այս հարցերը, բանավեճի մեթոդի կիրառմամբ ընտրվում է մի քանի լավագույն շնորհանդես: Այնուհետև ուսուցիչը դերերը բաժանում է աշակերտներին՝ ով ինչ պետք է անի ինքնակառավարման ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ: Դերային խաղի կամ իրավիճակի մոդելավորման մեթոդների նախատեսմամբ, դասարանում կազմակերպվում է մոդելավորված հանդիպում, որպեսզի իրական հանդիպման ժամանակ բոլորը ճշգրիտ կերպով իմանան իրենց գործառույթը և խուսափեն որևէ տիպի անճշտությունից կամ թյուրիմացությունից:

Ծանոթություն. *Ուսուցիչն ուշադրություն պետք է դարձնի շնորհանդեսների ծավալին: Եթե ներկայացված լինի մի քանի շնորհանդես, յուրաքանչյուրին կարելի է մի քանի րոպե տրամադրել: Ընդհանրապես, ընդունված է, որ* ***դասական շնորհանդեսի տևողությունը 15-20 րոպե է,*** *ինչից հետո ճշգրտող հարց-պատասխանի ձևաչափով բանավեճ է ծավալվում: Ցանկալի է, որ շնորհանդեսները և բանավեճը, առավելագույնը,* ***1-1,5 ժամ շարունակվեն,*** *որպեսզի ունկնդիրները չգերհոգնեն և տեղեկատվությունը մինչև վերջ պատշաճ կերպով ընկալելի լինի:*

Ակտիվություն #3

Նրանից հետո, երբ կընտրվի, թե ինչ հարցերի վերաբերյալ կպատրաստվի շնորհանդեսը (շնորհանդեսները), աշակերտներն ուսուցչի օգնությամբ պաշտոնական նամակ պետք է պատրաստեն և ինքնակառավարման ներկայացուցչին հրավիրեն հանդիպման: Հանդիպումը կարող է անցկացվել դպրոցում կամ ավագանիում (այս նպատակով կարելի է օգտագործել Աշակերտի գրքի **Հավելված 3**-ում տրված կոլեկտիվ նամակի նմուշը):

Ծանոթություն. *Այն դեպքում, եթե չի հաջողվում հրավիրել ինքնակառավարման ներկայացուցչին.*

- *Կարելի է հանդիպում անցկացնել հասարակական խորհրդականների խորհրդի ներկայացուցիչների հետ, որոնք հնարավորություն ունեն քաղաքապետին տրամադրել կոնկրետ առաջարկություններ:*
- *Եվս մեկ հնարավորություն է բնակավայրի ընդհանուր ժողովի նախաձեռնողներին կամ ընտրյալին հրավիրելը (այն բնակավայրում, որտեղ այս կառուցվածքն արդեն գոյություն ունի):*

Ծանոթություն. *Եթե ուսուցիչը 12-րդ դասի ընթացքում չի հասցնում ստուգել շնորհանդեսները, ցանկության դեպքում, կարող է լրացուցիչ դաս տրամադրել դրան:*

ԴԱՍ 13

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նպատակներ.

- Ինքնակառավարման ներկայացուցիչների հետ հանդիպման կազմակերպում:
- Տեղական ինքնակառավարման հետ համագործակցության կոնկրետ ուղիների նախանշում:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, գրիչներ, հնարավորությունների շրջանակներում ցանկալի է նաև պրոյեկտորի օգտագործումը:

Տևողությունը՝ մեկ դաս:

Ակտիվություն #1

Ինքնակառավարման ներկայացուցչի/ներկայացուցիչների հետ հանդիպումը կծավալվի շնորհանդեսների և մտքերի փոխանակման ձևաչափով:

1. Աշակերտները շնորհանդեսների տեսքով ներկայացնում են իրենց առաջարկությունները ինքնակառավարման իշխանության մարմիններին:

2. Ինքնակառավարման ներկայացուցիչներն այս հարցերի հետ կապված իրենց վերաբերմունքն են ծանոթացնում աշակերտներին (ի՞նչ է արդեն պլանավորված, ի՞նչ է պլանավորվում, ի՞նչը չի կարող իրականացվել և ինչո՞ւ):
3. Աշակերտներն իրենց հետաքրքրող հարցերի մասին տեղեկատվություն կստանան հարց-պատասխանի ձևաչափով:

Հիշե՛ք. Կարող է պարզվել, որ հիմնախնդրի պատճառներից մեկը հենց ինքնակառավարման կողմից պասիվությունը կամ համագործակցությունից հրաժարվելն է: Եթե այս պահի համար աշակերտներն արդեն գիտեն, թե ինչ է ինքնակառավարման գործառույթը և, որպես քաղաքացիներ, նրանցից ինչ պահանջելու իրավունք ունեն, կփորձեն կատարել իրենց գործառույթները և ինքնակառավարման ներկայացուցիչներից ավելի ակտիվ, և, որ ամենակարևորն է, օրինական ճանապարհով կպահանջեն կատարել դրանք:

Ծանոթություն. *Հանդիպման կարևորագույն նպատակ է հանդիսանում ոչ թե կոնկրետ հարցի վճռումը, այլ աշակերտներին ցույց տալը, թե ինչպես պետք է օգտագործենք Օրենսդրությամբ շնորհված իրավունքները:*

ԴԱՍ 14

ՆԱԽԱԳԾԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Նպատակներ.
Կրթական ծրագրի ամփոփում, այս կամ այն ակնկալիքի և արդյունքի համեմատում:

Անհրաժեշտ ռեսուրսներ՝ դասագիրք, աշխատանքային տետր, գրիչներ:
Տևողությունը՝ մեկ դաս:

Ակտիվություն #1

Դասի ժամանակ ծավալե՛ք մտքերի փոխանակում և հարցրե՛ք աշակերտներին, թե ինչ հետևանք ունեցան նրանց կողմից իրականացված ակտիվությունները: Գո՞հ են արդյոք հանդիպման արդյունքներից: Կոնկրետացնեն, թե ինչ սպասումներ ունեին, և արդարացա՞ն արդյոք դրանք: Ընդհանուր առմամբ արդյունքն ինչպիսին է՝ բավարար, թե՞ անբավարար: Ինչ են կարծում, ինչո՞ւ ստացան այսպիսի արդյունք: Կցանկանայի՞ն արդյոք հետագայում ևս համագործակցել տեղական ինքնակառավարման հետ:

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Իլյա Ճավճավաձե

Բնությունը որքան էլ հարստությամբ զարդարի որևէ երկրամաս կամ երկիր, որքան էլ լավ կլիմա պարգևի մարդուն ապրելու, և արգավանդ հող՝ ապրուստի համար, միևնույն է, մարդկանց բարեկեցությունն այլ կողմից ևս աջակցության կարիք ունի: Մարդուն բավականաչափ չի կարողանա օգնել ո՛չ օդի մաքրությունը, ո՛չ հողի արգավանդությունը, ո՛չ ամեն ինչ անելու կարողությունը, եթե մարդկանց միջև բարյացակամորեն սահմանված և հստակ որոշված չեն փոխադարձ իրավունքները և պարտականությունները: Մարդկանց գոհունակության, ժողովուրդների բարեկեցության համար վերջինս ավելի անհրաժեշտ պայման է, քան երկրագնդի վրա որևէ այլ բան:

Շոտլանդացի լեռնեցին շրջապատված է ինքնամփոփ, աղքատ, ոչ արգավանդ բնությամբ: Նա ժրաջան և վաստակած աշխատանքի արդյունքում է բնությունից ստանում այն մի պատառ հացը, որ տալիս է իր ընտանիքին՝ ապրուստի համար: Նա անձնուրացաբար, իրեն չխնայելով օր ու գիշեր պայքարում է բնության դեմ, և այս ճանապարհով ձեռք բերած ամեն մի կտոր հացը նրա ջանքերի ու աշխատասիրության արգասիքն է: Անկախ նրանից, որ այսպես է մթնում և լուսանում նրա օրը, նա ավելի երջանիկ է և բավարարված, քան պարսիկը, ում ճակատագիրը պարգևել է ավելի լավ երկիր՝ ապրելու և գոյությունը պահպանելու համար: Մեկն ամբարտավան է, համարձակ, ազատ, վճռական, իսկ մյուսը՝ ինքնամփոփ, ուժասպառ, խրտնած ու ոտնահարված: Մեկը հույսով լի առաջ է նայում, և յուրաքանչյուր քայլը նրան տանում է դեպի վաղվա անպարտելիություն, երկրորդը՝ վհատ է, անընդհատ վախով հետ է նայում և երեկվա, խաղաղ անցկացված օրն է երազում՝ չհավատալով վաղվա օրվան: Մեկը հոգով և մարմնով ամեն օր հաջողության մեջ է, թեպետ աղքատ բնությամբ է շրջապատված, երկրորդը և՛ հոգով, և՛ մարմնով սպառվում է, թեպետ նրա շուրջ բնությունն առատ է ու հարուստ: Ի՞նչն է դրա պատճառը: Այն, որ երջանիկ շոտլանդացին գիտի. «Իմն այստեղ ավարտվում է, և ուրիշինն այստեղ է սկսվում», իսկ դժբախտ պարսիկը ո՛չ իրենն է հասկանում, ո՛չ էլ ուրիշինը: Ինչն ուրիշինն է՝ իմ պարտականությունն է, ինչն իմն է՝ դա իմ իրավունքն է:

Իրավունքը և պարտականությունը, որոնք փոխադարձ տրամադրվածության առաջին և վերջին առարկաներն են, որոշվում և սահմանվում են միայն ժողովրդի օրենսդրության ուժով և ընդունակությամբ: Այս առումով, իհարկե, հիմք ունեն նրանք, ովքեր ասում են, որ գործող օրենքների լավ կամ վատ լինելը իր՝ ժողովրդի մեղքն է, որովհետև օրենքների սկիզբն ու վերջը ինքը՝ ժողովուրդն է: Որքանով ընդունելի է այդ հիմունքը, մենք չենք սկսի դա հետաքննել: Մենք միայն ուզում էինք ասել՝ որքան էլ հարուստ լինի երկիրն իր բնությամբ, եթե այնտեղ կա իմը և քոնը, այսինքն՝ դժվար է տարբերակել մարդկանց իրավունքն ու պարտականությունը և համընդհանուր հստակ սահմանված չէ, այնտեղ մարդկանց հաջողությունը և բարեկեցությունը եթե ամեն օր չեն նահանջում, անպայման խափանված են: Դրա օրինակը հենց մեր երկիրն է: Հապա մի ասեք, ի՞նչ չի տվել Աստված մեզ երջանկության համար: Ամեն ինչ ունենք առատորեն, միայն չունենք փոխադարձ տրամադրվածություն ...

Յուրաքանչյուր պետություն, գոնե այս կամ այն չափով կարգի եկած, մասերի է բաժանված, որ հեշտ լինի նրան տերություն անելը և նրա մասին հոգ տանելը...

Երկրագնդի վրա կառավարումը երկու տիպի կարգ և կառուցվածք է ունեցել և ունի: Եթե որևէ տեղ որևէ փոփոխություն կա, ուրեմն հնարավոր չէ, որ կառավարումը կամ դեպի մեկը, կամ դեպի մյուսը չլինի հակված: Կառավարման մի տեսակն այն է, երբ և՛ պետության, և՛ հասարակության համար անհրաժեշտ գործերը ինքը՝ կառավարությունն է տնօրինում ամեն տեղ և ամեն մասում: Այս դեպքում կառավարությունը բոլոր գործերի նախաձեռնողը և ղեկավարն է, ամեն տեսակ գործ անողը, ամեն ինչի մասին հոգացողը և վարողը, այնպես որ, ամեն ինչ նրանից է սկսվում և ամեն ինչ հենց նրան էլ հանգում է: Այսպիսի կառավարման համար նա ունի իր սեփական պաշտոնավոր մարդկանց խումբը, որոնց ինքն է ընտրում, ինքը նշանակում, ինքն ազատում, և որոնք միայն նրա նկատմամբ են պատասխանատու: Այսպիսի կառավարումը կենտրոնացում է կոչվում:

Երկրորդ տիպի կառավարումն այն է, երբ կառավարության ձեռքում են միայն ամբողջ պետական նշանակության գործերը, իսկ մնացած բոլորը հասարակության ձեռքում են, այն էլ այնպես, որ ամեն մաս ունի իր տեղական գործերը՝ ամբողջությամբ իրեն վստահված: Այս հասարակական անհրաժեշտության գործերը, բաշխված տեղական մարմինների վրա, անպայման տնօրինվում են տեղական պաշտոնավորների միջոցով, որոնց ընտրում է հենց տեղի բնակիչների հասարակությունը, և որոնք պատասխանատու են նույն հասարակության նկատմամբ: Այսպիսի կառավարումը կոչում են ինքնակառավարում (ապակենտրոնացում), քանի որ այս դեպքում միևնույն պետության յուրաքանչյուր մաս իր սեփական գործն է տնօրինում, ինքը տերություն անում, և ինքը կառավարում: Մի խոսքով, այսպիսի կառավարման հիմնական էությունն այն է, որ տեղական գործերը պետք է հենց տեղի բնակիչների կողմից կառավարվեն:

Այսպիսի կառավարումն ավելի է նպաստում երկրի բարեկեցությանը. ժողովրդին զգոնացնում է, բացում նրա խելքն ու գիտակցությունը, քանի որ արթնացնում է հասարակական հոգածության համար պատրաստակամությունը և նրան վարժում հասարակական գործերի համար: Նման կառավարումն այնպիսի հատկություն ունի, որ մարդը, որտեղ էլ կամենա, ամենուրեք և ամեն տեսակ մարդկանց մեջ կկատարի իր գործը և կստանա իր պտուղը: Այնտեղ, որտեղ այդպիսի կառավարումը ճանապարհ և տեղ է ունեցել, ամենուրեք մարդը ծաղկեցրել է կյանքը և թեթևացրել պետության համար կառավարման ծանր բեռը:

Մի գրող ասել է. «Պատմությունն ապացուցում է, որ ինքնակառավարումը ամենալավ դեղն է ժողովրդի բոլոր տեսակի կարիքների դեմ, որտեղ էլ տնկեք այն, աճում է՝ և՛ Անգլիայում, որտեղ միշտ կարգերի հիմքը ազնվականությունն է եղել, և՛ Ամերիկայում, որտեղ անսահման ազատությունն է ընդունված՝ որպես պետության անկյունաքար: Միանման բարիքով և երախտապարտությամբ է գործում և տեղ ունի նա և՛ այնպիսի փոքրիկ երկրում, ինչպիսին Շվեյցարիան է (739 քառակուսի միլ է), և՛ այնտեղ, որտեղ այնպիսի անծայրածիր անբնակ դաշտեր են, ինչպիսին Հյուսիսային Ամերիկան է, նաև այնտեղ է բարյացակամ և յուրացված, որտեղ այնպիսի հեղինակավոր քաղաքակրթություն է, ինչպիսին Լոնդոնում է, և՛ այնտեղ, որտեղ այնպիսի անգրագետ ժողովուրդներ են, ինչպիսիք Կանադայում, Ավստրալիայում և Անգլիայի մյուս գաղութներում են»:

Չնայած այսպես է, սակայն այդ ինքնակառավարումը երկրագնդի վրա շատ թշնամիներ ունի, շատերին անտեղի զրկում է քնից և հանգստից: Ասում են, որ վտանգավոր է հասարակությանն այդ իրավունքը շնորհելը. կսկսվի խառնաշփոթ, որը կտարածվի և դուրս կգա ենթակայությունից:

Երբ Պրուսիան Ֆրանսիայից խլեց Էլզասը և Լոթարինգիան, և Խորհրդարանում սկսեցին քննարկել, թե ինչ տիպի կառավարում տան այդ նորազավթ երկրներին, ահա թե ինչ ասաց Բիսմարկը. «Մեր գործը Էլզասում և Լոթարինգիայում պետք է լինի ինքնակառավարման հզորացումը: Պետք է տեղական հասարակության ժողովներ հիմնենք՝ տեղական կառավարման համար: Այդ ժողովներից ավելի լավ կիմանանք այդ երկրների կարիքները, քան պրուսական ծառայողներից: Տեղի բնակիչներից ընտրված և նշանակված ծառայողներից մեզ ոչ մի վտանգ չի սպառնում: Մեր կողմից նշանակված

ծառայողը նրանց համար օտար մարդ կլինի և օտար մարդու թեկուզ մեկ ոչ ճիշտ վարմունքը կարող է դժգոհություն առաջացնել, և դա չի համապատասխանում Կառավարության մտահղացմանն ու ցանկությանը: Ես կարծում եմ, որ նրանցից ընտրված ծառայողներն ավելի պակաս վնաս կտան, քան մեր իսկ՝ պրուսական ծառայողները»:

Եթե այնպիսի մարդը, ինչպիսին Բիսմարկն էր, որն ազատության այնքան էլ մեծ կողմնակից չէր, ջանք չէր խնայում ինքնակառավարման պաշտպանության համար, նույնիսկ այն երկրների մասին, որոնք ոչ թե ցանկանում էին հպատակվել Գերմանիային, այլ իրենց վայել չէին համարում դա, եթե այսպիսի երկաթյա սրտի և աջի տեր մարդը, ինչպիսին Բիսմարկն էր, այլ կերպ չէր կարողանում շահել անհնազանդ ժողովրդի սիրտը, եթե ոչ՝ ինքնակառավարման շնորհմամբ, ուրիշ էլ ինչ ասենք:

Այս ինքնակառավարման սահմանման համար դժվարն այն չափը գտնելն է, որով սովորաբար ընդհանուր պետական կարիքների գործերը վերագրվում են պետության կառավարմանը, իսկ հասարակականները՝ տեղական հասարակությանը: Դժվար է գտնել իսկական սահմանն այս երկուսի միջև, քանի որ նույնիսկ բնությամբ այս երկու կարիքների թելերը կապված և միահյուսված են իրար եթե ոչ ամեն ինչում, ապա գոնե շատ բաներում: Սակայն ինքնակառավարումը գովելու համար գոնե պետք է ասենք, որ այստեղ չափն անցնելը եթե օգուտ չի բերում, ապա նրան այնպիսի վնաս չի հետևում, ինչպես այն դեպքում, երբ պետությունը՝ կառավարությունը, գերազանցված չափով է կյանքում տեղ զբաղեցնում...

Տեղական ինքնակառավարումը և գերագույն կառավարությունը ոչ միևնույնն են, ոչ էլ՝ միմյանց հակասող և միմյանց հետ մրցակցող: Միևնույն երկրում, միևնույն պետության մեջ խաղաղ համագոյակցում են նրանք և գործում՝ ի շահ մեկը մյուսի...

Յուրաքանչյուր պետություն, թեկուզ ազգությամբ և ծագումով նույն ժողովրդից լինի բաղկացած, միևնույն է, տեղական տարբերության պատճառով, տարբեր հատկանիշ ունեցող երկրամասեր է ներկայացնում մեզ: Միևնույն պետության յուրաքանչյուր երկրամաս, յուրաքանչյուր մաս իր վիշտը, ցավն ու ուրախությունն ունի, սեփական նեղությամբ տառապում, սեփական հոգսը և մտածմունքն է ծանրացնում նրա հոգին, սեփական երազանքն է սթափեցնում, իր կողմ ձգում: Գերագույն իշխանության անմիջական նշանակման իմաստն այն է, որ ամեն հպատակի ցավը հասկանա, նրան համապատասխանաբար դարմանի, յուրաքանչյուրի համար բացի բարիքի և բարեկեցության ճանապարհը: Դրա համար անհրաժեշտ է, որ գերագույն կառավարությունը անկեղծ, անաչառ, ճշտորեն գիտենա ամեն կողմի իսկական իրավիճակը, նրա լավն ու վատը, որպեսզի որտեղ հնարավոր է օգնել, օգնի, սատարի: *Պարզ է, որ գերագույն կառավարությունն ինքը, առանց ուրիշի օգնության չի կարող ոչ տեսնել, թե ինչ է կատարվում ամենուր, ոչ էլ ականջ դնել այնտեղ տեղի ունեցողին, ձեռքն էլ չի հասնի ամենուր, որ օգնի: Պարզ է, որ դրա համար նա պետք է ունենա ծառայողներ, ամենուր սփռված և պայման կապած, այսինքն՝ այդ ծառայությունը պետք է հանձնի տեղի բնակիչներին, վստահի նրանց: Առաջին միջոցը ոչ մի տեղ չարդարացրեց իրեն, քանի որ ուրիշի ձեռքով գործ անելը ո՛չ մի տեղ և ո՛չ մի բանում իրեն չի արդարացրել: Սո՛ւտ է, ուրիշի սիրտն ինձ համար այնպես չի ցավի, ինչպես իմը, ուրիշն իմ լավն ու վատը ինձ նման չի իմանա, իմ ցավն ինձ նման չի դարմանի, իմ բողոքն ինձ նման չի արտահայտի, որքան ես գիտեմ իմը, ուրիշն իր օրում չի իմանա այդքան: Դա ամեն տեղ այդպես ճանաչեցին, և այդ պատճառով էլ այդ միջոցը համարյա ամենուր հավանության չարժանացավ և մերժվեց:*

Բոլորովին այլ է, երբ գերագույն կառավարությունը, որպես իր դիտորդ, ծառայող և տեղական գործերի վարիչ, նշանակում է տեղի բնակիչներին: Նրանք ավելի լավ գիտեն իրենց վիճակը, ավելի լավ գիտեն իրենց կարիքները, ավելի լավ կարող են իրենց խնամել, տերություն անել իրենց գործերին: Այս դեպքում, մի կողմից՝ ամեն կողմի իսկական

կարիքները, ցավը, անկեղծ և ճշմարիտ նկրտումները հասնում են կառավարությանը, մյուս կողմից՝ գերագույն կառավարության ընդհանուր հոգածությունը միատեսակ սրտացավությամբ, միևնույն շնորհով հասցվում է յուրաքանչյուր երկրամաս, հարմարեցվում նրան և սփռվում այնտեղ:

Այստեղից պարզ է դառնում, թե որտեղ պետք է անցնի սահմանը գերագույն կառավարության և ինքնակառավարման միջև: Գերագույն կառավարությունը, ինչպիսին էլ այն լինի, համընդհանուր գործերի մասին հոգ տանողն ու արարողն է, այսինքն՝ այն գործերի ոչ միայն յուրաքանչյուր մասի, այլև յուրաքանչյուր հպատակի (վրացահպատակի, վրաց պետության հպատակի) միանման և միաբնույթ կվերաբերի և որոնք ընդհանուր, համընդհանուր բարեկեցությանը հայտնի են:

Նման գործերը պատկանում են համընդհանուր օրենսդրության վարույթի, համընդհանուր ֆինանսների (մուտք-ելք) շարժմանը և համընդհանուր բանակ ունենալուն: Այս ամենն անձեռնմխելի պատկանելությունն են գերագույն կառավարության, և ինքնակառավարումը, որպես մասնավոր վարչություն, այս գործերի մեջ ձայն չունի, նա ենթարկվում է այն ամենին, ինչը տնօրինվում, դասավորվում և սահմանվում է գերագույն կառավարությունից: Ինքնակառավարումն այս դեպքում ստորակարգն է գերագույն կառավարության և ընդհանուր օրենքի պահապանը և կատարողն է տեղում:

Այն, ինչը պետական ընդհանուր իրավիճակին չի պատկանում, **ինքնակառավարման** անվիճելի պատկանելությունն է: Ինքնակառավարումն իր տեղում բոլոր տնային գործերի տնօրինողն է և սատարողը, բոլոր ընդհանուր պետական ծախսերը և աշխատանքը տեղի բնակիչների միջև բաշխողը, տեղի հասարակության կարգ ու կանոնը դասավորողը, նրա բարոյականության, պատվի, գույքի, կրթության, ընդհանրապես, բարեկեցության մասին հոգացողը: Այս ամենը կատարողն է այնչափ, որչափ որ այն վերաբերում է իր վարչության շրջանակում բնակվողներին մասնավորեցված և չի հակասում ընդհանուր պետական օրենքին և կարգադրությանը: Այստեղից երևում է, որ ինքնակառավարումը մի կողմից տեղական գործերը դասավորողն է և կարգավորողը, մյուս կողմից՝ գերագույն կառավարության իշխանական մարմին է: *Այս տեսքով նա միևնույն ժամանակ տեղական հասարակության մարմին է գերագույն կառավարության առջև, և տեղական հասարակության առջև՝ գերագույն կառավարության մարմին:*

Պարզ է, որ ինչպիսին էլ լինի գերագույն կառավարությունը՝ ինքնակալական, միապետական ներկայացուցչական, թե հանրապետական տիպի, և՛ առաջինում, և՛ երկրորդում, և՛ երրորդում ինքնակառավարումը խաղաղ կհարմարվի հասարակական կարգին, ոչ թե կխանգարի, այլ կօժանդակի, քանի որ տեղական հասարակության ցավը տեսնում է, և միևնույն ժամանակ գերագույն կառավարության լավագույն աչքն ու ձեռքն է՝ հասած ամեն երկրամաս:

Ինքնակառավարումը... վաղուց գործում է նաև Անգլիայում, որտեղ միապետական ներկայացուցչական տիպի կառավարում է, և նաև Հյուսիսային Ամերիկայում, որտեղ հանրապետական կառավարում է: Այս օրինակները հստակորեն ցույց են տալիս, որ ինքնակառավարումը կախված չէ գերագույն կառավարության տարատեսակությունից, որ այն բոլոր տեսակի գերագույն կառավարություններին կարող է հարմարվել:

Որպեսզի ինքնակառավարումն իր սովորական պտուղն ունենա և ինքն իրեն չդավաճանի, պետք է կազմակերպված և ներդրված լինի իրեն համապատասխան: Այս կազմակերպման մեջ նրա ոչ մի էական բաղադրիչ մաս չպետք է մոռացվի: Եթե մարդ զգուշություն հանդես չբերի, ինքնակառավարումն ավելի սին խոսք կլինի, ավելի անուն, քան օգուտ...

Ինքնակառավարման կարևորագույն հիմքերն են.

1. Ձայնը և ընտրելու իրավունքը պետք է շնորհվի յուրաքանչյուր տեղական բնակչի, ով չափահաս է: Այսպիսով, յուրաքանչյուր պարտականության մեջ պետք է լինի յուրաքանչյուր բնակչի մասնաբաժինը:
2. Տեղական վարչության ստորադրյալներ պետք է լինեն բոլորը, ովքեր ապրում են վարչության սահմաններում: Այստեղ, ինչպես առաջին դեպքում, կոչումների միջև բաժանում և սահմանազատում դնելը վնասակար է և հակասում է ինքնակառավարման էությանը:
3. Տեղական դատավորները, նաև ծառայողները պետք է ընտրվեն տեղական բնակիչներից:
4. Յուրաքանչյուր տեղական պաշտոնատար անձ պատասխանատու պետք է լինի հասարակական իրավունքի և օրենքի, այլ ոչ թե իր ղեկավարների նկատմամբ:

... Մեզանում հաճախակի են հանդիպում փոքրիկ-փոքրիկ գյուղեր: Երբեմն այդպիսի փոքրիկ գյուղերն այնպիսի թշնամանք և վեճ ունեն կալվածքների համար, կամ միմյանց միջև, կամ մեծ գյուղերի հետ, որ դրանց միացումը կրակի և ջրի միացում կլինի՝ միմյանց լրացնելու համար: Այսպես եղավ շատ տեղերում, որովհետև միմյանց մոտ լինելու ուժով կատարեցին միացումը և ականջալուր չեղան տեղական այլ իրավիճակների, որոնք իմացողները, ինչպես ձեզ հայտնի է, մեզանում շատ քիչ կան պետական ծառայողների թվում: Այսօր ևս մեզանում շատ են նման խախտված գյուղական հասարակությունները, և մինչև այս պահը ոչ ոք չի հայտնվել, որ լսի այդ և դարմանի: Թեկուզ այդպես էլ չլինի՝ որքան փոքրիկ գյուղեր են գրված մեծ գյուղերի վրա և նրա կողմից ճնշված, քանի որ փոքրիկ գյուղի ձայնը ընդհանուրի մեջ «ձայն բարբառո անապատի» է, և ոչ մի այլ բան: Ի՞նչ կարող է անել շատի դեմ քիչը: Փոքրիկ գյուղերի համար դժվարություն է նաև այն, որ եթե շատ էլ ցանկանան առանձին լինել, չեն կարողանա, քանի որ կանոնադրությունը նրանց պարտավորեցնում է ունենալ պետական ծառայողներ .... այսքան ծառայողին ինչպե՞ս կարող է յոլա տանել փոքրիկ գյուղը:

...Մենք կարծում ենք, այն, ինչ ասացինք, դա էլ էր բավական փաստաթուղթ, որ վերանայվի այս հարցի վերաբերյալ ամեն տեսակ օրենսդրություն, եթե որևէ մեկի համար ցանկալի է գյուղի բարեկեցությունը: Իսկ ո՞ւմ համար դա ցանկալի չպիտի լինի: Փաստ է, որ միայն գյուղը, որպես վերջին օղակ բարդ շղթայի, չի կարող պահել ինքնակառավարում, եթե միայն գյուղում սկսվի, հենց գյուղում էլ կդադարի: Գյուղին գավառը կհետևի, գավառին՝ նահանգը...

...Այժմ ասենք, որ մեր ժողովուրդն իսկապես անպատրաստ է: Ուրեմն՝ ինչ, ով անպատրաստ է, մինչև կյանքի վերջ այլևս չպիտի՞ պատրաստվի: Ի՞նչն է պատրաստում ժողովրդին: Սովորելը, վարժվելը, փորձը, այն գործին տեղյակ պահելը, ինչին անհրաժեշտ է պատրաստվել: Մարդու ձեռ ու ոտը կապում եք և ասում՝ սովորիր մաքառել, ժողովրդին դատավոր ընտրելու կամք չենք տալիս, սակայն ասում ենք՝ սովորի՛ր լավ դատավորներին տարբերել: Սա նման է նրան, թե՝ սովորի՛ր լող տալ, սակայն ջուրը մի՛ մտիր, ճանապա՛րհ անցիր, սակայն տնից ոտքդ դուրս մի՛ դիր: Այս հրաշքը ժողովուրդը չի կարող կատարել... Ժողովրդին անպայման անհրաժեշտ է, որ իր ամենօրյա մանր գործերի համար, որքան հնարավոր է մոտակայքում, ունենա հաշտարար դատավոր...

ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 2

Վրաստանի օրգանական օրենք
Տեղական ինքնակառավարման օրենսգիրք
(2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ)

Տեղական ինքնակառավարման օրենսգիրքը միավորել է ինքնակառավարման բնագավառում գոյություն ունեցած մի շարք օրենքներ և կատարել մի շարք դրույթների կանոնակարգում: Համապատասխանաբար, կատարվել է ինքնակառավարման բնագավառի կանոնակարգող օրենսդրական ակտերի համախմբում: Դրանով է բացատրվում «Տեղական ինքնակառավարման օրենսգրքի» համեմատաբար մեծ ծավալը:

Ձևաչափի սահմանափակ լինելու պատճառով, նպատակահարմար չենք գտել լրիվ տեքստի հրապարակումը: Ամբողջական տարբերակը կարող եք տեսնել Վրաստանի Օրենսդրական տեղեկատուի կայքում՝ https://matsne.gov.ge/index.php?option=com_ldmssearch&view=docView&id=2244429&lang=ge:

Ստորև տրված է.

- Տեղական ինքնակառավարման օրենսգրքի համառոտ նկարագիրը:
- Օրենսգրքի բաժինների, գլուխների, հոդվածների ցանկը:
- Օրենսգրքի այն հոդվածների ընդլայնված քաղվածքը, որը վերաբերում է օժանդակ ձեռնարկում տրված հարցերին:

Հուսով ենք, որ նման կառուցվածքը կօժանդակի ուսուցչին քննարկվելիք հարցերում ճիշտ կողմնորոշման համար:

1. Տեղական ինքնակառավարման օրենսգրքի կառուցվածքի համառոտ նկարագրություն

Օրենսգիրքը բաղկացած է 8 բաժիններից, 21 գլուխներից և 184 հոդվածներից, նրանում քննարկված են.

Բաժին I - Տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքները՝ հիմնական էությունը և նպատակները

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ - Ինչին է վերաբերում օրենքը, ինչ է իրենից ներկայացնում ինքնակառավարումը, ինչ տարածքներում է իրականացվում այն, և ինչ բնութագրիչներ և գործունեության երաշխիքներ ունի այն:

Գլուխ 2. Վարչատարածքային կազմակերպման հարցեր - բաժանման ճանապարհով նոր մունիցիպալիտետների առաջացման, մունիցիպալիտետների միավորման, սահմանների փոփոխման և այլ համապատասխան փոփոխությունները կարգավորող նորմեր:

Գլուխ 3. Լիազորություններ - Ինքնակառավարման սեփական և պատգամված (կենտրոնից փոխանցված) լիազորություններ, հնարավոր համագործակցության մեխանիզմները:

Բաժին II - Մունիցիպալիտետի մարմինները՝ ո՞վ, ո՞ր կառույցներն են իրականացնում այդ գործունեությունը:

Գլուխ 4. Ներկայացուցչական մարմնի՝ ավագանու իրավունքները, գործունեության կարգը, կառուցվածքը (ինստիտուտներ), պաշտոնատար անձինք, նրանց ընտրելու, գործունեության և հաշվետվողականության կարգը:

Գլուխ 5. Գործադիր մարմիններ՝ քաղաքապետ, քաղաքապետարանի կարգավիճակը, կառուցվածքը, լիազորությունները, գործունեության, ընտրելու և վերընտրելու կարգը:

Գլուխ 6. Ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերի կառուցվածքը և նշանակումը:

Բաժին III - Թբիլիսիի ինքնակառավարումը՝ ինչո՞վ է տարբերվում Թբիլիսիի ինքնակառավարումը մյուսներից:

Գլուխ 7. Թբիլիսիի կարգավիճակը, լրացուցիչ իրավունքները, մարմինները, վարչական բաժանումը:

Գլուխ 8. Թբիլիսիի ավագանին՝ Գլուխ 4-ի նման կառուցվածքով նկարագրում է Թբիլիսիի ավագանին:

Գլուխ 9. Թբիլիսիի քաղաքապետարանը՝ ինչ տարբեր կարգավիճակ և լրացուցիչ իրավունքներ և պարտականություններ ունի Թբիլիսիի քաղաքապետը և քաղաքապետարանը՝ ի տարբերություն գլուխ 5-ում նկարագրված կառուցվածքների:

Գլուխ 10. Թբիլիսիի տարածքային միավորների՝ շրջանների կառուցվածքը և գործունեության կարգը:

Բաժին IV - Քաղաքացիների մասնակցության ձևերը՝ ներգրավվածության ի՞նչ մեխանիզմներ ունեն քաղաքացիները:

Գլուխ 11. Ներգրավվածության երաշխիքները և ինքնակառավարումների պարտավորությունները, բնակավայրի ընդհանուր ժողով, քաղաքացիական խորհրդա-կանների խորհուրդ, խնդրագրի ներկայացումը, ինքնակառավարման գործունեության թափանցիկության այլ ձևեր:

Բաժին V - Ինքնակառավարումների բյուջեն և տնտեսական հիմունքները՝ եկամուտներ, ծախսեր և դրանց կանոնակարգումը:

Գլուխ 12. Բյուջե՝ բյուջետային գործընթաց, բոլոր տեսակի եկամուտները (մուտքերը) և դրանց ձևերը, կենտրոնական իշխանության կողմից փոխանցված տրանսֆերները և դրանց տեսակները, եկամտի այլ աղբյուրներ, վարկ, վճարումներ և փոխհատուցման կարգը:

Գլուխ 13. Ինքնակառավարման գույքը՝ սեփականության մեջ առկա գույքի կառավարման կանոնները և սկզբունքները:

Գլուխ 14. Գույքի ստեղծումը՝ նոր գույքի աղբյուրները, դրանց կառավարումը:

Գլուխ 15. Գույքի տնօրինումը՝ սեփականաշնորհման կամ օգտագործման փոխանցելու կարգը (աճուրդներ, ակցիաներ, այլ ձևեր):

Բաժին VI - Ինքնակառավարման պետական վերահսկողությունը՝ ինչպե՞ս է վերահսկվում ինքնակառավարումը:

Գլուխ 16. Գործունեության վերահսկում՝ ինքնակառավարման կողմից հրապարակված ակտերի համապատասխանությունը օրենքին և իրականացված գործունեության որակի ստուգում, ծագած վեճերի վճռման կարգը:

Գլուխ 17. Ինքնակառավարման գործունեության աուդիտ՝ հաշվեստուգում (պետական, ներքին և անկախ):

Գլուխ 18. Ուղղակի պետական կառավարում՝ ո՞ր դեպքում է ընդհատվում ինքնակառավարման գործունեությունը, ինչպե՞ս և ի՞նչ մեխանիզմներով է փոխարինում նրան պետությունը և ի՞նչ ժամկետով:

Բաժին VII - Երկրամասային խորհուրդ՝ ի՞նչ օղակ գոյություն ունի ինքնակառավարման և կենտրոնական իշխանության միջև:

Գլուխ 19. Երկրամասային խորհրդատվական խորհուրդ, դրա իրավունքները, ձևավորումը և գործունեության կարգը:

Բաժին VIII - Անցումային և եզրափակիչ դրույթներ, օրենսգրքի՝ փուլերով ուժի մեջ մտնելու սխեման:

Գլուխ 20. Անցումային դրույթներ՝ ինչպե՞ս և ի՞նչ ժամանակամիջոցում պետք է իրականացվի նոր վարչական կազմակերպումը, ֆինանսական և գույքային ռեսուրսների փոխանցումը մունիցիպալիտետներին, ի՞նչ տիպի մարդկային, տեխնիկական, ժամանակային ռեսուրսներ և ի՞նչ կառույցներ է անհրաժեշտ ստեղծել դրա համար, ո՞ր գերատեսչություններն են պատասխանատու այս գործունեության իրականացման համար:

Գլուխ 21. Եզրափակիչ դրույթներ՝ Օրենսգրքի ընդունման հետևանքով ուժը կորցրած հին ակտերի ցանկը և Օրենսգրքի ուժի մեջ մտնելու կարգը:

2. Տեղական ինքնակառավարման օրենսգրքի բաժինների, գլուխների և հոդվածների ցանկը

ԲԱԺԻՆ I. Տեղական ինքնակառավարում

ԳԼՈՒԽ I. Ընդհանուր դրույթներ

ՀՈԴՎԱԾ 1. Օրենքի գործունեության բնագավառը:
ՀՈԴՎԱԾ 2. Տեղական ինքնակառավարման հասկացությունը:
ՀՈԴՎԱԾ 3. Մունիցիպալիտետներ՝ ինքնակառավարվող քաղաք և ինքնակառավարվող համայնք:
ՀՈԴՎԱԾ 4. Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավոր և մունիցիպալիտետի վարչական միավոր:
ՀՈԴՎԱԾ 5. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները և վերապահումները:
ՀՈԴՎԱԾ 6. Վրաստանի քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը:
ՀՈԴՎԱԾ 7. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման երաշխիքները:
ՀՈԴՎԱԾ 8. Մունիցիպալիտետի խորհրդանիշները:
ՀՈԴՎԱԾ 9. Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն:

ԳԼՈՒԽ II. Տեղական ինքնակառավարման վարչատարածքային կազմակերպումը

ՀՈԴՎԱԾ 10. Մունիցիպալիտետի ստեղծումը և լուծարումը: Մունիցիպալիտետի վարչական կենտրոնի սահմանումը և դրա փոփոխումը:
ՀՈԴՎԱԾ 11. Մունիցիպալիտետի վարչական սահմանների փոփոխումը:
ՀՈԴՎԱԾ 12. Մունիցիպալիտետի ավագանու հետ խորհրդատվության անցկացման կարգը:
ՀՈԴՎԱԾ 13. Մունիցիպալիտետի ստեղծման, լուծարման, նրա վարչական սահմանների փոփոխման մասին որոշման բողոքարկման կարգը:
ՀՈԴՎԱԾ 14. Մունիցիպալիտետների գրանցումը:

ԳԼՈՒԽ III. Մունիցիպալիտետի լիազորությունները

ՀՈԴՎԱԾ 15. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակները:
ՀՈԴՎԱԾ 16. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունները:
ՀՈԴՎԱԾ 17. Լիազորությունները պատգամելու կարգը և պայմանները:
ՀՈԴՎԱԾ 18. Պետական չափորոշիչները և տեխնիկական կանոնակարգերը մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում:
ՀՈԴՎԱԾ 19. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման ձևերը և մեխանիզմները:
ՀՈԴՎԱԾ 20. Մունիցիպալիտետի իրավունքը ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձի հիմնադրման և նրանում անդամագրման վերաբերյալ:
ՀՈԴՎԱԾ 21. Մունիցիպալիտետների իրավունքը համատեղ գործունեության իրականացման կազմակերպման համար:
ՀՈԴՎԱԾ 22. Մունիցիպալիտետի անդրսահմանային համագործակցությունը:

ԲԱԺԻՆ II. Մունիցիպալիտետի մարմինները

ԳԼՈՒԽ IV. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմինը

ՀՈԴՎԱԾ 23. Մունիցիպալիտետի ավագանին:
ՀՈԴՎԱԾ 24. Մունիցիպալիտետի ավագանու լիազորությունները:
ՀՈԴՎԱԾ 25. Նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին նիստը և հավաքը:
ՀՈԴՎԱԾ 26. Մունիցիպալիտետի ավագանու գործունեության կարգը:
ՀՈԴՎԱԾ 27. Մունիցիպալիտետի ավագանու բյուրոն:
ՀՈԴՎԱԾ 28. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովը:
ՀՈԴՎԱԾ 29. Մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խումբը:
ՀՈԴՎԱԾ 30. Մունիցիպալիտետի ավագանու խմբակցությունը:
ՀՈԴՎԱԾ 31. Մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը:
ՀՈԴՎԱԾ 32. Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձինք:
ՀՈԴՎԱԾ 33. Մունիցիպալիտետի ավագանու նախագահը:
ՀՈԴՎԱԾ 34. Մունիցիպալիտետի ավագանու նախագահին պաշտոնից ազատելը, նրա լիազորությունների դադարեցումը:
ՀՈԴՎԱԾ 35. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի լիազորությունը:
ՀՈԴՎԱԾ 36. Մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալը:
ՀՈԴՎԱԾ 37. Մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահը:
ՀՈԴՎԱԾ 38. Մունիցիպալիտետի ավագանու խմբակցության նախագահը:
ՀՈԴՎԱԾ 39. Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձի պաշտոնեական անհամատեղելիությունը:
ՀՈԴՎԱԾ 40. Մունիցիպալիտետի ավագանու անդամի կարգավիճակը:
ՀՈԴՎԱԾ 41. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության վարձատրությունը:
ՀՈԴՎԱԾ 42. Մունիցիպալիտետի ավագանու անդամի պաշտոնեական անհամատեղելիությունը:
ՀՈԴՎԱԾ 43. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ ընդհատումը և դադարեցումը:
ՀՈԴՎԱԾ 44. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերը:
ՀՈԴՎԱԾ 45. Մունիցիպալիտետի ավագանու անդամի ընդհանուր լիազորությունները և պարտավորությունները:
ՀՈԴՎԱԾ 46. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունների իրականացումը մունիցիպալիտետի ավագանու նիստին:
ՀՈԴՎԱԾ 47. Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունը ընտրողների հետ:

ԳԼՈՒԽ V. Մունիցիպալիտետի գործադիր մարմինը

ՀՈԴՎԱԾ 48. Քաղաքապետը/համայնքապետը:
ՀՈԴՎԱԾ 49. Քաղաքապետի/համայնքապետի ընտրությունը:
ՀՈԴՎԱԾ 50. Քաղաքապետարան/համայնքապետարան:
ՀՈԴՎԱԾ 51. Քաղաքապետին/համայնքապետին անվստահության հայտարարումը:
ՀՈԴՎԱԾ 52. Քաղաքապետարանի/համայնքապետարանի պաշտոնատար անձինք:
ՀՈԴՎԱԾ 53. Քաղաքապետարանի/համայնքապետարանի պաշտոնատար անձանց և այլ ծառայողների պաշտոնեական վարձատրությունը:
ՀՈԴՎԱԾ 54. Քաղաքապետի/համայքապետի լիազորությունը:
ՀՈԴՎԱԾ 55. Քաղաքապետի/համայնքապետի պաշտոնեական անհամատեղելիությունը:

ՀՈԴՎԱԾ 56. Քաղաքապետի/համայնքապետի լիազորությունների ընդհատման և դադարեցման հիմունքները:
ՀՈԴՎԱԾ 57. Քաղաքապետի/համայնքապետի առաջին տեղակալը և տեղակալը (տեղակալները):
ՀՈԴՎԱԾ 58. Քաղաքապետի/համայնքապետի առաջին տեղակալի և տեղակալի պաշտոնեական անհամատեղելիությունը:
ՀՈԴՎԱԾ 59. Քաղաքապետարանի/համայնքապետարանի պաշտոնեական անձանց լիազորությունների ընդհատումը և դադարեցումը:
ՀՈԴՎԱԾ 60. Քաղաքապետարանի/համայնքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը:

ԳԼՈՒԽ VI. Մունիցիպալիտետի մարմինների և պաշտոնատար անձանց վարչաիրավական ակտերը

ՀՈԴՎԱԾ 61. Մունիցիպալիտետի մարմինների և պաշտոնատար անձանց վարչաիրավական ակտերը:
ՀՈԴՎԱԾ 62. Մունիցիպալիտետի վարչաիրավական ակտի բողոքարկումը:

ԲԱԺԻՆ III. Վրաստանի մայրաքաղաքը՝ Թբիլիսի

ԳԼՈՒԽ VII. Վրաստանի մայրաքաղաքի կարգավիճակը

ՀՈԴՎԱԾ 63. Վրաստանի մայրաքաղաքը և նրա կարգավիճակը:
ՀՈԴՎԱԾ 64. Թբիլիսիի սեփական լիազորությունները:
ՀՈԴՎԱԾ 65. Թբիլիսիի մարմինները:
ՀՈԴՎԱԾ 66. Թբիլիսիի վարչական միավորները:

ԳԼՈՒԽ VIII. Թբիլիսիի ներկայացուցչական մարմինը

ՀՈԴՎԱԾ 67. Թբիլիսիի ավագանին:
ՀՈԴՎԱԾ 68. Թբիլիսիի ավագանու լիազորությունը:
ՀՈԴՎԱԾ 69. Թբիլիսիի ավագանու արտահերթ նիստի հրավիրումը:
ՀՈԴՎԱԾ 70. Թբիլիսիի ավագանու հանձնաժողովները:
ՀՈԴՎԱԾ 71. Թբիլիսիի ավագանու նախագահի տեղակալները:

ԳԼՈՒԽ IX. Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգը

ՀՈԴՎԱԾ 72. Թբիլիսիի քաղաքապետարանը:
ՀՈԴՎԱԾ 73. Թբիլիսիի քաղաքապետը:
ՀՈԴՎԱԾ 74. Թբիլիսիի կառավարությունը:
ՀՈԴՎԱԾ 75. Կառավարության լիազորությունները:
ՀՈԴՎԱԾ 76. Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալը (փոխքաղաքապետը) և տեղակալները:
ՀՈԴՎԱԾ 77. Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորները:
ՀՈԴՎԱԾ 78. Թբիլիսիի մարմինների ֆինանսական վերահսկումը և վերահսկողությունը:
ՀՈԴՎԱԾ 79. Հանրային իրավունքի իրավաբանական անձի հիմնադրումը:

ԳԼՈՒԽ X. Թբիլիսիի քաղաքապետարանի տարածքային մարմինը՝ Թբիլիսիի շրջանի գամգեոբան՝ շրջանային վարչությունը

ՀՈԴՎԱԾ 80. Թբիլիսիի շրջանի շրջանային վարչությունը:
ՀՈԴՎԱԾ 81. Շրջանային վարչության պաշտոնատար անձինք:
ՀՈԴՎԱԾ 82. Շրջանային վարչության նախագահը:
ՀՈԴՎԱԾ 83. Շրջանային վարչության նախագահի տեղակալները:
ՀՈԴՎԱԾ 84. Շրջանային վարչության կառուցվածքային միավորները:

ԲԱԺԻՆ IV. Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ԳԼՈՒԽ XI. Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը

ՀՈԴՎԱԾ 85. Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության երաշխիքները և ձևերը:
ՀՈԴՎԱԾ 85[1]. Տեղեկատվության հասանելիությունը:
ՀՈԴՎԱԾ 85[2]. Բնակավայրի ընդհանուր ժողովը:
ՀՈԴՎԱԾ 85[3]. Բնակավայրի ընդհանուր ժողովի լիազորությունը:
ՀՈԴՎԱԾ 85[4]. Բնակավայրի ընդհանուր ժողովի հրավիրման կարգը:
ՀՈԴՎԱԾ 85[5]. Բնակավայրի ընդհանուր ժողովի գործունեության կարգը:
ՀՈԴՎԱԾ 86. Պետիցիա (խնդրագիր):
ՀՈԴՎԱԾ 86[1]. Քաղաքացիական խորհրդականների խորհուրդ:
ՀՈԴՎԱԾ 87. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու՝ հանձնաժողովի նիստերին մասնակցությունը:
ՀՈԴՎԱԾ 88. Մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվությունների լսումը:

ԲԱԺԻՆ V. Մունիցիպալիտետի բյուջեն և տնտեսական հիմունքները

ԳԼՈՒԽ XII. Մունիցիպալիտետի բյուջեն

ՀՈԴՎԱԾ 89. Մունիցիպալիտետի բյուջեն:
ՀՈԴՎԱԾ 90. Մունիցիպալիտետի բյուջեի անկախությունը:
ՀՈԴՎԱԾ 91. Մունիցիպալիտետի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը:
ՀՈԴՎԱԾ 92. Մունիցիպալիտետի բյուջեի մուտքերը:
ՀՈԴՎԱԾ 93. Տեղական հարկերի և տուրքերի սահմանումը և վարչարարության կարգը:
ՀՈԴՎԱԾ 94. Մունիցիպալիտետի բյուջեի համար հատկացվելիք տրանսֆերի տեսակները:
ՀՈԴՎԱԾ 95. Համահարթեցման տրանսֆեր:
ՀՈԴՎԱԾ 96. Կապիտալ տրանսֆեր:
ՀՈԴՎԱԾ 97. Նպատակային տրանսֆեր:
ՀՈԴՎԱԾ 98. Հատուկ տրանսֆեր:
ՀՈԴՎԱԾ 99. Մունիցիպալիտետի բյուջեի պահուստային ֆոնդը:
ՀՈԴՎԱԾ 100. Մունիցիպալիտետի կողմից վարկ վերցնելը և դրամաշնորհ ստանալը:
ՀՈԴՎԱԾ 101. Մունիցիպալիտետի բյուջեի մուծումները:
ՀՈԴՎԱԾ 102. Անկախություն մուծումների ուղղությունների սահմանման ժամանակ:
ՀՈԴՎԱԾ 103. Եկամուտների փոխհատուցումը:

ԳԼՈՒԽ XIII. Մունիցիպալիտետի գույքը

ՀՈԴՎԱԾ 104. Տվյալ գլխի կարգավորման ոլորտը:
ՀՈԴՎԱԾ 105. Տերմինների բացատրություն:
ՀՈԴՎԱԾ 106. Մունիցիպալիտետի գույքը:
ՀՈԴՎԱԾ 106[1]. Մունիցիպալիտետի/մունիցիպալիտետների մասնավոր իրավունքի իրավաբանական անձ:
ՀՈԴՎԱԾ 107. Մունիցիպալիտետին սույն Օրենքով պատկանող գույքը:
ՀՈԴՎԱԾ 108. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա գույքը պետությանը կամ/և ինքնավար հանրապետությանը՝ որպես սեփականություն անհատույց փոխանցելը:
ՀՈԴՎԱԾ 109. Մունիցիպալիտետի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:
ՀՈԴՎԱԾ 110. Մունիցիպալիտետի կողմից գույքային իրավունքների իրականացման հիմնական սկզբունքները:

ԳԼՈՒԽ XIV. Մունիցիպալիտետի գույքի ստեղծումը

ՀՈԴՎԱԾ 111. Մունիցիպալիտետի գույքի ստեղծման աղբյուրները:
ՀՈԴՎԱԾ 112. Պետական սեփականության մեջ առկա գույքը մունիցիպալիտետին՝ որպես սեփականություն փոխանցելը:
ՀՈԴՎԱԾ 113. Պետական սեփականության մեջ առկա գույքը մունիցիպալիտետին՝ որպես սեփականություն անհատույց փոխանցելը:
ՀՈԴՎԱԾ 114. Պետության կողմից մունիցիպալիտետի սեփականության մեջ փոխանցված գույքի գրանցումը:

ԳԼՈՒԽ XV. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհումը և օգտագործման իրավունքով փոխանցումը

ՀՈԴՎԱԾ 115. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման և օգտագործման ու կառավարման իրավունքով փոխանցման կարգավորումը և նախնական սեփականաշնորհման արժեքի սահմանման առանձնահատուկ դեպքերը:
ՀՈԴՎԱԾ 116. Մունիցիպալիտետի ներկայացուցիչը գույքի տնօրինման ժամանակ:
ՀՈԴՎԱԾ 117. Մունիցիպալիտետի գույքը ձեռքբերողը:
ՀՈԴՎԱԾ 118. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման ձևերը:
ՀՈԴՎԱԾ 118[1]. Թբիլիսիի գույքի սեփականաշնորհման կարգը:
ՀՈԴՎԱԾ 118[2]. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա անշարժ գույքի սեփականաշնորհման առանձնահատուկ պայմանները:
ՀՈԴՎԱԾ 119. Աճուրդի հայտարարումը և կազմակերպումը:
ՀՈԴՎԱԾ 120. Մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման մասին գործարքի ձևակերպումը և գործարքի չեղարկումը:
ՀՈԴՎԱԾ 121. Մունիցիպալիտետի հիմնական (չօտարված) գույքի օտարման կարգը:
ՀՈԴՎԱԾ 122. Մունիցիպալիտետի գույքի՝ օգտագործման իրավունքով փոխանցման ձևերը և կարգը:
ՀՈԴՎԱԾ 122[1]. Թբիլիսիի գույքի՝ օգտագործման իրավունքով փոխանցման ձևերը և կարգը:
ՀՈԴՎԱԾ 123. Մունիցիպալիտետին պատգամված լիազորությունների իրականացման համար գույքի՝ օգտագործման իրավունքով փոխանցումը:
ՀՈԴՎԱԾ 124. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա ոչ նյութական գույքային բարիքը:

ՀՈԴՎԱԾ 125. Բաժնեմասերի և բաժնեթղթերի տնօրինման ձևերը:
ՀՈԴՎԱԾ 126. Բաժնեմասերի և բաժնեթղթերի աճուրդի տեսակները:
ՀՈԴՎԱԾ 126[1]. Թբիլիսիի սեփականության մեջ առկա բաժնեմասերի կամ բաժնեթղթերի կամ հավաստագրերով ներկայացված բաժնեմասերի ուղղակիորեն կամ միջնորդի միջոցով, հանրային կամ մասնավոր առաջարկով, օտար երկրի ճանաչված ֆոնդային բորսայում կամ տվյալ ժամանակ միջազգային կապիտալի շուկաներում առկա փորձի համապատասխան առաջարկության տարբեր ձևով սեփականաշնորհման կարգը:
ՀՈԴՎԱԾ 127. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա բաժնեմասերի և բաժնեթղթերի կառավարման իրավունքով փոխանցումը:
ՀՈԴՎԱԾ 127[1]. Մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա պահանջների և իրավունքների տնօրինումը:
ՀՈԴՎԱԾ 127[2]. Թբիլիսիի սեփականաշնորհված գույքը ձեռքբերողին օգտագործման իրավունքով փոխանցված կամ կառավարման իրավունքով փոխանցված Թբիլիսիի գույքը ստացողի համար այս գույքի հետ կապված պայմանի (պայմանների) փոփոխումը կամ չեղարկումը:
ՀՈԴՎԱԾ 128. Մունիցիպալիտետի գույքի տնօրինման հետևանքով մտից գումարները:

ԲԱԺԻՆ VI. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական վերահսկումը և աուդիտը (հաշվեստուգումը): Ուղղակի պետական կառավարում

ԳԼՈՒԽ XVI. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական վերահսկողությունը

ՀՈԴՎԱԾ 129. Պետական վերահսկողության հասկացությունը և տեսակները:
ՀՈԴՎԱԾ 130. Իրավական վերահսկողության և ոլորտային վերահսկողության մարմինները:
ՀՈԴՎԱԾ 131. Պետական վերահսկողության իրականացման կարգը և սկզբունքը:
ՀՈԴՎԱԾ 132. Իրավական վերահսկողություն:
ՀՈԴՎԱԾ 133. Ոլորտային վերահսկողություն:
ՀՈԴՎԱԾ 134. Փաստաթուղթ և տեղեկություն պահանջելը:
ՀՈԴՎԱԾ 134[1]. Երաշխավորական հրահանգ:
ՀՈԴՎԱԾ 135. Վարչաիրավական ակտի ընդհատումը և չեղարկումը:
ՀՈԴՎԱԾ 136. Տեղական ինքնակառավարման փոխարինումը:
ՀՈԴՎԱԾ 137. Իրավական խորհրդատվություն:
ՀՈԴՎԱԾ 138. Պետական վերահսկողության մարմնի գործունեության հանրայնությունը:

ԳԼՈՒԽ XVII. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության աուդիտը (հաշվեստուգումը)

ՀՈԴՎԱԾ 139. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության օրինականության և արդյունավետության ապահովումը:
ՀՈԴՎԱԾ 140. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական աուդիտը, անկախ աուդիտը և ներքին աուդիտը:

ԳԼՈՒԽ XVIII. Ուղղակի պետական կառավարում: Ավագանու արձակումը և նրա գործունեության ընդհատումը, ավագանու և քաղաքապետի/համայնքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

ՀՈԴՎԱԾ 141. Ավագանու արձակումը և նրա գործունեության ընդհատումը:
ՀՈԴՎԱԾ 142. Ավագանու և քաղաքապետի/համայնքապետի լիազորությունների

վաղաժամկետ դադարեցումը:
ՀՈԴՎԱԾ 143. Ուղղակի պետական կառավարման ներմուծումը:
ՀՈԴՎԱԾ 144. Ուղղակի պետական կառավարման իրականացումը:
ՀՈԴՎԱԾ 145. Ուղղակի պետական կառավարման իրականացման ժամկետը:

ԲԱԺԻՆ VII. Երկրամասային խորհրդատվական խորհուրդ

ԳԼՈՒԽ XIX. Երկրամասային խորհրդականների խորհրդի կարգավիճակը և լիազորությունը

ՀՈԴՎԱԾ 146. Երկրամասային խորհրդականների խորհրդի կարգավիճակը:
ՀՈԴՎԱԾ 147. Երկրամասային խորհրդականների խորհրդի կազմը:
ՀՈԴՎԱԾ 148. Երկրամասային խորհրդականների խորհրդի լիազորությունը:
ՀՈԴՎԱԾ 149. Երկրամասային խորհրդականների խորհրդի գործունեության կարգը:

ԲԱԺԻՆ VIII. Անցումային և եզրափակիչ դրույթներ

ԳԼՈՒԽ XX. Անցումային դրույթներ

ՀՈԴՎԱԾ 150. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները և լիազորությունների ժամկետը:
ՀՈԴՎԱԾ 151. Ինքնակառավարվող քաղաքներ և մունիցիպալիտետների վարչական կենտրոններ:
ՀՈԴՎԱԾ 152. Մունիցիպալիտետների տարածքային օպտիմալացումը:
ՀՈԴՎԱԾ 153. Օրենքի՝ ուժի մեջ մտնելու հետ կապված իրականացվելիք միջոցառումներ:
ՀՈԴՎԱԾ 154. Բյուջեների միջև մուտքերի սահմանազատումը:
ՀՈԴՎԱԾ 155. Ոչ ֆինանսական ակտիվների աճի ընդհանուր ծավալի որոշումը:
ՀՈԴՎԱԾ 155[1]. Վրաստանի օրենսդրությամբ սահմանված մակրոտնտեսական պարամետրերի սահմանների պահպանման համար իրականացվելիք միջոցառումները և սահմանափակումները:
ՀՈԴՎԱԾ 156. Տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների հաստիքային քանակի սահմանման ժամանակավոր կարգը:
ՀՈԴՎԱԾ 157. Տեղական ինքնակառավարման հանրային ծառայողների ուսուցումը:
ՀՈԴՎԱԾ 158. Նորաստեղծ մունիցիպալիտետների նյութատեխնիկական ապահովումը:
ՀՈԴՎԱԾ 159. Մունիցիպալիտետի տարածքում ենթակառուցվածքի զարգացման ապահովումը:
ՀՈԴՎԱԾ 160. Մունիցիպալիտետների վարչական սահմանների որոշման համար քարտեզագրական նյութերի նախապատրաստման ապահովում:
ՀՈԴՎԱԾ 161. Իրավական ակտերի գործողությունը անցումային ժամանակաշրջանում:
ՀՈԴՎԱԾ 162. Մունիցիպալիտետներին գյուղատնտեսական նշանակության հողերի փոխանցման ժամկետները:
ՀՈԴՎԱԾ 163. Մունիցիպալիտետի կողմից խմելու ջրով մատակարարման և ջրահեռացման համակարգը սպասարկող ծառայությունների ապահովման լիազորությունների իրականացման պայմանները:
ՀՈԴՎԱԾ 163[1]. Մունիցիպալիտետում հրդեհային անվտանգության և արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքի պահպանության ապահովման ժամանակավոր կարգը:

ՀՈԴՎԱԾ 163[2]. Աճուրդի ձևով սեփականաշնորհված Թբիլիսիի գույքը ձեռքբերողի, օգտագործման իրավունքով փոխանցված կամ կառավարման իրավունքով փոխանցված Թբիլիսիի գույքն ընդունողի համար այս գույքի հետ կապված պայմանը (պայմանները) փոխելու կամ չեղարկելու կարգը:

ՀՈԴՎԱԾ 164. Տեղական ինքնակառավարման իրականացումը Վրաստանի բռնազավթված տարածքներում:

ՀՈԴՎԱԾ 165. Օրենքի՝ ուժի մեջ մտնելու հետ կապված իրականացվելիք այլ միջոցառումներ:

ԳԼՈՒԽ XXI. Եզրափակիչ դրույթներ

ՀՈԴՎԱԾ 166. Օրենքի՝ ուժի մեջ մտնելու հետ կապված ուժը կորցրած նորմատիվ ակտեր:

ՀՈԴՎԱԾ 167. Օրենքի գործարկման կարգը:

Վրաստանի Նախագահ
Գիորգի Մարգվելաշվիլի
Քութաիսի,
2014 թվականի 5 փետրվարի
N1958-IIն

3. Տեղական ինքնակառավարման օրենսգրքի ընդլայնված քաղվածք

(Մի շարք հոդվածներ ներկայացված են ավելի ընդարձակ, քան Աշակերտի գրքում)

Վրաստանի օրգանական օրենք

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

(2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ)

ԲԱԺԻՆ I. Տեղական ինքնակառավարումը

ԳԼՈՒԽ I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Օրենքի գործունեության բնագավառը

Սույն Օրենքը սահմանում է տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց ստեղծման և գործունեության կանոնները, դրանց ֆինանսները և գույքը, հարաբերությունները քաղաքացիների, պետական իշխանության մարմինների և հանրային ու մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, նաև՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության պետական վերահսկման և ուղղակի պետական կառավարման իրականացման կանոնները:

Հոդված 2. Տեղական ինքնակառավարման հասկացությունը

1. Տեղական ինքնակառավարումը ինքնակառավարվող միավորում հաշվառված Վրաստանի քաղաքացիների իրավունքը և իրենց կողմից ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, Վրաստանի Օրենսդրության հիման վրա տեղական նշանակության հարցեր վճռելու հնարավորությունն է:

2. Ինքնակառավարվող միավորը մունիցիպալիտետն է: Մունիցիպալիտետը բնակավայր է (ինքնակառավարվող քաղաք), որն ունի վարչական սահմաններ, կամ բնակավայրերի միասնականություն է (ինքնակառավարվող համայնք), որն ունի վարչական սահմաններ և վարչական կենտրոն: Մունիցիպալիտետն ունի ընտրովի ներկայացուցչական և գործադիր մարմիններ (այսուհետ՝ մունիցիպալիտետի մարմիններ), հաշվառված բնակչություն և ունի սեփական գույք, բյուջե, մուտքեր: Մունիցիպալիտետն անկախ հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Հոդված 3. Մունիցիպալիտետներ՝ ինքնակառավարվող քաղաք և ինքնակառավարվող համայնք

1. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է մունիցիպալիտետներում՝ ինքնակառավարվող քաղաքում և ինքնակառավարվող համայնքում:

2. Ինքնակառավարվող քաղաքը քաղաքային կարգի բնակավայր է, որին սույն Օրենքի համաձայն շնորհվել է կամ կշնորհվի մունիցիպալիտետի կարգավիճակ:

3. Ինքնակառավարվող համայնքը մի քանի բնակավայրերի միասնականություն է, որին սույն Օրենքի համաձայն շնորհվել է կամ կշնորհվի մունիցիպալիտետի կարգավիճակ:

Հոդված 4. Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավոր և մունիցիպալիտետի վարչական միավոր

1. Բնակչության բնակեցման առաջնային տարածքային միավորը բնակավայրն է, որն ունի անվանում, վարչական սահմաններ, տարածք և ունի հաշվառված բնակչություն: Բնակավայրի կարգերն են.

ա) Գյուղը - բնակավայր, որի սահմաններում հիմնականում ընդգրկված են գյուղատնտեսական նշանակության հողեր և այլ բնական ռեսուրսներ, և որի ենթակառուցվածքն էականորեն միտված է գյուղատնտեսական գործունեության իրականացմանը:

բ) Ավանը - բնակավայր, որի տարածքում տեղակայված են արդյունաբերական ձեռնարկություններ կամ/և զբոսաշրջական և կուրորտային հաստատություններ կամ/և բուժական և սոցիալ-մշակութային հաստատություններ, և որը կատարում է տեղական տնտեսական-մշակութային կենտրոնի գործառույթներ: Ավանի ենթակառուցվածքը էականորեն կողմնորոշված չէ գյուղատնտեսական գործունեության իրականացմանը: Բնակավայրը կարող է ավանի կարգին դասվել, եթե այն ինքնակառավարվող միավորի վարչական կենտրոն է կամ ունի հետագա տնտեսական զարգացման և բնակչության աճի հեռանկար:

գ) Քաղաքը - բնակավայր, որի տարածքում տեղակայված են արդյունաբերական ձեռնարկություններ և զբոսաշրջական, բուժական և սոցիալ-մշակութային հաստատությունների ցանց, և որը կատարում է տեղական տնտեսական-մշակութային կենտրոնի գործառույթներ: Քաղաքի ենթակառուցվածքը չի կողմնորոշված գյուղատնտեսական գործունեության: Քաղաքի կարգի կարող է հատկացվել այն բնակավայրը, որի հաշվառված բնակիչների թիվը 5000-ից ավելի է: Այն բնակավայրին, որի հաշվառված բնակիչների թիվը 5000-ից պակաս է, կարող է շնորհվել քաղաքի կարգ, եթե այն ինքնակառավարվող միավորի վարչական կենտրոն է, կամ այն ունի հետագա տնտեսական զարգացման և բնակչության աճի հեռանկար, կամ այն սույն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, սահմանված է՝ որպես ինքնակառավարվող քաղաք:

2. Բնակավայրի ստեղծման և լուծարման, բնակավայրին համապատասխան կարգի շնորհման և փոփոխման, նաև՝ բնակավայրի վարչական սահմանների փոփոխման կանոնները սահմանում է Վրաստանի Կառավարությունը:

3. Կառավարման օպտիմալացման համար մունիցիպալիտետը կարող է բաժանվել վարչական միավորների: Ինքնակառավարվող համայնքում վարչական միավորի տարածքը համընկնում է մեկ կամ մի քանի բնակավայրի տարածքներին: Ինքնակառավարվող քաղաքում վարչական միավորը բնակավայրի մաս է:

4. Մունիցիպալիտետի վարչական միավորի ստեղծման և լուծարման, նաև՝ ինքնակառավարվող քաղաքի վարչական միավորի սահմանների փոփոխման մասին որոշումները մունիցիպալիտետի քաղաքապետի/համայնքապետի կամ մունիցիպալիտետի ավագանու անդամների առնվազն մեկ երրորդի ներկայացմամբ, լրիվ կազմի մեծամասնությամբ, որոշումով ընդունում է մունիցիպալիտետի ավագանին:

Հոդված 5. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքները և վերապահումները

1. Տեղական ինքնակառավարման իրականացման իրավական հիմունքներն են Վրաստանի Սահմանադրությունը, «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան», Վրաստանի միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը, սույն Օրենքը, Վրաստանի այլ օրենսդիր և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերը:

2. Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են «Աջարիայի Ինքնավար Հանրապետության կարգավիճակի մասին» Վրաստանի սահմանադրական օրենքով, «Աջարիայի Ինքնավար Հանրապետության սահմանադրության հաստատման մասին» Վրաստանի օրգանական օրենքի և սույն Օրենքի նորմերի նախատեսմամբ:

3. Վրաստանի բռնազավթված տարածքներում տեղական ինքնակառավարման իրականացման հարցերը սահմանվում են համապատասխան տարածքներում Վրաստանի իրավասության վերականգնումից հետո:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը չի տարածվում ազատ արդյունաբերական գոտիների վրա:

Հոդված 6. Վրաստանի քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման իրականացման իրավունքը

1. Վրաստանի քաղաքացիները տեղական ինքնակառավարումն իրականացնում են Վրաստանի Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի», Վրաստանի միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի, սույն Օրենքի և Վրաստանի այլ նորմատիվ ակտերի համաձայն:

2. Վրաստանի քաղաքացիներն իրավունք ունեն սույն Օրենքով և Ընտրական օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրել տեղական ինքնակառավարման մարմիններ և ընտրվել սույն մարմիններում՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնից, քաղաքական և այլ հայացքներից, ազգային, էթնիկ և սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային վիճակից և կոչումներից:

Հոդված 7. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման երաշխիքները

1. Պետության և մունիցիպալիտետի մարմինների հարաբերությունը հիմնվում է փոխհամագործակցության սկզբունքի վրա:

2. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացումն ապահովելու համար պետական իշխանության մարմինները պարտավոր են ստեղծել համապատասխան իրավական, ֆինանսա-տնտեսական և կազմակերպչական պայմաններ:

3. Պետական իշխանության մարմինները պարտավոր են մինչև այն հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելը, որոնք վերաբերում են սույն Օրենքով սահմանված մունիցիպալիտետի լիազորություններին, նախապես խորհրդատվություններ անցկացնել այն ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց հետ, որոնք միավորում են երկրի մունիցիպալիտետների կեսից ավելին:

4. Մունիցիպալիտետն իրավազոր է դիմել դատարան այն վարչահիրավական ակտերի և գործողությունների բողոքարկման համար, որոնք սահմանափակում են Վրաստանի տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

5. Մունիցիպալիտետի ավագանին, Վրաստանի օրենսդրության համաձայն, իրավազոր է հայցով դիմել Վրաստանի Սահմանադրական դատարան՝ Վրաստանի Սահմանադրության յոթերորդ1 գլխի հետ կապված օրենսդրական ակտերի սահմանադրականության հարցի քննարկման նպատակով: Վրաստանի սահմանադրական դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ որոշումը մունիցիպալիտետի ավագանին ընդունում է ամբողջական կազմի մեծամասնությամբ:

6. Եթե մունիցիպալիտետի ավագանին այլ որոշում չի ընդունել, Վրաստանի ընդհանուր իրավասության դատարաններում և Վրաստանի սահմանադրական դատարանում մունիցիպալիտետը ներկայացնում է մունիցիպալիտետի քաղաքապետը կամ նրա կողմից լիազորված անձը:

Հոդված 8. Մունիցիպալիտետի խորհրդանիշները

1. Մունիցիպալիտետն ունի զինանշան և դրոշ: Նա կարող է ունենալ նաև այլ խորհրդանիշներ:

2. Մունիցիպալիտետի զինանշանը, դրոշը և այլ խորհրդանիշները, դրանց արտահայտության ձևերը և նկարագրությունները Վրաստանի Խորհրդարանին առընթեր Զինանշանագիտության պետական խորհրդի հետ նախնական խորհրդատվությունների հիման վրա և նրա համաձայնությամբ, սահմանում է մունիցիպալիտետի ավագանին: Պարտադիր է մունիցիպալիտետի խորհրդանիշների պետական գրանցումը՝ Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Մունիցիպալիտետի խորհրդանիշների օգտագործման կարգը սահմանվում է Վրաստանի Կառավարության նորմատիվ ակտով:

Հոդված 9. Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն

Մունիցիպալիտետի մարմինների աշխատանքային և գործավարության լեզուն Վրաստանի պետական լեզուն է:

ԳԼՈՒԽ III. Մունիցիպալիտետի լիազորությունները

Հոդված 15. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակները

1. Մունիցիպալիտետի լիազորությունների տեսակներն են.

ա) մունիցիպալիտետի սեփական լիազորությունները,

բ) մունիցիպալիտետին պատգամված լիազորությունները:

2. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունն է սույն Օրենքով սահմանված լիազորությունը, որը նա իրականացնում է անկախ և սեփական պատասխանատվությամբ:

3. Մունիցիպալիտետի պատգամված լիազորությունն է պետական/ինքնավար հանրապետության իշխանության մարմնի լիազորությունը, որը մունիցիպալիտետին փոխանցվել է Օրենքի կամ Վրաստանի օրենսդրության համաձայն կնքված պայմանագրի հիման վրա, համապատասխան նյութական և ֆինանսական ապահովմամբ:

Հոդված 16. Մունիցիպալիտետի սեփական լիազորությունները

1. Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված մունիցիպալիտետի սեփական լիազորությունները բացառիկ լիազորություններ են: Սույն Օրենքի համաձայն, մունիցիպալիտետի սեփական լիազորությունների ծավալը (շրջանակները) և իրականացման կարգը կարող են սահմանվել միայն օրենսդրական ակտի հիման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Օրենքն ուղղակիորեն մատնանշում է Վրաստանի օրենսդրության համաձայն սեփական լիազորությունների իրականացումը կարգավորելու հնարավորություն:

2. Մունիցիպալիտետի սեփական լիազորություններն են.

ա) մունիցիպալիտետի բյուջեի նախագծի նախապատրաստումը, քննարկումը և հաստատումը, հաստատված բյուջեում փոփոխությունների ընդգրկումը, բյուջեի կատարման հաշվետվության լսումը և գնահատումը, Վրաստանի Օրենսդրությանը համապատասխան, բյուջետային միջոցների տնօրինումը, գանձապետական գործառնությունների և բանկային գործարքների կատարումը,

բ) մունիցիպալիտետի սեփականության մեջ եղած գույքի կառավարումը և տնօրինումը սույն Օրենքով և օրենքի ոլորտում գտնվող այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով,

գ) տեղական նշանակության բնական պաշարների, այդ թվում՝ ջրային և անտառային ռեսուրսների և մունիցիպալիտետի սեփականության մեջ եղած հողային ռեսուրսների կառավարումը՝ Օրենքով սահմանված կարգով,

դ) տեղական հարկերի և տուրքերի ներմուծումը և չեղարկումը՝ Օրենքով սահմանված կարգով: Դրանց տոկոսադրույքերի սահմանումը՝ Օրենքով սահմանված սահմանային քանակությունների շրջանակներում, տեղական վճարների հավաքումը,

ե) մունիցիպալիտետի տարածական-տերիտորիալ պլանավորումը և համապատասխան ոլորտում չափանիշների և կանոնակարգերի սահմանումը, քաղաքաշինական փաստաթղթերի, այդ թվում՝ հողօգտագործման գլխավոր հատակագծի, կառուցապատման կարգավորման պլանի, բնակավայրերի տարածքների օգտագործման և կառուցապատման կարգավորման կանոնակարգերի հաստատումը,

զ) մունիցիպալիտետի տարածքի բարեկարգումը և համապատասխան ինժեներական ենթակառուցվածքների զարգացումը, մունիցիպալիտետի տարածքում փողոցների, այգիների, պուրակների և այլ հասարակական վայրերի մաքրումը, տարածքի կանաչապատումը, արտաքին լուսավորման ապահովումը,

է) մունիցիպալ թափոնների կառավարումը,

ը) ջրամատակարարման (այդ թվում՝ տեխնիկական ջրամատակարարման) և սանիտարական ապահովումը, տեղական նշանակության ոռոգման համակարգի զարգացումը,

թ) մունիցիպալիտետի կառավարման մեջ եղած վաղ և նախադպրոցական դաստիարակության և ուսումնական հաստատությունների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով,

թ[1]) մունիցիպալ կառավարման մեջ գտնվող արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը,

թ[2]) մունիցիպալիտետի տարածքում գտնվող վաղ և նախադպրոցական դաստիարակության և ուսումնական հաստատությունների ավտորիզացիայի ապահովումը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով,

ժ) տեղական նշանակության ավտոճանապարհների կառավարումը և տեղական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային երթևեկության կազմակերպումը, ավտոտրանսպորտային միջոցների ապահովումը կայանատեղիներով և կանգնելու/կայանելու կանոնների կարգավորումը,

ժա) մունիցիպալիտետի վարչական սահմաններում կանոնավոր ուղևորափոխադրման թույլտվության հատկացումը, բնակչության՝ հասարակական տրանսպորտով սպասարկման կազմակերպումը,

ժբ) արտաքին առևտրի, ցուցահանդեսների, շուկաների և տոնավաճառների կարգավորումը,

ժգ) մունիցիպալիտետի տարածքում շինարարության թույլտվության հատկացումը, շինարարության վերահսկողության իրականացումը Վրաստանի օրենսդրական ակտերով սահմանված կարգով և սահմանված շրջանակներում,

ժդ) հանրահավաքների և ցույցերի անցկացման հետ կապված հարցերի կարգավորումը՝ Օրենքով սահմանված կարգով,

ժե) մունիցիպալիտետի վարչական սահմաններում գտնվող աշխարհագրական օբյեկտների, մասնավորապես, պատմականորեն ձևավորված թաղամասի, ինքնակառավարվող քաղաքի վարչական միավորի, այս կամ այն գոտու, միկրոշրջանի, աղբյուրի, հրապարակի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, էսպլանադի (ծառուղիով պողոտայի), ճեմուղու, պուրակի, այգու, զբոսայգու, անտառային պարկի, տեղական նշանակության անտառի, գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը՝ Օրենքով սահմանված կարգով,

ժզ) արտաքին գովազդի տեղադրման կարգավորումը,

ժէ) ընտանի կենդանիներ պահելու կանոնների սահմանումը և փողոցային կենդանիների հետ կապված հարցերի վճռումը,

ժը) գերեզմանոցների կարգավորումը և խնամքը,

ժթ) տեղական ինքնատիպության, ստեղծագործական գործունեության և մշակութային ժառանգության պահպանումը և զարգացումը, տեղական նշանակության մշակութային հուշարձանների խնամքը և պահպանումը, վերանորոգումը և վերակառուցումը, մունիցիպալիտետի կառավարման մեջ առկա գրադարանների, ակումբային հաստատությունների, կինոթատրոնների, թանգարանների, թատրոնների, ցուցասրահների և մարզա-առողջարարական օբյեկտների գործունեության ապահովումը և նոր օբյեկտների կառուցումը,

ի) տեղական նշանակության օբյեկտներում սահմանափակ հնարավորություններով անձանց, երեխաների և տարեցների համար համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, այդ թվում՝ հանրային հավաքների վայրերի և մունիցիպալ տրանսպորտի համապատասխանաբար հարմարեցման և կահավորման ապահովումը,

իա) անօթևանների ապահովումն ապաստարանով և նրանց հաշվառումը,

իբ) իրլիազորություններիշրջանակներում՝«Հանրայինև մասնավոր համագործակցության մասին» Վրաստանի օրենքով նախատեսված լիազորությունների իրականացում:

3. Մունիցիպալիտետն իրավազոր է սեփական նախաձեռնությամբ վճռել ցանկացած հարց, որի վճռումը Վրաստանի Օրենսդրությամբ այլ մարմնի լիազորությունների մեջ չի մտնում և չի արգելված Օրենքով:

4. Մունիցիպալիտետն իրավասու է սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով իրականացնել միջոցառումներ զբաղվածությանը նպաստելու, գյուղատնտեսությանը (այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերացիային) աջակցելու և զբոսաշրջության զարգացման, սոցիալական օգնության նպատակով, պետական քաղաքականությունն իրականացնող մարմնի հետ համակարգմամբ՝ առողջության պահպանման նպատակով, ինչպես նաև, տեղական մակարդակով կազմակերպված երիտասարդական քաղաքականության զարգացմանը օժանդակելու, զանգվածային սպորտին նպաստելու, շրջակա միջավայրի պահպանությանը, հասարակական կրթությանը, գենդերային հավասարությանը նպաստելու, կանանց նկատմամբ բռնության կամ/և ընտանեկան բռնության կանխարգելման, կանանց նկատմաբ բռնության կամ/և ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և օգնության, տեղական նշանակության արխիվների վարման, առողջ կենսակերպի հաստատման, մարդու առողջության համար անվտանգ միջավայրի ստեղծման, մունիցիպալիտետի տարածքում ներդրումներին աջակցելու, նորարարական զարգացմանն աջակցելու և այլ նպատակներով:

Հոդված17. Լիազորությունների պատգամման կարգը և պայմանները

1. Պետական կամ ինքնավար հանրապետության իշխանական մարմինը կարող է մունիցիպալիտետին փոխանցել պետական/ինքնավար հանրապետության իշխանական մարմնի այն լիազորությունները, որոնց իրականացումն ավելի արդյունավետ է տեղական մակարդակում:

2. Պետական կամ ինքնավար հանրապետության իշխանական մարմնի կողմից մունիցիպալիտետին իրավազորությունները կարելի է պատգամել համապատասխանաբար Վրաստանի օրենսդրական ակտով կամ ինքնավար հանրապետության Օրենքով, նաև՝ Վրաստանի կամ ինքնավար հանրապետության Օրենսդրության հիման վրա կնքված պայմանագրով, համապատասխան նյութական և ֆինանսական ռեսուրսների փոխանցմամբ:

4. Մունիցիպալիտետն իրավազոր է պատգամված լիազորությունները Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված շրջանակներում իրականացնել՝ հարմարեցնելով տեղական պայմաններին:

5. Լիազորությունների պատգամման ժամանակ նույն ակտով պետք է սահմանվի այն նախարարությունը, որը կիրականացնի պատգամված լիազորությունների պետական ոլորտային վերահսկողություն:

Հոդված 18. Պետական չափորոշիչները և տեխնիկական կանոնակարգերը մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում

Երկրի ողջ տարածքի սոցիալ-տնտեսական հավասար զարգացման նպատակով պետական իշխանության համապատասխան մարմիններն իրավունք ունեն մունիցիպալիտետի սեփական և պատգամված լիազորությունների ոլորտում համապատասխան նորմատիվ ակտով սահմանել պետական չափորոշիչներ և տեխնիկական կանոնակարգեր:

Հոդված 19. Մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման ձևերը և մեխանիզմները

Մունիցիպալիտետի մարմինները մունիցիպալիտետի լիազորությունների իրականացման ժամանակ Վրաստանի օրենսդրությանը համապատասխան.

ա) ընդունում/հրապարակում են վարչահիրավական ակտեր,

բ) կազմում, հաստատում և իրականացնում են համապատասխան ծրագրեր, ռազմավարություններ, գործողությունների պլաններ և նախագծեր,

գ) իրականացնում են գնումներ,

դ) կնքում են պայմանագրեր,

ե) ձեռք են բերում և ստեղծում մունիցիպալիտետի սեփականությունը,

զ) տիրապետում են և տնօրինում իրենց սեփականության մեջ եղած գույքը, օգտվում են այդ գույքից, նաև՝ պետական/ինքնավար հանրապետության և այլ անձանց գույքից,

է) հիմնում են և վարում մասնավոր իրավունքի իրավաբանական անձեր,

ը) վերցնում են վարկեր,

թ) իրականացնում են համապատասխան ենթակառուցվածքի շինարարություն, խնամք, վերականգնում, վերակառուցում և զարգացում,

ժ) սպասարկման որակի և կառավարման արդյունավետության բարձրացման համար ապահովում են նորարարական տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում և զարգացում,

ժա) իրականացնում են այլ միջոցառումներ:

Հոդված 21. Մունիցիպալիտետների իրավունքը համատեղ գործունեության իրականացման կազմակերպման համար

1. Մունիցիպալիտետները սույն Օրենքով սահմանված լիազորությունների արդյունավետ իրականացման և բնակչությանը որակյալ սպասարկման մատուցման նպատակով իրավունք ունեն, սույն Օրենքի և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գործող ակտերին համապատասխան, հիմնադրել սույն Օրենքով նախատեսված համատեղ մասնավոր իրավունքի իրավաբանական անձ կամ դառնալ մունիցիպալիտետի/մունիցիպալիտետների կողմից հիմնադրված ձեռնարկատիրական իրավաբանական անձի գործընկերներ/բաժնետերեր/հիմնադիրներ և ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձի անդամներ: Մունիցիպալիտետներն իրավասու են, Վրաստանի Օրենքով սահմանված դեպքերում և սահմանված կարգով, ստեղծել համատեղ ծառայություն:

Հոդված 22. Մունիցիպալիտետի անդրսահմանային համագործակցությունը

Մունիցիպալիտետն իրավազոր է համագործակցել այլ երկրների տեղական ինքնակառավարման մարմինների հետ «Վարչատարածքային միավորների կամ իշխանության մարմինների միջև անդրսահմանային համագործակցության մասին» ուղեցույց Եվրոպական կոնվենցիայի և Վրաստանի օրենսդրության համաձայն:

ԲԱԺԻՆ II. Մունիցիպալիտետի մարմինները
ԳԼՈՒԽ IV. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմինը

Հոդված 24. Մունիցիպալիտետի ավագանու լիազորությունները

1. Մունիցիպալիտետի ավագանու լիազորություններին են պատկանում.

ա) Մունիցիպալիտետի վարչատարածքային կազմակերպման և նրա նույնականության սահմանման ոլորտում.

ա.ա) մունիցիպալիտետի վարչական միավորների ստեղծումը և լուծարումը, դրանց սահմանների սահմանումը,

ա.բ) մունիցիպալիտետի ստեղծման/լուծարման, վարչական կենտրոնի սահմանման/փոփոխման և վարչական սահմանների փոփոխման մասին առաջարկությունների ներկայացումը,

ա.գ) Վրաստանի օրենսդրության համաձայն մունիցիպալիտետի խորհրդանիշների (զինանշանի, դրոշի և այլ խորհրդանիշների) որոշումը,

ա.դ) մունիցիպալիտետի պատվավոր կոչումների և պարգևների ներմուծման և շնորհման կանոնների սահմանումը,

ա.ե) պատմականորեն ձևավորված թաղամասի, այս կամ այն գոտու, աղբյուրի, հրապարակի, պողոտայի, մայրուղու, փողոցի, նրբանցքի, փակուղու, անցման, առափնյակի, էսպլանադի, ճեմուղու, պուրակի, այգու, զբոսայգու, անտառային պարկի, տեղական նշանակության անտառի, գերեզմանոցի, պանթեոնի, շենք-շինությունների, տրանսպորտային համակարգի օբյեկտի անվանումը:

բ) Կազմակերպչական գործունեության բնագավառում.

բ.ա) մունիցիպալիտետի ավագանու օրակարգի հաստատումը,

բ.բ) մունիցիպալիտետի ավագանու նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունը և պաշտոնանկ անելը,

բ.գ) մունիցիպալիտետի ավագանու անդամի իրավասության ճանաչման և նրա իրավասության վաղաժամկետ դադարեցման մասին որոշման ընդունումը,

բ.դ) մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի ստեղծումը, հանձնաժողովի նախագահի ընտրությունը և պաշտոնից ազատելը, հանձնաժողովի անհատական կազմի և կանոնակարգի հաստատումը և դրանցում փոփոխությունների կատարումը,

բ.ե) մունիցիպալիտետի ավագանու ժամանակավոր աշխատանքային խմբի ստեղծումը և լուծարումը, ժամանակավոր աշխատանքային խմբի անհատական կազմի հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

բ.զ) մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմի կանոնակարգի և հաստիքացուցակի հաստատումը,

բ.է) սույն Օրենքով նախատեսված դեպքերում Վրաստանի Սահմանադրական դատարանի և ընդհանուր դատարաններում մունիցիպալիտետի/ավագանու ներկայացուցչության լիազորություն ունեցող անձի նշանակումը,

բ.ը) նրա լիազորություններին հատկացված առանձին հարցերի ուսումնասիրման և համապատասխան եզրակացություններ և երաշխավորություններ պատրաստելու համար, ինչպես նաև Վրաստանի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և սահմանված կարգով խորհրդակցական մարմինների (խորհուրդ, հանձնաժողով և այլն) ստեղծում և դրանց գործունեության կարգի սահմանում:

գ) Մունիցիպալիտետի գործադիր մարմինների գործունեության կարգավորման և վերահսկման ոլորտում.

գ.ա) մունիցիպալիտետի գործադիր մարմինների և այս մարմինների պաշտոնատար անձանց գործունեության վերահսկումը, նրանց հաշվետվությունների լսումը և գնահատումը,

գ.բ) սույն Օրենքի ն համապատասխան քաղաքապետարանի/համայնքապետարանի

և դրա կառուցվածքային միավորների կանոնակարգերի և հաստիքացուցակների հաստատումը,

գ.գ) սույն Օրենքով սահմանված կարգով մունիցիպալիտետի՝ քաղաքապետարանին անվստահության հայտարարումը:

դ) Ֆինանսա-բյուջետային բնագավառում.

դ.ա) սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական ակտերով սահմանված կարգով մունիցիպալիտետի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը, հաստատված բյուջեում փոփոխությունների կատարումը, բյուջեի կատարման վերահսկումը և բյուջեի կատարման գնահատումը,

դ.բ) Վրաստանի օրենսդրությանը համապատասխան, տեղական հարկերի և տուրքերի ներմուծումը և դրանց չեղարկումը,

դ.գ) սույն Օրենքով նախատեսված դեպքում, մունիցիպալիտետի քաղաքապետի/համայնքապետի ներկայացմամբ, մունիցիպալիտետի անունից կնքված պայմանագրի հաստատումը, նաև այնպիսի գործարքի կնքման համար համաձայնություն տալը, որի արժեքը գերազանցում է մունիցիպալիտետի բյուջեի մուծումների 5 տոկոսը,

դ.դ) «Հանրային հաստատությունում աշխատանքի վարձատրության մասին» Վրաստանի օրենքով սահմանված քանակությամբ մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու պաշտոնեական անձանց պաշտոնեական աշխատավարձերի հաստատումը,

դ.ե) մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմի ծառայողների պաշտոնեական աշխատավարձերի քանակությունների և մունիցիպալիտետի քաղաքապետի ներկայացմամբ քաղաքապետարանի պաշտոնատար անձանց և այլ աշխատակիցների պաշտոնեական աշխատավարձերի քանակությունների սահմանումը՝ «Հանրային հաստատությունում աշխատանքի վարձատրության մասին» Վրաստանի օրենքի համաձայն:

ե) Մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման բնագավառում.

ե.ա) մունիցիպալիտետի քաղաքապետի/համայնքապետի ներկայացմամբ մունիցիպալիտետի գույքի կառավարման և տնօրինման կանոնների, ինչպես նաև 50 տոկոսից ավելի բաժնեմասային մասնակցությամբ ստեղծված ձեռնարկության գույքի տնօրինման կարգի սահմանումը սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով սահմանված կարգով,

ե.գ) Վրաստանի Կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նորմատիվ գնի, մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման մեկնարկային գնի և վարձի մեկնարկային գնի սահմանումը,

ե.դ) մունիցիպալիտետի քաղաքապետի ներկայացմամբ, մունիցիպալիտետի գույքի սեփականաշնորհման օբյեկտների և սեփականաշնորհման պլանի հաստատումը,

ե.ե) սույն Օրենքով սահմանված կարգով մունիցիպալիտետի գույքի՝ պետությանը անհատույց փոխանցման վերաբերյալ որոշման ընդունումը,

ե.զ) Վրաստանի օրենսդրության համաձայն, մունիցիպալիտետի սեփականության մեջ առկա անտառային և ջրային ռեսուրսների կառավարման կարգի հաստատումը:

2. Մունիցիպալիտետի ավագանու լիազորություններին են պատկանում նաև սույն Օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածներով նախատեսված մունիցիպալիտետի այլ լիազորությունների իրականացման հետ կապված որոշումների ընդունումը, նաև սույն Օրենքով, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով իրեն շնորհված լիազորություններ:

3. Եթե սույն Օրենքը կամ Վրաստանի Օրենսդրությունը չեն սահմանում

մունիցիպալիտետի սեփական կամ պատգամված լիազորությունների իրականացման համար պատասխանատու մունիցիպալիտետի մարմին, տվյալ լիազորությունն իրականացնում է մունիցիպալիտետի ավագանին կամ մունիցիպալիտետի ավագանու հանձնարարությամբ՝ մունիցիպալիտետի քաղաքապետը:

4. Մունիցիպալիտետի ավագանու լիազորությունը, որը սույն Օրենքով կամ Վրաստանի Օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված է՝ որպես մունիցիպալիտետի ավագանու լիազորություն, չի կարող փոխանցվել այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, եթե Օրենքն անմիջականորեն չի նախատեսում դրա փոխանցման հնարավորություն:

Հոդված 26. Մունիցիպալիտետի ավագանու գործունեության կարգը

1. Մունիցիպալիտետի ավագանու հերթական նիստերը ամիսը առնվազն մեկ անգամ հրավիրում է մունիցիպալիտետի ավագանու նախագահը:

2. Մունիցիպալիտետի ավագանու արտահերթ նիստ հրավիրվում է.

ա) մունիցիպալիտետի վարչության քաղաքապետի առաջարկությամբ,

բ) մունիցիպալիտետի ավագանու նախագահի նախաձեռնությամբ,

գ) մունիցիպալիտետի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով,

դ) մունիցիպալիտետի ավագանու խմբակցության առաջարկով,

ե) մունիցիպալիտետի տարածքում հաշվառված ընտրողների ընդհանուր թվի առնվազն 1 տոկոսի պահանջով:

3. Մունիցիպալիտետի ավագանու արտահերթ նիստի հրավիրման մասին պահանջի (առաջարկի) ներկայացման պահից մեկշաբաթյա ժամկետում մունիցիպալիտետի ավագանու նախագահը հրավիրում է արտահերթ նիստ: Եթե մունիցիպալիտետի ավագանու նախագահը մեկշաբաթյա ժամկետում չի հրավիրում արտահերթ նիստ, մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է հավաքվելու:

5. Մունիցիպալիտետի ավագանու նիստը իրավազոր է, եթե նրան ներկա է մունիցիպալիտետի ավագանու լրիվ կազմի կեսից ավելին:

6. Մունիցիպալիտետի ավագանին որոշումներն ընդունում է բաց քվեարկությամբ: Գաղտնի քվեարկություն անց է կացվում միայն անձի՝ պաշտոնին ընտրելու, պաշտոնից ազատելու և անվստահության հայտարարման հարցերի վճռման ժամանակ:

Հոդված 32. Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձինք

Մունիցիպալիտետի ավագանու պաշտոնատար անձինք են.

ա) մունիցիպալիտետի ավագանու նախագահը,

բ) մունիցիպալիտետի ավագանու նախագահի տեղակալը,

գ) մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նախագահը,

դ) մունիցիպալիտետի ավագանու խմբակցության նախագահը,

ե) մունիցիպալիտետի ավագանու խմբակցության նախագահի տեղակալը:

Հոդված 34. Մունիցիպալիտետի ավագանու նախագահին պաշտոնից ազատելը

1. Մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է պաշտոնից ազատել մունիցիպալիտետի ավագանու նախագահին:

Հոդված 40. Մունիցիպալիտետի ավագանու անդամի կարգավիճակը

1. Մունիցիպալիտետի ավագանու անդամի կարգավիճակը նրա՝ Օրենքով սահմանված իրավական վիճակն է, որը ներառում է մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունը, պատասխանատվությունը, գործունեության կարգը և երաշխիքները:

2. Մունիցիպալիտետի ավագանու անդամ կարող է ընտրվել Վրաստանի քաղաքացին, որի 21 տարին լրացած է քվեարկության օրվա պահին:

3. Մունիցիպալիտետի ավագանու անդամն օգտվում է ազատ մանդատից և թույլ չի տրվում նրա ետկանչում: Մունիցիպալիտետի ավագանու անդամն իր պարտականությունների կատարման ժամանակ չի սահմանափակված ընտրողների և իրեն ներկայացնող քաղաքական միավորման կարգադրություններով և հանձնարարություններով:

4. Թույլ չի տրվում այլ անձի փոխանցել մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունները:

5. Ազատ մանդատը մունիցիպալիտետի ավագանու անդամին չի ազատում Վրաստանի Օրենսդրությամբ և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով ընտրողների հետ աշխատելու և դրա հետ կապված պատասխանատվությունից:

6. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունն սկսվում է նրա իրավասության ճանաչման օրվանից և ավարտվում է նորընտիր մունիցիպալիտետի ավագանու առաջին գումարման կամ այս անդամի իրավասության վաղաժամկետ դադարեցման պես:

7. Մունիցիպալիտետի ավագանու անդամի լիազորությունը, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են սույն Օրենքով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

8. Մունիցիպալիտետի ավագանու անդամը պարտավոր է լինել առնվազն մունիցիպալիտետի ավագանու մեկ հանձնաժողովի կազմի մեջ: Մունիցիպալիտետի ավագանու անդամը միևնույն ժամանակ կարող է լինել այլ հանձնաժողովի կազմում, սակայն ընդհանուր առմամբ ոչ ավելի, քան երկու հանձնաժողովում:

9. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործատուն իրավունք չունի սահմանափակել մունիցիպալիտետի ավագանու անդամի՝ մունիցիպալիտետի ավագանու, նրա հանձնաժողովի, խմբակցության և ժամանակավոր աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցելու իրավունքը: Աշխատանքային պայմանագիրը, որն ներառում է պայմանավորվածություն աշխատողի իրավունքի տվյալ հիմունքով սահմանափակման մասին, չեղյալ է համարվում: Թույլ չի տրվում այս հիմունքով անձին աշխատանքից ազատել, տեղափոխել ցածր վարձատրվող աշխատանքի կամ այլ տիպի խտրականություն:

Հոդված 44. Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերը

Մունիցիպալիտետի ավագանու անդամի գործունեության ձևերն են.

ա) մասնակցությունը մունիցիպալիտետի ավագանու նիստերին,

բ) մունիցիպալիտետի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստումը և նախաձեռնումը,

գ) մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովների, խմբակցությունների և ժամանակավոր աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցելը,

դ) մունիցիպալիտետի ավագանու հանդեպ հաշվետու մարմնին/պաշտոնատար անձին հարցումով դիմելը,

ե) ընտրողների ընդունումը, նրանց նամակների, առաջարկությունների և բողոքների քննարկումը,

զ) Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված այլ ձևեր:

Հոդված 47. Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունը ընտրողների հետ

Մունիցիպալիտետի ավագանու անդամի փոխհարաբերությունն ընտրողների հետ ներառում է.

ա) Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացում՝ ընտրողների իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության համար,

բ) քաղաքացիների ընդունում,

գ) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքական միավորումների հետ համագործակցություն,

դ) կատարված աշխատանքի մասին ընտրողների տեղեկացում:

ԳԼՈՒԽ V. Մունիցիպալիտետի գործադիր մարմինը

Հոդված 48. Քաղաքապետը

1. Մունիցիպալիտետի գործադիր մարմինը և մունիցիպալիտետի բարձրագույն պաշտոնատար անձը քաղաքապետն է: Քաղաքապետը ներկայացնում է մունիցիպալիտետը և ապահովում մունիցիպալիտետի լիազորությունների իրականացում սույն Օրենքի, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գտնվող նորմատիվ ակտերի և համապատասխան մունիցիպալիտետի նորմատիվ ակտերի համաձայն:

2. Քաղաքապետը հաշվետու է մունիցիպալիտետի ավագանու և բնակչության հանդեպ:

Հոդված 49. Քաղաքապետի ընտրությունը

1. Քաղաքապետ ընտրվում է 4 տարի ժամկետով, ուղղակի ընտրություններով, համընդհանուր, հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական Օրենքով սահմանված կարգով:

2. Քաղաքապետ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող 25 տարին բոլորած Վրաստանի քաղաքացին, որը Վրաստանում ապրել է առնվազն 5 տարի:

Հոդված 50. Քաղաքապետարան

Քաղաքապետարանը մունիցիպալիտետի գործադիր մարմնին ստորադասված հաստատություն է, որն ապահովում է քաղաքապետի լիազորությունների իրականացում: Քաղաքապետարանը ղեկավարում է քաղաքապետը: Քաղաքապետարանը բաղկացած է կառուցվածքային միավորներից: Քաղաքապետարանի կառուցվածքային միավորը համապատասխան կանոնակարգով սահմանված իրավասության շրջանակներում ապահովում է մունիցիպալիտետի ավագանու և քաղաքապետի առաջադրանքների կատարում: Քաղաքապետարանի կառուցվածքային միավորը կարող է ունենալ ստորաբաժանումներ, որոնք սահմանվում են քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային միավորի կանոնակարգով և հաստիքացուցակով:

Հոդված 52. Քաղաքապետարանի պաշտոնատար անձինք

1. Քաղաքապետարանի պաշտոնատար անձինք են.

ա) քաղաքապետը,

բ) քաղաքապետի առաջին տեղակալը,

գ) քաղաքապետի տեղակալը,

դ) քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը:

ԲԱԺԻՆ III - Վրաստանի մայրաքաղաքը՝ Թբիլիսի

ԳԼՈՒԽ VII - Վրաստանի մայրաքաղաքի կարգավիճակը

Հոդված 64. Թբիլիսիի սեփական լիազորությունները

Թբիլիսիի սեփական լիազորություններն են.

ա) սույն Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները,

բ) անհետաձգելի բժշկական շտապ օգնությամբ ապահովումը,

գ) Վրաստանի մայրաքաղաքի սահմանված վարչական սահմաններում գտնվող բնական և մարդածին ... օբյեկտի անվանումը,

դ) կոշտ (կենցաղային) թափոնների կառավարումը,

ե) կեղտաջրերի մաքրումը և օգտահանումը:

Հոդված 65. Թբիլիսիի մարմինները

Թբիլիսիում տեղական ինքնակառավարումն իրականացվում է Թբիլիսիի ներկայացուցչական մարմնի՝ Թբիլիսիի ավագանու և Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգի՝ Թբիլիսիի քաղաքապետարանի միջոցով:

ԳԼՈՒԽ VIII. Թբիլիսիի ներկայացուցչական մարմինը

Հոդված 67. Թբիլիսիի ավագանին

Թբիլիսիի ավագանին Թբիլիսիի ներկայացուցչական մարմինն է, որի անդամների թիվը և ընտրության կարգը սահմանվում է «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական Օրենքով:

ԳԼՈՒԽ IX. Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգը

Հոդված 72. Թբիլիսիի քաղաքապետարանը

1. Թբիլիսիի քաղաքապետարանը (Թբիլիսիի քաղաքապետ, Թբիլիսիի կառավարություն, Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորներ և Թբիլիսիի շրջանների վարչություններ) Թբիլիսիի գործադիր մարմինների համակարգ է, որը ապահովում է Թբիլիսիի գործադիր-վարչական գործունեություն:

2. Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնեական անձինք են՝ Թբիլիսիի քաղաքապետը, Թբիլիսիի քաղաքապետի առաջին տեղակալը (փոխքաղաքապետը) և տեղակալը, Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորի ղեկավարը և Թբիլիսիի շրջանային վարչության նախագահը:

Հոդված 74. Թբիլիսիի կառավարությունը

1. Թբիլիսիի կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) կոլեգիալ գործադիր մարմին է, որը Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում ապահովում է Թբիլիսիի ավագանու որոշումների կատարում:

2. Կառավարությունը բաղկացած է Թբիլիսիի քաղաքապետից, նրա առաջին տեղակալից (փոխքաղաքապետից) և տեղակալներից, Թբիլիսիի քաղաքապետարանի կառուցվածքային միավորների ղեկավարներից (բացառությամբ Թբիլիսիի քաղաքապետարանի համակարգի մեջ մտնող, հսկողություն և վերահսկողություն իրականացնող կառուցվածքային միավորների ղեկավարների) և Թբիլիսիի շրջանների վարչությունների նախագահներից:

ԲԱԺԻՆ IV. Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը

ԳԼՈՒԽ XI. Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարման իրականացմանը

Հոդված 85. Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության երաշխիքները և ձևերը

1. Տեղական ինքնակառավարման իրականացմանը քաղաքացիների մասնակցության ապահովման համար մունիցիպալիտետի մարմինները, նրանց կառուցվածքային միավորները և պաշտոնատար անձինք պարտավոր են ստեղծել կազմակերպչական և նյութատեխնիկական պայմաններ քաղաքացիների ընդունելության, մունիցիպալիտետի մարմինների գործունեության, այդ թվում, կոլեգիալ հանրային հաստատության նիստերին քաղաքացիների մասնակցության և որոշումների ընդունման գործընթացի թափանցիկության համար:

2. Ցանկացած անձ իրավունք ունի սույն Օրենքով և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի շրջանակներում գործող ակտերով և մունիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչաիրավական ակտերով սահմանված շրջանակներում և որոշված կարգով, առանց սահմանափակման օգտվել տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության ձևերից:

3. Մունիցիպալիտետն իրավասու է տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ապահովման նպատակով մունիցիպալիտետի բյուջեի մեջ նախատեսել համապատասխան ծրագրեր:

4. Տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ձևերն են.

ա) բնակավայրի ընդհանուր ժողովը,

բ) խնդրագիրը,

գ) քաղաքացիական խորհրդականների խորհուրդը,

դ) մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նիստերին մասնակցությունը,

ե) մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվությունների լսումը:

5. Մունիցիպալիտետն իրավասու է, տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության սույն Օրենքով սահմանված ձևերից բացի, համապատասխան վարչաիրավական ակտով սահմանել տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության այլ ձևեր, որոնք չեն հակասում Վրաստանի օրենսդրությանը:

Հոդված 85[1]. Տեղեկատվության հասանելիություն

1. Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են տեղական ինքնակառավարման մեջ քաղաքացիների մասնակցության ապահովման նպատակով իրականացնել միջոցառումներ՝ իրենց գործունեության և տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության հնարավորությունների մասին մունիցիպալիտետի բնակչության իրազեկման նպատակով:

2. Մունիցիպալիտետի մարմինների և հաստատությունների, ինչպես նաև մունիցիպալիտետի բյուջեի ֆինանսավորմամբ գործող մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց գործունեության հրապարակայնության, այդ թվում կոլեգիալ մարմնի նիստի հրապարակայնության, և հանրային տեղեկատվության տրամադրման հետ կապված հարցերը կարգավորվում են սույն Օրենքով, Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի շրջանակներում գործող իրավական ակտերով և դրանց հիման վրա ընդունված ավագանու որոշումներով:

3. Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են, Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դեպքերում և որոշված կարգով հրապարակել ընդունված վարչաիրավական ակտերը, դրանց նախագծերը և այլ հանրային տեղեկատվություն: Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են նաև սույն Օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան հրապարակել և/կամ հրապարակավ հայտարարել.

ա) մունիցիպալիտետի ավագանու, մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի և մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի, ինչպես նաև կառավարության նիստերի արձանագրությունները, համապատասխան նիստի անցկացումից հետո, 10-օրյա ժամկետում,

բ) քաղաքացիական խորհրդականների խորհրդի նիստերի արձանագրությունները, համապատասխան նիստի անցկացումից հետո, 10-օրյա ժամկետում,

գ) բնակավայրի ընդհանուր ժողովի արձանագրությունները, քաղաքապետարանի համապատասխան արձանագրությունը կամ դրա պատճենը՝ ստանալուց հետո, 10-օրյա ժամկետում,

դ) սույն Օրենքին համապատասխան, տեղեկություններ բնակավայրի ընդհանուր ժողովի օրակարգի և անցկացման ամսաթվի, ժամանակի և վայրի մասին,

ե) հաշվետու տարվա մունիցիպալիտետի բյուջեի կատարողականի հաշվետվությունը, մունիցիպալիտետի ավագանուն դրա ներկայացումից հետո, 10-օրյա ժամկետում,

զ) մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը.

է) մունիցիպալիտետի սեփականաշնորհման օբյեկտների ցանկը, մունիցիպալիտետի ավագանու կողմից դրա հաստատումից հետո, 10-օրյա ժամկետում,

ը) մունիցիպալիտետի գույքի մասնավորեցման պլանը, դրա հաստատումից հետո, 10-օրյա ժամկետում,

թ) մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքների մասին սույն Օրենքով նախատեսված հաշվետվությունները, համապատասխան հաշվետվությունը ներկայացնելուց հետո, 10-օրյա ժամկետում,

ժ) խնդրագիրը՝ դրա գրանցումից հետո, 10-օրյա ժամկետում,

ժա) սույն Օրենքի 51-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված գրավոր նախաձեռնությունը, դրա գրանցումից հետո, 10-օրյա ժամկետում:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը հրապարակվում է կամ/և հրապարակավ հայտարարվում Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքի 56-րդ և 57-րդ հոդվածներին համապատասխան կամ/և հրապարակվում պրոակտիվ:

5. Մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է համապատասխան որոշմամբ ձևակերպել սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված պարտադիր հրապարակվելիք և / կամ հրապարակավ հայտարարվելիք կամ/և պրոակտիվ հրապարակվելիք տեղեկատվության ցանկը:

Հոդված 85². Բնակավայրի ընդհանուր ժողովը

1. Բնակավայրի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով) գյուղի / ավանի / քաղաքի բնակչության ինքնակազմակերպման և տեղական ինքնակառավարման իրականացման մեջ քաղաքացիների մասնակցության ձև է, որն ապահովում է համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողների՝ սույն բնակավայրի և մունիցիպալիտետի համար կարևոր հարցերի քննարկման, որոշման և տվյալ մունիցիպալիտետի մարմինների առջև նախաձեռնման գործընթացներին գործուն ներգրավվածություն:

2. Ընդհանուր ժողովի անվանումը կազմվում է համապատասխան բնակավայրի կարգի անվանումից («գյուղ»/«ավան»/«քաղաք»), բնակավայրի անվանումից և ընդհանուր անվանումից («ընդհանուր ժողով»):

3. Ընդհանուր ժողովի անդամ է համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողը: Ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունի նաև համապատասխան բնակավայրի տարածքում գոյություն ունեցող անշարժ գույքի սեփականատերը և այս բնակավայրում բնակվող այլ չափահաս անձ:

4. Սույն Օրենքը սահմանում են ընդհանուր ժողովի լիազորությունները, դրա հրավիրման և գործունեության կարգը այն բնակավայրի համար, որում գրանցված ընտրողների թիվը չի գերազանցում 2000-ը:

5. Այն բնակավայրի համար, որում գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 500-ը, կարող է սահմանվել ընդհանուր ժողովը բնակավայրի առանձին մասերում փուլերով հրավիրման ընթացակարգ: Ընդհանուր ժողովի բնակավայրի մասերում անցկացման և գործունեության կարգը սահմանում է մունիցիպալիտետի ավագանին սույն Օրենքի 855 հոդվածի 6-րդ կետի համաձայն:

6. Այն բնակավայրի համար, որում գրանցված ընտրողների թիվը գերազանցում է 2000-ը, մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է, սույն Օրենքի 5-րդ կետի համաձայն, ընդհանուր ժողովի լիազորությունները, դրա հրավիրման և գործունեության կարգը սահմանել մունիցիպալիտետի ավագանու որոշումով, ինչպես նաև այս բնակավայրում ստեղծել մի քանի ընդհանուր ժողով և, սույն Օրենքի նախատեսմամբ, սահմանել դրանց լիազորությունները, անվանումները և գործունեության կարգը:

7. Ընդհանուր ժողովն իրավունք ունի իր գործունեությունը վարելու և դրան նպաստելու նպատակով սեփական կազմից ընտրել ընդհանուր ժողովի ընտրյալ: Ընդհանուր ժողովի ընտրյալին անվանելու իրավունք ունի համապատասխան ընդհանուր ժողովի անդամների առնվազն 5%-ը:

8. Ընդհանուր ժողովի ընտրյալը վարում է ընդհանուր ժողովը, ապահովում ընդհանուր ժողովի որոշումը մունիցիպալիտետի համապատասխան մարմիններին ներկայացում, ինչպես նաև կատարում է ընդհանուր ժողովի առանձին առաջադրանքներ:

9. Ընդհանուր ժողովի ընտրյալի լիազորությունների ժամկետը որոշվում է մինչև հաջորդ ընդհանուր ժողովի գումարման ժամկետը: Ընդհանուր ժողովի ընտրյալի լիազորությունները ավտոմատ կերպով կարող են երկարաձգվել ոչ ավելի, քան 5 անգամ:

10. Ընդհանուր ժողովի գործունեության մեջ պետք է ապահովվի կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության հնարավորություն:

Հոդված 85³. Բնակավայրի ընդհանուր ժողովի լիազորությունները

1. Ընդհանուր ժողովն իրավազոր է.

ա) քննարկել համապատասխան բնակավայրի համար կարևոր սոցիալական և տնտեսական հարցեր և մունիցիպալիտետի մարմիններին ներկայացնելու համար պատրաստել համապատասխան առաջարկներ,

բ) քննարկել համապատասխան բնակավայրում իրականացվելիք նախագծերը մինչև մունիցիպալիտետի բյուջեում դրանց արտացոլումը և մունիցիպալիտետի մարմիններին ներկայացնել հիմնավորված դիտողություններ ու առաջարկություններ,

գ) քննարկել մունիցիպալիտետում ընթացիկ և իրականացվելիք նախագծերը և մունիցիպալիտետի մարմիններին ներկայացնել հիմնավորված դիտողություններ ու առաջարկություններ,

դ) կազմակերպել համապատասխան բնակավայրի կարևոր հարցերի կարգավորում, մասնավորապես, բնակավայրի տարածքի մաքրում, բարեգործական գործունեություն, բնակավայրի ենթակառուցվածքների վերանորոգում և բարելավում և այլ այն ոլորտներում տեղական բնակչության ներգրավվածություն, որը չի հակասում Վրաստանի օրենսդրությանը, և անհրաժեշտության դեպքում, օգնության համար դիմել մունիցիպալիտետի մարմիններին,

ե) որոշում կայացնել մունիցիպալիտետի ավագանուն խնդրագիր ներկայացնելու մասին,

զ) մունիցիպալիտետի քաղաքապետի նախաձեռնությամբ քննարկել բնակավայրի սահմանների որոշման և փոփոխման հարցերը և պատրաստել համապատասխան առաջարկություններ,

է) մունիցիպալիտետի համապատասխան մարմնի ներկայացմամբ քննարկել բնակավայրի տարածքում առկա գույքը մունիցիպալիտետի սեփականաշնորհման օբյեկտների ցանկի մեջ ներառելու հարցը և մունիցիպալիտետի համապատասխան մարմնին ներկայացնել իրենց դիտողությունները,

ը) քննարկել մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից ընդհանուր ժողովի ժամանակ նախաձեռնված հարցը,

թ) լիազորությունների շրջանակներում առաջադրանքներ տալ ընդհանուր ժողովի ընտրյալին,

ժ) իրականացնել սույն Օրենքով և մունիցիպալիտետի ավագանու համապատասխան որոշմամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Ընդհանուր ժողովին հարցի քննարկման հետևանքով ընդունված առաջարկությունը, դիտողությունը, առաջադրանքը ընդհանուր ժողովի որոշման տեսքով ձևակերպվում է ընդհանուր ժողովի արձանագրությամբ:

3. Ընդհանուր ժողովի որոշումը մունիցիպալիտետի համապատասխան մարմիններին արձագանքման է ներկայացվում սույն Օրենքի 855 հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով: Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են քննարկել ընդհանուր ժողովի որոշումը և քննարկման արդյունքների մասին հիմնավորված պատասխանը սույն Օրենքով և Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված ժամկետներում տեղեկացնել ընդհանուր ժողովի համապատասխան անդամներին կամ ընդհանուր ժողովի ընտրյալին:

4. Մունիցիպալիտետի մարմինները պարտավոր են ապահովել սույն հոդվածի առաջին կետի «բ» և «զ» ենթակետերով նախատեսված հարցերը ընդհանուր ժողովին քննարկմանը ներկայացնելը:

Հոդված 85[4]. Բնակավայրի ընդհանուր ժողովի հրավիրման կարգը

1. Ընդհանուր ժողովի հրավիրման նախաձեռնման իրավունք ունի.

ա) համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողների առնվազն 5%-ը,

բ) մունիցիպալիտետի քաղաքապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ մունիցիպալիտետի ավագանու միջնորդությամբ,

գ) ընդհանուր ժողովի ընտրյալը:

2. Սույն հոդվածի առաջին կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում ընդհանուր ժողովի հրավիրում նախաձեռնելու համար համապատասխան բնակավայրում գրանցված առնվազն 3 ընտրողների կազմով ստեղծվում է նախաձեռնող խումբ: Նախաձեռնող խումբը մունիցիպալիտետի քաղաքապետին ներկայացնում է դիմում ընդհանուր ժողովի հրավիրման նախաձեռնությունը գրանցելու վերաբերյալ: Դիմումի մեջ պետք է նշվի նախաձեռնող խմբի անդամի անունը, ազգանունը, հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը (գոյության դեպքում): Դիմումին պետք է կցված լինեն նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները և ընդհանուր ժողովի օրակարգը: Ընդհանուր ժողովի օրակարգի մեջ ներառված հարցերը նախաձեռնող խումբը պետք է կոնկրետ ձևակերպի:

3. Նախաձեռնող խմբի կազմը և ընդհանուր ժողովի հրավիրման մասին նախաձեռնությունը գրանցում է քաղաքապետարանը: Նախաձեռնող խմբին նախաձեռնության գրանցման տեղեկանքը տրամադրում է մունիցիպալիտետի քաղաքապետը կամ նրա կողմից լիազորված ծառայողը՝ համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո, 3 աշխատանքային օրվա ժամկետում:

4. Նախաձեռնող խմբի կազմի և ընդհանուր ժողովի հրավիրման մասին նախաձեռնության գրանցման մասին տեղեկությունները և ընդհանուր ժողովի օրակարգը, սույն Օրենքի 851-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, հրապարակվում է:

5. Գրանցումը կարող է մերժվել, եթե խախտված են սույն Օրենքի պահանջները կամ/և ընդհանուր ժողովի օրակարգի մեջ ներառված հարցերի քննարկումն ու որոշումը չի պատկանում մունիցիպալիտետի կամ/և ընդհանուր ժողովի լիազորությանը:

6. Նախաձեռնող խմբի անդամն իրավունք ունի մունիցիպալիտետի քաղաքապետի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից գրացման մերժումը բողոքարկել Վրաստանի Ընդհանուր վարչական օրենսգրքի համաձայն:

7. Նախաձեռնող խումբը ընդհանուր ժողով հրավիրելու նախաձեռնություն ունեցող ընտրողների ցանկը սկսում է կազմել գրանցման տեղեկանքը ստանալու օրվանից: Ցանկում ընդգրկում են համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի), Վրաստանի քաղաքացու անձնական համարը, գրանցման վայրը և ստորագրությունը: Ցուցակի յուրաքանչյուր թերթ ստորագրվում է նախաձեռնող խմբի անդամի կողմից:

8. Գրանցման տեղեկանքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում, նախաձեռնող խումբը մունիցիպալիտետի քաղաքապետին դիմում է ներկայացնում ընդհանուր ժողովի հրավիրման մասին: Դիմումի մեջ պետք է նշվի ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթիվը, ժամանակը և վայրը (համապատասխան բնակավայրի տարածքի շրջանակներում): Դիմումին պետք է կցվի սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով հավաքված, համապատասխան բնակավայրում գրանցված ընտրողների առնվազն 5%-ի ստորագրությունը:

9. Ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթիվ կարող է սահմանվել սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված դիմումը ներկայացնելու օրվանից ոչ վաղ, քան 15-րդ օրը:

10. Ընդհանուր ժողովն իրավասու է գումարվել ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթվի, ժամանակի և վայրի մասին տեղեկությունների գրանցման տեղեկանքը ստանալու դեպքում: Գրանցման տեղեկանքը տրամադրում է մունիցիպալիտետի քաղաքապետը կամ նրա կողմից լիազորված պետական ծառայողը՝ համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Մունիցիպալիտետի քաղաքապետի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից գրացման մերժումը կարող է բողոքարկվել սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն:

11. Ընդհանուր ժողովի օրակարգի և հրավիրման ամսաթվի, ժամանակի և վայրի մասին տեղեկությունը սույն Օրենքի 85^1-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հրապարակվում է տեղեկատվության գրանցումից հետո՝ 3 օրվա ընթացքում:

12. Սույն հոդվածի առաջին կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում ընդհանուր ժողովի հրավիրման մասին նախաձեռնությունը քաղաքապետարանի կողմից գրանցում չի պահանջում: Տվյալ դեպքում ընդհանուր ժողովի հրավիրման ամսաթվի, ժամանակի և վայրի մասին տեղեկությունը գրանցվում է սույն հոդվածի 8-11-րդ կետերով սահմանված կարգով, բացառությամբ ընդհանուր ժողովի հրավիրման նախաձեռնություն ունեցող ընտրողների ցուցակի ներկայացման ընթացակարգի:

13. Մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից ընդհանուր ժողովի հրավիրման նախաձեռնումը տեղի է ունենում սույն հոդվածի 4-րդ, 9-րդ և 11-րդ կետերի պահանջների պահպանմամբ: Մունիցիպալիտետի ավագանու միջնորդությամբ մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից ընդհանուր ժողովի հրավիրման ընթացակարգը սահմանում է մունիցիպալիտետի ավագանին: Մունիցիպալիտետի քաղաքապետն իրավունք ունի ընդհանուր ժողովի օրակարգի մեջ ընդգրկել ընդհանուր ժողովի ընտրյալին ընտրելու հարցը:

14. Այն բնակավայրում, որտեղ ընտրվել է ընդհանուր ժողովի ընտրյալ, մունիցիպալիտետի քաղաքապետը պարտավոր է ապահովել սեփական նախաձեռնությամբ ընդհանուր ժողովի հրավիրում տարին առնվազն 2 անգամ:

15. Ընդհանուր ժողովի հրավիրման կազմակերպումը, այդ թվում սույն հոդվածի 11-րդ կետով նախատեսված տեղեկատվության համապատասխան բնակավայրում տարածումն ապահովում են քաղաքապետարանը և նախաձեռնող խումբը, ինչպես նաև ընդհանուր ժողովի ընտրյալը (այսպիսինի գոյության դեպքում):

Հոդված 85[5]. Բնակավայրի ընդհանուր ժողովի գործունեության կարգը

1. Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե դրան մասնակցում է ընդհանուր ժողովի անդամների առնվազն 20%-ը: Ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների գրանցման կազմակերպումն ապահովում է/ապահովում են նախաձեռնող խումբը կամ/և քաղաքապետարանի իրավասու պաշտոնյան կամ/և ընդհանուր ժողովի անդամները: Գրանցման ժամանակ նշվում է ընդհանուր ժողովի անդամի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի), Վրաստանի քաղաքացու անձնական համարը, գրանցման վայրը և ստորագրությունը:

2. Ընդհանուր ժողովը սույն Օրենքի 85[4]-րդ հոդվածի առաջին կետի «ա» ենթակետի հիման վրա հրավիրելու դեպքում ընդհանուր ժողովի գործունեությունը վարում է նախաձեռնող խմբի այն անդամը, որի ստորագրությունը համապատասխան դիմումի մեջ առաջինն է նշված, իսկ դրա բացակայության դեպքում՝ նախաձեռնող խմբի այլ անդամի կամ նախաձեռնող խմբի համաձայնությամբ՝ քաղաքապետարանի իրավազոր պաշտոնյան: Ընդհանուր ժողովը սույն Օրենքի 85[4]-րդ հոդվածի առաջին կետի «բ» ենթակետի հիման վրա հրավիրելու դեպքում ընդհանուր ժողովի գործունեությունը վարում է քաղաքապետարանի իրավազոր պաշտոնյան: Այն բնակավայրում, որտեղ ընտրված է ընդհանուր ժողովի ընտրյալ, ընդհանուր ժողովի գործունեությունը վարում է ընդհանուր ժողովի ընտրյալը:

3. Ընդհանուր ժողովի արձանագրության կազմումն ապահովում է ընդհանուր ժողովի քարտուղարը, սույն Օրենքի 85[4]-րդ հոդվածի, առաջին կետի, «ա» ենթակետի հիման վրա հրավիրման դեպքում ընդհանուր ժողովի քարտուղարի գործառույթն իրականացնում է նախաձեռնող խմբի անդամը, իսկ սույն Օրենքի 85[4]-րդ հոդվածի առաջին կետի «բ» ենթակետի հիման վրա հրավիրելու դեպքում՝ քաղաքապետարանի իրավազոր պաշտոնյան: Այն բնակավայրում, որտեղ ընտրված է ընդհանուր ժողովի ընտրյալ, ընդհանուր ժողովի գործունեությունը վարում է ընդհանուր ժողովի ընտրյալը կամ նրա կողմից լիազորված անձը:

4. Ընդհանուր ժողովը որոշում է կայացնում ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկությունը սովորաբար անցկացվում է ձեռք բարձրացնելով: Քվեարկության ձևը ընդհանուր ժողովի անդամներին ծանոթացնում է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված անձը: Ընդհանուր ժողովի որոշումով կարող է սահմանվել քվեարկության այլ ձև: Ընդհանուր ժողովը փուլերով, բնակավայրի առանձին մասերում անցկացնելու ժամանակ գումարվում են ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների բոլոր ձայները, եթե սույն հոդվածի 6-րդ կետով նախատեսված մունիցիպալիտետի ավագանու որոշմամբ այլ բան չի սահմանված:

5. Ընդհանուր ժողովի ժամանակ կազմվում է ընդհանուր ժողովի արձանագրություն: Ընդհանուր ժողովի արձանագրության մեջ պետք է նշել ընդհանուր ժողովի անցկացման ամսաթիվը և վայրը, արձանագրության համարը, ընդհանուր ժողովի կողմից քննարկված հարցը և կայացված որոշումը, ընդհանուր ժողովին ներկա ընդհանուր ժողովի անդամների թիվը և, անհրաժեշտության դեպքում, այլ տեղեկություններ: Ընդհանուր ժողովի արձանագրությունը ստորագրում են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված անձինք: Ընդհանուր ժողովի արձանագրության պատճենի քաղաքապետարան ներկայացումն ապահովում է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված անձը՝ ընդհանուր ժողովի անցկացումից հետո, 7-օրյա ժամկետում:

6. Մունիցիպալիտետի ավագանին որոշումով հաստատում է ընդհանուր ժողովի տիպիկ կանոնադրությունը: Ընդհանուր ժողովի տիպիկ կանոնադրությամբ սույն Օրենքի համաձայն սահմանվում են ընդհանուր ժողովի հրավիրման հետ կապված այլ հարցեր, ընդհանուր ժողովը բնակավայրի մասերում անցկացման, ընդհանուր ժողովին հարցերի նախաձեռնման, դրանց քննարկման և քվեարկության անցկացման ընթացակարգը, ընդհանուր ժողովի քարտուղարի և ընդհանուր ժողովի ընտրյալի իրավունքները և պարտականությունները, ընդհանուր ժողովի ընտրյալին ընտրելու ընթացակարգը: Սույն Օրենքին և Վրաստանի այլ օրենսդրական և օրենքի ոլորտում գործող ակտերին համապատասխան ընդհանուր ժողովի տիպիկ կանոնադրությամբ կարող են սահմանել ընդհանուր ժողովի գործունեության հետ կապված այլ հարցեր:

Հոդված 86. Խնդրագիր

1. Խնդրագիր ներկայացնելու իրավունք ունեն հետևյալ սուբյեկտները.

ա) մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողների առնվազն 1% -ը,

բ) ընդհանուր ժողովը:

2. Մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է խնդրագիր ներկայացնելու իրավունք շնորհել մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողների ավելի պակաս քանակի:

3. Ընդհանուր ժողովի որոշման համաձայն, ընդհանուր ժողովի անունից խնդրագրի ներկայացում է ապահովում ընդհանուր ժողովի ընտրյալը կամ/և ընդհանուր ժողովի կողմից լիազորված անձը:

4. Խնդրագիրը գրվում է և ներկայացվում քաղաքապետարանի ավագանու անունով: Խնդրագրի տեսքով կարող են ներկայացվել.

ա) նորմատիվ վարչաիրավական ակտի նախագիծը,

բ) նախապատրաստվելիք նորմատիվ վարչաիրավական ակտի նախագծի հիմնական սկզբունքները կամ կոնկրետ առաջարկները,

գ) մունիցիպալիտետի կամ/և բնակավայրի համար ընդհանուր նշանակության խնդիրներից ելնելով՝ հարցերը մունիցիպալիտետի ավագանու նիստին ուսումնասիրման, քննարկման և վճռման պահանջը:

5. Խնդրագիրը պետք է ներառի.

ա) համապատասխան դիմումի տեքստը,

բ) խնդրագիրը ներկայացնող սուբյեկտի զեկուցողի/զեկուցողների (ոչ ավելի, քան 3 հոգի) անունը, ազգանունը, հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը (առկայության դեպքում) և Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ) խնդրագիրը ներկայացնելու ամսաթիվը.

դ) սույն հոդվածի առաջին կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում՝ համապատասխան մունիցիպալիտետի տարածքում խնդրագիր ներկայացնող ընտրողների ցուցակը,

ե) սույն հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում՝ նորմատիվ վարչաիրավական ակտի նախագիծը, իսկ սույն հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում՝ նախապատրաստվելիք նորմատիվ վարչաիրավական ակտի նախագծի հիմնական սկզբունքները կամ կոնկրետ առաջարկները,

զ) սույն հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքում՝ կոնկրետ ձևակերպված պահանջը և համապատասխան հիմնավորումը:

6. Համապատասխան մունիցիպալիտետի տարածքում գրանցված խնդրագիր ներկայացնող ընտրողների ցուցակը պետք է ներառի հետևյալ տվյալները. համապատասխան մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի), Վրաստանի քաղաքացու անձնական համարը, գրանցման վայրը և ստորագրությունը:

7. Խնդրագիրը գրանցում է մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը: Այն ապահովում է խնդրագրի սույն Օրենքի 85[1]-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հրապարակում:

8. Խնդրագիրը ներկայացնող սուբյեկտի զեկուցողին/զեկուցողներին խնդրագրի գրանցման վկայականը տրվում է այն գրանցման անցկացնելու մասին դիմելուց հետո, 3 աշխատանքային օրվա ժամկետում: Գրանցումը կարող է մերժվել, եթե խախտված են սույն Օրենքի պահանջները կամ/և խնդրագրով նախատեսված հարցի լուծումը չի պատկանում մունիցիպալիտետի իրավազորությանը:

9. Խնդրագիրը ներկայացնող սուբյեկտի զեկուցողը/զեկուցողներն իրավունք ունի/ունեն գրանցման մերժումը Վրաստանի օրենսդրության համապատասխան բողոքարկել դատարանում:

10. Սույն հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խնդրագիրը մունիցիպալիտետի ավագանին քննարկում է և համապատասխան որոշում կայացնում մունիցիպալիտետի ավագանու որոշման ընդունման համար սույն Օրենքով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով:

11. Սույն հոդվածի 4-րդ կետի «բ» կամ «գ» ենթակետերով նախատեսված խնդրագիրը մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի որոշումով, նրա գրանցումից հետո, 7 օրվա ժամկետում ուսումնասիրման է փոխանցվում մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովին կամ մունիցիպալիտետի ավագանուն՝ մունիցիպալիտետի ավագանու աշխատանքային խումբ ստեղծելու առաջարկով, կամ տվյալ խնդրագիրը, իրավազորության համապատասխան, քննարկման է ուղարկվում մունիցիպալիտետի քաղաքապետին: Մունիցիպալիտետի ավագանին, մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի կողմից խնդրագրի ուղարկումից հետո, 1 ամսվա ընթացքում որոշում է կայացնում խնդրագրի ուսումնասիրման համար մունիցիպալիտետի ավագանու աշխատանքային խմբի ստեղծման նպատակահարմարության մասին կամ խնդրագիրն ուղարկում է մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովին:

12. Մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը սույն հոդվածի 11-րդ կետով սահմանված կարգով ընդունումից հետո, 15 օրվա ընթացքում քննարկում է և կայացնում հետևյալ որոշումներից մեկը.

ա) խնդրագրի համաձայն մունիցիպալիտետի ավագանու որոշման նախագծի պատրաստումը նպատակահարմար համարելու վերաբերյալ,

բ) սույն հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված խնդրագրի ուսումնասիրման և մունիցիպալիտետի ավագանու նիստին քննարկման ներկայացնելու վերաբերյալ,

գ) խնդրագրի քննարկումը ոչ նպատակահարմար համարելու մասին:

13. Սույն հոդվածի 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված որոշումները, ընդունելուց հետո, 5-օրյա ժամկետում պետք է տեղեկացվեն խնդրագիրը ներկայացնող սուբյեկտին:

14. Սույն հոդվածի 12-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված որոշման կայացման դեպքում, նրա կայացումից հետո, 1 ամսվա ժամկետում մունիցիպալիտետի ավագանու նիստին քննարկման է ներկայացվում համապատասխան նորմատիվ վարչաիրավական ակտի նախագիծը: Մունիցիպալիտետի ավագանին համապատասխան որոշման նախագիծը քննարկում է մունիցիպալիտետի ավագանու որոշում ընդունելու համար, սույն Օրենքով և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:

15. Սույն հոդվածի 12-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված որոշումն ընդունելու դեպքում, նրա ընդունումից 1 ամսվա ժամկետում պատրաստվում է խնդրագրի մասին եզրակացություն և խնդրագիրը եզրակացության հետ քննարկման է ներկայացվում մունիցիպալիտետի ավագանու նիստին: Մունիցիպալիտետի ավագանին խնդրագրի հետ կապված համապատասխան որոշումն ընդունում է 1 ամսվա ընթացքում:

16. Սույն հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված որոշումը, ընդունելուց հետո, 15- օրյա ժամկետում ներկայացվում է մունիցիպալիտետի ավագանուն: Մունիցիպալիտետի ավագանին համապատասխան տեղեկատվությունն ընդունում է ի գիտություն կամ չի համաձայնում մունիցիպալիտետի ավագանու համապատասխան հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի որոշման հետ և ընդունում է այլ, համապատասխան որոշում:

17. Սույն հոդվածի 14-րդ և 15-րդ կետերով սահմանված ժամկետները մունիցիպալիտետի ավագանու որոշմամբ կարող է երկարաձգվել 1 ամսով:

18. Մունիցիպալիտետի քաղաքապետը պարտավոր է քննարկել մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի կողմից լիազորությունների համաձայն ուղարկված խնդրագիրը և քննարկման արդյունքների մասին մունիցիպալիտետի ավագանուն և խնդրագիրը ներկայացնող սուբյեկտին տեղեկացնել՝ խնդրագիրը քննարկման ընդունելուց հետո 1 ամսվա ժամկետում: Այս ժամկետը մունիցիպալիտետի ավագանու բյուրոյի համաձայնությամբ կարող է երկարաձգվել 1 ամսով:

19. Մունիցիպալիտետի ավագանու/ավագանու հանձնաժողովի/աշխատանքային խմբի նիստին խնդրագիրը ներկայացնում է/ներկայացնում են և մունիցիպալիտետի ավագանու/ավագանու հանձնաժողովի/աշխատանքային խմբի նիստին սույն Օրենքի 87-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է/մասնակցում են խնդրագիրը ներկայացնող սուբյեկտի զեկուցողը/զեկուցողները:

20. Սույն հոդվածի 18-րդ կետով նախատեսված դեպքում մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է մունիցիպալիտետի քաղաքապետից պահանջել խնդրագրի քննարկման արդյունքների մասին հաշվետվությունը կամ/և խնդրագրի մասին լրացուցիչ տեղեկատվությունը անձամբ ներկայացնել մունիցիպալիտետի ավագանու նիստին:

21. Խնդրագրի քննարկումից հետո մունիցիպալիտետի ավագանին համապատասխան որոշումը, ընդունելուց հետո, 10 օրվա ժամկետում տեղեկացնում է խնդրագիրը ներկայացնող սուբյեկտին, բացի սույն հոդվածի 22-րդ կետով նախատեսված դեպքից:

22. Եթե խնդրագիրը ներկայացված է ընդհանուր ժողովի կողմից, խնդրագրի քննարկման արդյունքների մասին տեղեկատվությունը մունիցիպալիտետի մարմինների համապատասխան ծառայողները ընդհանուր ժողովին պետք է ներկայացնեն անմիջականորեն՝ համապատասխան որոշումն ընդունելուց հետո, 10 օրվա ժամկետում:

23. Խնդրագրի գրանցման, ստորագրությունների ստուգման և խնդրագրի քննարկման հետ կապված այլ ընթացակարգեր սույն հոդվածի համաձայն սահմանվում են մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով:

24. Մունիցիպալիտետի ավագանին իրավազոր է սույն հոդվածի նորմերի նախատեսմամբ, մունիցիպալիտետի ավագանու որոշումով սահմանել խնդրագրի էլեկտրոնային ձևով ներկայացման կարգը:

Հոդված 86[1]. Քաղաքացիական խորհրդականների խորհուրդ

1. Քաղաքացիական խորհրդականների խորհուրդը մունիցիպալիտետի քաղաքապետի/շրջանային վարչության նախագահի խորհրդակցական մարմին է: Քաղաքացիական խորհրդականների խորհրդի կազմի մեջ են մտնում ձեռնարկատիրական իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպությունների և մունիցիպալիտետի բնակչության ներկայացուցիչները: Սույն Օրենքի համաձայն, քաղաքացիական խորհրդականների խորհրդի կազմը հաստատում է մունիցիպալիտետի քաղաքապետը/շրջանային վարչության նախագահը: Քաղաքացիական խորհրդականների խորհրդի կազմը սահմանվում է առնվազն 10 անդամներով:

2. Քաղաքացիական խորհրդականների խորհրդում մեկ սեռի ներկայացուցիչների թիվը չպետք լինի 1/3-ից պակաս: Քաղաքացիական խորհրդականների խորհուրդն իրավազոր չէ, եթե խախտված է սույն կետի պահանջը:

3. Մունիցիպալիտետի քաղաքապետը պարտավոր է իր կողմից հաստատված քաղաքացիական խորհրդականների խորհրդին քննարկման ներկայացնել մունիցիպալիտետի բյուջեի նախագիծը, մունիցիպալիտետի տարածքային պլանավորման փաստաթղթեր, մունիցիպալիտետի աշխարհագրական օբյեկտների անվանակոչության մասին առաջարկներ, ինչպես նաև այլ կարևոր վարչաիրավական ակտերի նախագծեր, ենթակառուցվածքային և սոցիալական նախագծեր: Մունիցիպալիտետի քաղաքապետի կողմից հաստատված քաղաքացիական խորհրդականների խորհրդի այլ լիազորություններ և նրա գործունեության կարգը սահմանվում են քաղաքացիական խորհրդականների խորհրդի կանոնադրությամբ, որը հաստատում է մունիցիպալիտետի քաղաքապետը:

4. Շրջանային վարչության կողմից հաստատված քաղաքացիական խորհրդականների խորհրդի լիազորություններն ու գործունեությունը սահմանվում է Վարչապետի կողմից հաստատված Քաղաքացիական խորհրդականների խորհրդի կանոնադրությամբ:

5. Քաղաքացիական խորհրդականների խորհրդի որոշումը կազմվում է Քաղաքացիական խորհրդականների խորհրդի նիստի արձանագրությամբ: Քաղաքացիական խորհրդականների խորհուրդը գումարվում է առնվազն 3 ամիսը մեկ անգամ:

Հոդված 87. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի նիստերին մասնակցությունը

1. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի, ինչպես նաև կառավարության նիստերը հրապարակային են, բացառությամբ Վրաստանի Օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Ցանկացած անձ իրավունք ունի, առանց նախնական ծանուցման կամ/և առանց թույլտվության ներկա գտնվելու մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի հրապարակային նիստերին:

3. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի հանրային նիստերին ներկա գտնվել ցանկացողների համար նիստերի դահլիճում պետք է տեղեր լինեն առանձնացված: Եթե նիստին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց թիվը գերազանցում է նիստի ժամանակ նիստերի դահլիճում նրանց համար հատկացված տեղերի քանակը, մունիցիպալիտետի ավագանու աշխատակազմը պարտավոր է ապահովել իր ձեռքի տակ եղած այնպիսի տեխնիկական միջոցների օգտագործում, ինչը նիստին մասնակցել ցանկացողներին նիստի ընթացքը լսելու հնարավորություն կտա:

4. Մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու հանձնաժողովի հանրային նիստերին ներկա գտնվող անձինք իրավունք ունեն, առանց նախնական թույլտվության, սակայն միայն նիստի նախագահի համաձայնության դեպքում, մունիցիպալիտետի ավագանու և մունիցիպալիտետի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով հարցեր տալ զեկուցողներին և համազեկուցողներին, տալ բացատրություն և կատարել հայտարարություն, ներկայացնել տեղեկատվություն:

Հոդված 88. Մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվությունների լսումը

1. Մունիցիպալիտետի քաղաքապետը և մունիցիպալիտետի ավագանու անդամը պարտավոր են տարին առնվազն մեկ անգամ, ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 1-ը, մունիցիպալիտետի ավագանու համապատասխան որոշմամբ սահմանված կարգով կազմակերպել հանրային հանդիպումներ մունիցիպալիտետի ընտրողների հետ և նրանց հաշվետվություն ներկայացնել կատարված աշխատանքի մասին, հաշվետվության քննարկման ժամանակ պատասխանել մունիցիպալիտետի ընտրողների կողմից տրված հարցերին:

2. Մունիցիպալիտետի տարածքում գրանցված ընտրողն իրավունք ունի առանց սահմանափակման ներկա գտնվել մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի հանրային հաշվետվությունների քննարկմանը:

3. Մունիցիպալիտետի համապատասխան մարմինները պարտավոր են ապահովել մունիցիպալիտետի քաղաքապետի և մունիցիպալիտետի ավագանու անդամի կողմից կատարված աշխատանքի մասին սույն Օրենքով նախատեսված հաշվետվությունների հրապարակում:

ԲԱԺԻՆ VI. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական վերահսկողությունը և աուդիտը (հաշվեստուգումը): Ուղղակի պետական կառավարում

ԳԼՈՒԽ XVI. Մունիցիպալիտետի մարմինների գործունեության պետական վերահսկողությունը

Հոդված 129. Պետական վերահսկողության հասկացությունը և տեսակները

1. Պետական վերահսկողությունը գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացված գործունեություն է, որի նպատակն է մունիցիպալիտետի մարմինների գործունեության օրինականության և պատգամված լիազորությունների պատշաճ իրականացման ապահովումը:

2. Պետական վերահսկողության տեսակներն են՝ իրավական վերահսկողություն և ոլորտային վերահսկողություն:

3. Իրավական վերահսկողությունն իրականացվում է մունիցիպալիտետի ավագանու նորմատիվ վարչաիրավական ակտերի՝ Վրաստանի Օրենսդրությանը համապատասխանության ապահովման համար:

4. Ոլորտային վերահսկողությունն ապահովում է մունիցիպալիտետի կողմից իրեն պատգամված լիազորությունների օրինական և պատշաճ իրականացում:

Օգտակար ռեսուրսներ 3

Գլուխ XII. Խորհրդարանական ընտրություններ

Հոդված 109. Վրաստանի խորհրդարանի ընտրության կարգը և լիազորությունների ժամկետը

1. Վրաստանի խորհրդարանի 77 անդամներ ընտրվում են համամասնական ընտրակարգով և 73 անդամ `մեծամասնական ընտրակարգով:

2. Վրաստանի խորհրդարանն ընտրվում է 4 տարի ժամկետով:

Հոդված 111. Պասիվ ընտրական իրավունք

1. Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 21 տարեկան հասակից, ով տիրապետում է վրացերենին:

2. Վրաստանի խորհրդարանի անդամ չի կարող ընտրվել քաղաքացին, ով վերջին 2 տարվա ընթացքում չի ապրել Վրաստանում և ոչ մի երկրում չի գտնվում Վրաստանի հյուպատոսական հաշվառման:

3. Վրաստանի խորհրդարանի անդամը չի կարող ընտրվել թմրամոլ կամ թմրամիջոցներ օգտագործող անձը, իսկ եթե այս անձին համապատասխան ընտրական հանձնաժողովը ընտրված է հայտարարել, Վրաստանի խորհրդարանն իրավունք չունի ճանաչել նրա լիազորությունները:

Գլուխ XV. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ

Հոդված 134. Ակտիվ և պասիվ ձայնի իրավունք

1. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու անդամ կարող է ընտրվել Վրաստանի քաղաքացին, ում 21 տարին լրացել է քվեարկության օրվա պահին և Վրաստանում ապրել է առնվազն 5 տարվա ընթացքում:

2. Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկան հասակից, ով Վրաստանում ապրել է առնվազն 5 տարվա ընթացքում:

3. Վրաստանի քաղաքացին չի կարող միաժամանակ հանդիսանալ մեկ այլ ներկայացուցչական մարմնի կամ ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետը/ինքնակառավարվող համայնքի համայնքապետը:

Հոդված 135. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու և ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի /ինքնակառավարվող համայնքի համայնքապետի լիազորությունների ժամկետները

1. Հերթական ընտրություններում ընտրված մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու և ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի/ինքնակառավարվող համայնքի համայնքապետի լիազորությունների ժամկետը 4 տարի է:

2. Ավագանու նոր կազմի լիազորությունը սկսվում է, իսկ հնինն ընդհատվում է նորընտիր ավագանու առաջին գումարման պես:

4. Ինքնակառավարվող քաղաքի նորընտիր քաղաքապետի/ինքնակառավարվող համայնքի նորընտիր համայնքապետի լիազորությունը սկսվում է, իսկ հին քաղաքապետի/համայնքապետի լիազորությունները դադարում են համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելուց (քաղաքապետին/համայնքապետին ընտրված հայտարարելուց) հետո, 11-րդ օրը:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱԿՏԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հանրային իշխանության ընտրովի մարմիններ և պաշտոնեական անձանց քվեարկության միջոցով ընտրելու քաղաքացու իրավունքը:

ԱՆԳԼՈՍԱՔՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

անգլալեզու երկրներ՝ ԱՄՆ, Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա և այլն:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

կառավարման համակարգ, երբ հանրային իշխանության մի շարք գործառույթների իրականացման իրավունքը փոխանցվում է ինքնակառավարման մարմիններին:

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐ

ենթադրվում են Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրները:

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

բազմակողմանի միջազգային հանդիպում և խորհրդակցություն՝ բարձրագույն մակարդակով:

ԳԱՂՏՆԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ընտրությունների անցկացում քվեաթերթիկներով, երբ ընտրողներն ուրիշներից գաղտնի շրջագծում են իրենց համար ցանկալի թեկնածուի անունը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

իշխանության ճյուղ, որն իրականացնում է ներկայացուցչական մարմնի կողմից ընդունված որոշումները հանրային ծառայության ոլորտում:

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(լատ.՝ censura) - իշխանության կողմից տպագիր մամուլի, բեմականացումների, ռադիո և հեռուստահաղորդումների, իսկ երբեմն մասնավոր գրագրության ստուգում, որպեսզի թույլ չտան կամ սահմանափակեն իշխանության համար անընդունելի տեղեկատվության տարածումը: Ժողովրդավարական երկրների օրենսդրությունը ճանաչում է տեղեկատվության ազատություն և արգելում գրաքննությունը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հանրային իշխանության ներկայացուցչական մարմինների (օրինակ՝Խորհրդարան, ավագանի) և հանրային իշխանության պաշտոնեական անձանց (քաղաքապետ) ընտրությունը քվեարկությամբ:

ԹԵՐԹ՝ ԼՐԱԳԻՐ

(իտալ.՝ Gazzeta) որոշակի պարբերականությամբ, կանոնավոր կերպով լույս տեսնող հրատարակում, որն ընդգրկում է հասարակության համար նշանակալի և հետաքրքիր նորություններ, հոդվածներ տարբեր թեմաներով, նաև խմբագրական հոդվածներ և գովազդ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

պետություն, որը հիմնված է ժողովրդավարական կառավարման վրա:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(հուն. ժողովրդի կառավարում) – քաղաքական կարգի առաջադիմական ձև, որը հիմնված է մեծամասնության կառավարման վրա:

- ***Ուղղակի ժողովրդավարություն*** *– ժողովրդավարական կառավարման ձև, երբ որոշումների ընդունման գործընթացի մեջ ներգրավված են անմիջապես բոլոր քաղաքացիները:*
- ***Ներկայացուցչական ժողովրդավարություն*** *– ժողովրդավարական կառավարման ձև, երբ քաղաքացիներն ընտրում են ներկայացուցիչներին՝ իրենց ընտրյալներին (Խորհրդարան, Ավագանի) և նրանց վստահում կարևոր հարցերի լուծումը, իսկ իրենք ընտրությունների միջոցով վերահսկում են իրենց ներկայացուցչի աշխատանքը:*

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔ

մի քանի բնակավայրերի (ուրբանային՝ քաղաքի և ավանի և ռուռալ՝ գյուղի) միասնություն, որին, համաձայն Ինքնակառավարման օրենսգրքի, շնորհվել է մունիցիպալիտետի կարգավիճակ (մինչև 2006 թվականը դրանք շրջաններ էին կոչվում): Համայնքի կենտրոնը կարող է լինել այնպիսի քաղաք, որն ինքնակառավարվող քաղաքի կարգավիճակ չունի:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՄԻԱՎՈՐ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ)

տեղական կառավարման պաշտոնական անվանում Վրաստանի օրենսդրությամբ: Ինքնակառավարվող միավորները երկու տեսակի են՝ ինքնակառավարվող քաղաք և ինքնակառավարվող համայնք:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՔԱՂԱՔ

ուրբանային (քաղաքային) տիպի բնակավայր է, որը միտված է քաղաքներին բնորոշ հարցերի լուծման և որին Ինքնակառավարման օրենսգիրքը շնորհել է մունիցիպալիտետի կարգավիճակ:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Եվրոպական խարտիայի համաձայն, իշխանության տեղական մարմինների իրավունքն ու հնարավորությունը, Օրենքի շրջանակներում կարգավորել և վարել հասարակական գործերի նշանակալի մասը սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերին համապատասխան:

ԼՐԱԳՐՈՂ

անձ, որը հայթայթում, մշակում և տարածում է տեղեկատվությունը: Արդի դարաշրջանում այլևս պարտադիր չէ, որ լրագրողը լինի որևէ լրատվամիջոցի աշխատակից, նա կարող է անկախ աշխատել:

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժուռնալիստիկա)

հասարակական գործունեության բնագավառներից մեկն է: Նրա նպատակը հրատապ տեղեկատվության հայթայթումը, մշակումը և տարածումն է զանգվածային հաղորդակցության միջոցներով: «Ժուռնալիստիկա» տերմինն առաջացել է ֆրանսերեն “Journal” (օրագիր, թերթ, պարբերական հրատարակություն) բառից, որն իր հերթին բխում է լատիներենից: Սկզբից այն միայն տպագիր մամուլ՝ թերթեր, ամսագրեր, տարբեր հրատարակումներ էր նշանակում: Ժամանակի ընթացքում, տերմինն ընդլայնվեց և այսօրվա դրությամբ ընդգրկում է լրագրության ընդարձակ գունապատկերը:

ԽԱՐՏԻԱ

հասարակական-քաղաքական նշանակության որոշ փաստաթղթերի անվանում, հռչակագրի հոմանիշ:

ԽՄԲԱԳԻՐ

(ֆր.՝ Rédacteur) - 1. անձ, ով գրքի, ամսագրի, թերթի հրատարակումն է գլխավորում, հաստատում նրա բովանդակությունը, 2. անձ, ով խմբագրում է տեքստը:

ԽՆԴՐԱԳԻՐ

մունիցիպալիտետի տարածքում.

- հաշվառված ընտրողների ընդհանուր քանակի առնվազն 1 տոկոսի կամ
- կոնկրետ բնակավայրի ընդհանուր ժողովի

իրավունքը պատրաստել և ավագանուն ներկայացնել որևէ հրատապ հարցի վճռման նախագիծ: Ավագանին պարտավոր է մեկամսյա ժամկետում քննարկել այն: Քննարկմանը մասնակցելու և զեկուցումով հանդես գալու իրավունք ունեն նաև խնդրագիրը նախաձեռնողները:

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

կառավարումը մեկ կենտրոնում հավաքել՝ տեղական ինքնակառավարման և իրավունքների սահմանափակման հաշվին:

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խորհրդարանի և Ավագանու անդամների ընտրություն՝ ըստ կուսակցական ընտրացուցակների:

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ծառայություն և ապրանք, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության կարիքներով, և որն ի զորու է մատուցել միայն հանրային (տեղական կամ պետական) իշխանությունը: Հանրային ծառայությունը ներառում է այնպիսի ոլորտներ, որոնք ընդհանրապես բոլորի համար են ստեղծում բարիք (ճանապարհաշինություն, լուսավորում, խմելու ջրի մատակարարում, դպրոցների ստեղծում և գործունեություն, քաղաքացիների անվտանգություն և այլն):

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂ

Հանրային հեռարձակողը, Հասարակական հեռարձակողի Աջարիայի հեռուստատեսությունը և ռադիոն, լիցենզավորված կամ ավտորիզացված ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն անձնական խմբագրական պատասխանատվությամբ սեփական հաղորդակցական ցանցով սահմանված ժամանակի ընթացքում իրականացնում է նյութերի հեռարձակում և միաժամանակ հասանելի է դիտողին/ունկնդրին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

պաշտոնական փաստաթուղթ (այդ թվում՝ գծագիր, մանրակաղապար, գծապատկեր, լուսանկար, էլեկտրոնային տեղեկատվություն, տեսա- և աուդիոձայնագրություններ) կամ հանրային հաստատությունում պահպանված, նաև ստացած հանրային հաստատության կամ ծառայողի կողմից՝ կապված ծառայողական գործունեության հետ, մշակված, ստեղծված կամ ուղարկված տեղեկատվություն: Բոլորը կարող են ծանոթանալ հանրային հաստատությունում առկա հանրային տեղեկատվությանը, եթե այն չի պարունակում պետական, կոմերցիոն կամ անձնական գաղտնիք: Հանրային հաստատությունը պարտավոր է ապահովել հանրային տեղեկատվության պատճենի մատչելիություն:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

տեղական իշխանության կողմից իրականացված գործունեության մասին բնակչությանը լրիվ տեղեկատվության մատուցում: Սա այն ուղին է, որով բնակչությունը գնահատում է կառավարության գործունեությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄ

այս կամ այն հարցի հետ կապված՝ քաղաքացիների վերաբերմունքի կամ դիրքորոշման պարզում, չնայած այս տերմինը կիրառվում է նաև ընտրողների հարցման արտահայտման համար: Լրատվամիջոցները հարցումներն օգտագործում են տարբեր հարցերի նկատմամբ հասարակության վերաբերմունքի լուսաբանման համար, իսկ կուսակցությունները՝ կուսակցական տրամադրվածությունների որոշման համար: Այսպիսով, հասարակական կարծիքի հարցումը կարող է համարվել նաև ոչ պաշտոնական հանրաքվե:

ՀԵՐԱԼԴԻԿԱ

զինանիշագիտություն, զինանշանի կազմում և պարզաբանում:

ՄԱՐԶՊԵՏ

կենտրոնական իշխանության լիազոր մունիցիպալիտետների որոշակի խմբում (օրինակ՝ պատմական Գուրիայի տարածքում՝ «Լիազոր Լանչխութիի, Օզուրգեթիի, Չոխատաուրիի մունիցիպալիտետներում»):

ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Վրաստանի Խորհրդարանի և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամների ընտրություններ՝ ըստ միամանդատ կամ բազմամանդատ ընտրատարածքների:

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ (United Nations Organization, UNO, համառոտ՝ United Nations, UN) – համընդհանուր խաղաղության ապահովման և պետությունների համագործակցության միջազգային կազմակերպություն: Ստեղծվել է 1945 թվականին: Վրաստանը ՄԱԿ-ի անդամ է դարձել 1992 թվականին, իսկ 1993 թվականին Վրաստանում բացվել է Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակ: Վրաստանում գործում է նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), որը Վրաստանին օգնում է երեխաների պաշտպանության, առողջապահության և կրթական բնագավառներում պետական սոցիալական բարեփոխումների իրականացման հարցում:

ՄԻՋԱԳԵՏՔ

տարածք Տիգրիս և Եփրատ գետերի միջև, ներկայիս Իրաքի տարածքում:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ

քաղաքի կամ գյուղի ինքնակառավարման մարմին:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

կառույց, որտեղ քաղաքացիներն ընտրում են իրենց ներկայացուցիչներին, որոնք պետք է որոշեն այսպես կոչված «խաղի կանոնները», վերահսկեն գործադիր ճյուղի կողմից վարած գործունեությունը:

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

մարդկանց խումբ, որը շահույթ է ստանում անմիջականորեն այս կամ այն գործունեության իրականացմամբ (օրինակ, կենսաթոշակային համակարգի շահառուներ են կենսաթոշակառուները, հիվանդանոցներինը՝ պացիենտները, երիտասարդական ճամբարներինը՝ երիտասարդները):

ՇՈՒՄԵՐ

հնագույն պետություն Միջագետքի տարածքում:

ՊԱՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

քաղաքացու՝ հանրային իշխանության ընտրովի պաշտոնը զբաղեցնելու համար անձամբ քվեարկելու իրավունքը:

ՊՈԼԻՍ

հունական քաղաք-պետություն:

ՊՐՈԴՅՈՒՍԵՐ

(անգլ.՝ Producer) անձ, որը հեռուստատեսության/ռադիոյի լուրերի ծառայությունում ղեկավարում է լուրերի պլանավորման և նախապատրաստման գործընթացը և պատասխանատու է լուրերի թողարկման համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատարան, որը քննարկում է օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը, օրինակ՝ եթե դուք համարում եք, որ որևէ մեկը ձեզ վնաս է պատճառել (ձեր վեճը մասնավոր անձի, որևէ կազմակերպության կամ պետական հաստատության հետ), ձեր իրավունքը պաշտպանելու համար դիմում եք սովորական դատարանի, որպեսզի այն օրենքի համաձայն որոշի, թե որ կողմն է ճիշտ:

Այն դեպքում, երբ դուք համարում եք, որ հենց օրենքն է ճնշում ձեզ (կամ օրենքը հակասում է այն իրավունքներին, որոնք Սահմանադրությամբ են երաշխավորված), դուք դիմում եք Սահմանադրական դատարան, որպեսզի նա պարզի, թե իսկապես հակասո՞ւմ է արդյոք օրենքը Սահմանադրությանը: Եթե պարզվի, որ դա այդպես է, այդ դեպքում նման օրենքը պետք է փոխվի:

ՍԵԳՐԵԳԱՑԻԱ

խտրականության ծայրահեղ ձև: Նշանակում է օրենքի կամ սովորույթների հիմքի վրա էթնիկ խմբերի առանձնացում: Որոշակի էթնիկ կամ ռասայական խմբի մեկուսացում հասարակական կյանքից, խոչընդոտող իրավական կամ փաստական սահմանափակումների սահմանում այս խմբերի, նրանց անդամների նկատմամբ, հատուկ բնակավայրերում նրանց բնակեցում, տեղաշարժման սահմանափակում, հասարակական կյանքի ամենացածր աստիճանում հարկադրաբար պահում, կրթության բնագավառում առանձնացված ուսուցման ներմուծում և այլն:

ՍՏՈՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

հիերարխիական (հիերարխիա՝ ստորակարգություն, հուն.՝ սուրբ կառավարում) կառավարման սկզբունք իշխանական կառույցներում: Ստորին իշխանական մարմինների ստորակարգության կարգ ավելի բարձր իշխանական մարմինների նկատմամբ:

ՍՈՒԲՍԻԴԻԱՐՈՒԹՅՈՒՆ

ինքնակառավարման եվրոպական խարտիայի կարևորագույն սկզբունքներից մեկը, որի համաձայն իրավունքների և պարտականությունների իրականացումը տեղի է ունենում իշխանության այն մարմնի կողմից, որն ամենից մոտ է կանգնած քաղաքացիներին:

ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

պետական գերագույն իշխանական մարմնի կողմից միջազգային պայմանագրի հաստատում, որը ստորագրված է այս պետության լիիրավ ներկայացուցչի կողմից:

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

(լատ.՝ Propaganda, տարածման ենթակա) տեղեկատվության մատուցման ձև, որը ենթադրում է ցանկացած հաղորդակցական ձևի օրինաչափ օգտագործում մարդկանց գիտակցության, հույզերի և վարքի վրա ներգործելու նպատակով:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

օրենքների հետ կապված՝ գործում է հետևյալ ստորակարգությունը՝ սահմանադրություն/սահմանադրական օրենք, սահմանադրական համաձայնագիր, միջազգային պայմանագիր և համաձայնագիր, օրգանական օրենք, «սովորական» օրենք: Ստորին մակարդակի օրենքը հակասության մեջ չպետք է լինի դրանից բարձր գտնվող օրենքների հետ: («Նորմատիվ ակտերի մասին» Վրաստանի օրենք, հոդված 7)

Օրգանական օրենքն ընդունվում է այնպիսի կարևորագույն բնագավառների կարգավորման համար, որոնք Սահմանադրությամբ առանձնահատուկ են համարված և հենց Սահմանադրության մեջ է մատնանշված նման օրենքի ընդունումը, ի տարբերություն սովորական օրենքների, Օրգանական օրենքի ինչպես ընդունելը, այնպես էլ փոփոխելը բարդացված է: Օրինակ, եթե սովորական օրենքը կարող է ընդունել հասարակ մեծամասնությունը (150 պատգամավորից քննարկմանը մասնակցում էր 100-ը, և նրանցից 60-ն աջակցեց օրենքին), Օրգանական օրենքի քննարկման գործընթացը ժամկետներով երկարաձգված է, և դրա ընդունմանը պետք է աջակցի ցուցակային կազմի կեսից ավելին (150-ից առնվազն 76 պատգամավոր):

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վրաստանի Սահմանադրություն
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
3. Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգիրք
4. Վրաստանի օրգանական օրենք՝ Տեղական ինքնակառավարման օրենսգիրք
5. Վրաստանի ընտրական օրենսգիրք
6. Վրաստանի օրենք հեռարձակողների մասին
7. Երեխաների իրավունքների կոնվենցիա
8. «Տեղական ժողովրդավարության ուղեցույց Վրաստանի համար»՝ Եվրոպայի Խորհրդի տեղեկտվական բյուրո Վրաստանում, 2004
9. Բերտրան Կլոդ-Ժան: Լրատվության էթիկան և հաշվետվողականության համակարգերը = La Deontologie des Medias, Ազատության ինստիտուտ, Թբիլիսի 2004
10. Էրոբա, Ինքնակառավարման բարեփոխումը Վրաստանի Հանրապետությունում, 1918, Հատոր 1, Թբիլիսի, 2017, https://www.scribd.com/document/355542506/
11. Լոսաբերիձե Դավիթ, Ժողովրդին մոտ, ավել եկամուտներով, ավել իրավունքներով՝ ինքնակառավարման 100 տարվա վաղեմության բարեփոխման լավագույն պատմությունը, http://droa.ge/?p=26188
12. Հեռարձակողների վարքի կանոնագիրք
13. Վրաստանի Խորհրդարանի Ազգային գրադարանի Քաղաքացիական կրթության էլեկտրոնային բառարան
14. Վրաստանի լրատվական էթիկայի խարտիա
15. Վրաստանի տեղական ժողովրդավարության զարգացման տարեկան հաշվետվություններ՝ 2005, 2006, 2007, 2008, 2009-2010, 2011-2012, 2013-2014, 2016-2017 թվականներ, «Բաց հասարակություն – Վրաստան» հիմնադրամ
16. Ճավճավաձե Իլյա, Հրապարակախոսություն, «Ազգը և պատմությունը»
17. Խմալաձե Վախտանգ, «Տեղական ինքնակառավարումը Վրաստանում. անցյալը, արդիականությունը, միտումը»՝ ՄԱԿ-ի ծրագիր, Վրաստան, Թբիլիսի, 1997